

Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից և ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

ՂՈՒՔ ՆՈՒՅՆՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ՆԵՐԴՐՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅՍՏԱՆՈՒ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԻ
ԼՈՒՍԱՊԱՏՃԵՆԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆԴԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՑ՝

www.freebooks.do.am

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:

ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:



ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru



ՌՈՒԲԵՐՏ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ԿՈՏՈՐԱԾ...

ԿՈՏՈՐԱԾ...

ԿՈՏՈՐԱԾ...



ՌՈՒԲԵՐՏ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅՈՑ

ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՉ

ԳԻՐՔԸ ՆՎԻՐՎՈՒՄ Է

ՄԵԾ ԵՂԵՌՆՈՒՄ ՉՈՂՎԱԾ

ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2005

ՀՏԴ 941.(479.25)+891.981.0
ՊՄԴ 63.3 (27)+83.37
Դ - 234

Հրատարակվել է
Երևանի Ճարտարապետության և շինարարության
պետական համալսարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Գրախոս՝ Օ. Մ. Խաչատրյան
բանասիր. գիր. թեկնածու

Խմբագիր՝ Ս. Ջ. Իսկանդարյան
բանասիր. գիր. թեկնածու, դոցենտ

Նկարիչ՝ Հ. ՄԱՄՅԱՆ

Դավթյան Ռ. Գ.

Դ - 234

Հայոց մեծ եղեռնը կայ գրականության մեջ. - Եր.: Ոսկան
Երևանցի, 2005. - 140 էջ:

Համաշխարհային հանրությունը պետական մակարդակով դատապարտում է 1915-1922թթ. Թուրքիայի կազմակերպած հայերի զանգվածային կոտորածները և հարկադրում Թուրքիային՝ ճանաչել 1915 թվականի ցեղասպանությունը: Հայ գիտնականները, գրողներն ու հրապարակախոսները գրեթե մեկ դար իրենց գիտական աշխատություններում, չափածո և արձակ ստեղծագործություններում, մամուլի էջերում դատապարտում են ցեղասպանությունը և հանդես գալիս պահանջատիրոջ իրավունքով: Գրքում տեղ են գտել և լուսաբանվում են հայ գրողների և հրապարակախոսների՝ Եղեռնին նվիրված գեղարվեստական ստեղծագործությունները:

- ԵՂԵՌՆԸ ՀԱՅ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ
- ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԱՐՁԱԿ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
- ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԻՉՆԵՐ

Դ 0503020913 2005 թ.
847(01)2005

ՊՄԴ 63.3 (27) + 83.37

ISBN 99930-0-085-X

© ՂԱՎԹՅԱՆ Ռ. Գ., 2005 թ.
© ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ, 2005 թ.

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Հայոց բազմադարյան գրականությունը լի է ազգային ողբերգության էջերով: Սակայն ամենաողբերգականը 1894-1923 թվականների պատմությանը նվիրված էջերն են, որտեղ ժողովրդի ճակատագրի յուրահատկությունը դրսևորվում է ամբողջությամբ:

Հանուր մարդկությանը հայտնի է, որ դեռևս 1894-1896 թթ. արյունարբու Արդուլ Համիդը բարբարոսաբար ոչնչացնում է երեք հարյուր հազար հայերի: Սուլթանական Թուրքիան փորձում է դատարկել Արևմտյան Հայաստանը, որպեսզի հետագայում հեշտությամբ կարողանա իրականացնել իր ոճրագործ ծրագրերը: Ջարդերը շարունակվում են 1900-1908 թթ.:

1909 թ. երիտթուրքերը Ադանայում ոչնչացնում են անպաշտպան երեսուն հազար հայերի: Հայոց եկեղեցիները դառնում են դժբախտ զոհերի գերեզմանատեղեր: Քսան հազար հայ սրախողխող է արվում քաղաքամերձ գավառներում:

Առաջին աշխարհամարտը դառնում է Թուրքիայի ծրագրերի իրականացման գագաթնակետը: 1915-1918 թթ. Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ շրջաններում բնաջնջվում է շուրջ մեկուկես միլիոն արևմտահայություն: 1922 թ. սեպտեմբերին տեղահանվում և Իզմիրի ծովախորշում ջրախեղդ է արվում կամ թրատվում չորս հարյուր հազար հայ:

Այսպիսով, մոտավոր հաշվարկներով, 1894-1922 թթ. Թուրքիան ոչնչացրել է շուրջ երկու միլիոն հայ բնակչություն: Սա է 20-րդ դարի մարդկության պատմության առաջին ամենամեծ ցեղասպանությունը:

Նպատակ չունենալով անդրադառնալ Թուրքիայի կառավարողների անմարդկային գործողությունների պատմությանն ու միջազգային ոճրագործների չարանենգ արարքների ողջ նկարագրին՝ ցանկանում ենք ներկայացնել հայոց մեծ վիշտը գրականության աչքերով,

այսինքն՝ հայ գրականության արձագանքը այդ ողբերգական իրադարձություններին և գրականության մեջ ինչպես է դրսևորվում Մեծ եղեռնի պատմությունը:

1915 թ. ապրիլի 15-ին Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթի, ռազմական գործերի նախարար Էնվերի և երիտթուրքերի կենտրոնական կոմիտեի անունից դուկտոր Նազիմի կողմից ստորագրված ու տեղերին իջեցված գաղտնի կարգադրությունը՝ հայերի բնաջնջման վերաբերյալ, ուներ հետևյալ հիմնական դրույթները.

«Աստված մի արասցե, մեր պարտությանը հաջորդող հաշտության բանակցություններում ինքնին դուրս պիտի ցցվի «Հայկական հարցը», որն արդեն կես դարից ի վեր միջազգային բնույթ է ձեռք բերել ու սպառնազին ցցվել մեր կրծքին:

...որևէ հաշտության սեղանի շուրջ, որևէ ձևով հայկական հարցի դրվելը կանխելու համար օգտվելով պատերազմի՝ մեզ բերած այս անկախությունից, որոշվում է վերջնականապես բնաջնջել այդ անհարազատ տարրը՝ քշելով նրանց դեպի Արաբիայի անապատները՝ համաձայն տրված մեր գաղտնի հրահանգի:

Այս ծրագրի գործադրման համար պատրվակ են դառնում.

ա. թշնամու բանակներում ծառայող հայ կամավորական ուժերը

բ. երկրի ներսում գոյություն ունեցող կուսակցությունները, որոնք կազմակերպված են մեր բանակին թիկունքից խփելու

գ. մայր հողի բոլոր կողմերում ձեռք բերված ու բռնված անթիվ ու անհամար զենքերն ու զինամթերքը.

...կառավարությունն ու երիտթուրքերի մեծ կոմիտեն կոչ են անում և հրամայում, որ ձեր տրամադրության տակ եղած բոլոր ուժերով աջակցեք երիտթուրքերի տեղական մարմիններին, որոնք, ապրիլի 24-ի արևածագից սկսած, գաղտնի ծրագրի համաձայն՝ գործադրության պիտի դնեն այս հրամանը:

Այն պաշտոնատար անձն ու անհատը, որ կհակառակի այս «սրբազան ու հայրենասիրական» գործին ու որևէ ձևով այս կամ այն հային կպաշտպանի կամ պահելու փորձ կանի, կդիտվի որպես հայրենիքի ու կրոնի թշնամի և ըստ այնմ էլ կպատժվի»:

Համաձայն կառավարության հրամանի՝ արտակարգ ձշտապահությամբ 1915-ի ապրիլի 24-ի արևածագին երիտթուրքերն անցնում են նախապես մշակված ծրագրի իրականացմանը: Սկսվում է հայ ժողովրդի սպանող, միջազգային մի հանցագործություն, որն իր

նպատակներով, չափերով, իրականացման միջոցներով, մեթոդներով ու ձևերով մինչ այդ անհայտ էր քաղաքակիրթ աշխարհին:

Հայ ժողովրդի թշնամին ուզում է մեզ տեսնել ընկձված, եղեռնից ու քարոհից, թալանից ու գաղթից քայքայված ու վիատված: Բայց դա միայն ցանկություն է, թշնամու ցանկություն: Հակառակ բոլոր ոճիրների, աղետների, դժբախտությունների՝ հայը ապրում է հպարտ, տոկունության ու լավատեսության ձգտումով: Հայ ժողովուրդը ապրում է՝ իր արդար դատի լուծումը տեսնելու ցանկությամբ:

1915-ի ցեղասպանությունից հետո, որին չէր դիմանա և աշխարհի քարտեզից կջնջվեր, կանհետանար ցանկացած փոքրաթիվ ժողովուրդ, հայը թրծվում է և դառնում պողպատի նման անկոտրուն: Մեր ժողովրդի առասպելական տոկունության բազմաթիվ ապացույցներից մեկը անգլիացի պատմաբան ու լրագրող Էմիլ Դիլոնի խոսքերն են. «Հայերը լավատես են այնպիսի իրադրություններում, որոնք հուսահատության կմատնեն ում ասես... Հայ ժողովրդի զավակներն այն նյութն են, որից պատմությունը կերտում է իր նահատակներին ու հերոսներին...»: Եվ այդպիսի տրամադրությամբ հայ բանաստեղծներն իրենց հոգու ազգային դրաման ներկայացրին ցնցող պատկերներով: Նրանք իրենց ստեղծագործություններում հավերժացրին զոհերի հիշատակը՝ վառ պահելով գալիք սերունդների հիշողության մեջ: Ի հաստատումն այն բանի, որ մեծ իրադարձությունների ժամանակ հարստանում է ազգային գրականությունը, ճիշտ և ճիշտ համընկնում է մեր ժողովրդի դարասկզբի պատմությանը: Հայ կյանքի երկու հատվածներում էլ հատկապես հարստանում է պոեզիան, որը և հասնում է աննախընթաց բարձրության: Իրենց հոգացավ պոեզիայով անմահ են Թումանյանն ու Սիամանթոն, Իսահակյանն ու Վարուժանը, Տերյանն ու Մեծարենցը, Զարենցը, Սևակը, Ծիրազը, Կապուտիկյանը և ուրիշները: Ստեղծվում է ազգային պոեզիա՝ տոգորված անձնական վշտով, հայրենի պատմության, հայ ժողովրդի պատմական ճակատագրի, ազգային նկարագրի դրոշմը վրան: Թումանյանի խոսքը, թե «Ես առաջ եմ գալի... մի արյունոտ հողից, մի անօրինակ զարհուրելի պատմությունից, մի հոշոտված ժողովրդից», ճշմարիտ է շատերի համար:

1870-ական թվականներին հայկական հարցը միջազգային դիվանագիտական շրջապտույտի մեջ է մտնում և հայ ժողովրդի մեջ արթնացնում ազատագրական պայքարի գաղափարը:

Մարդկության դարավոր պատմության մեջ ոչ մի ազգ չի ենթարկվել այսօրինակ բարբարոսության, որքան հայ ժողովուրդը 1894-ից մինչև 1923 թվականները: Երեսուն տարիների ընթացքում ոճրամոլ թուրքերը բորենիների մոլեգնությամբ ու դաժանությամբ հարձակվում ու կոտորում են անգն ու անպաշտպան հայ բնակչությանը: Թուրք ջարդարարներն արևմտահայ ժողովրդի կոտորածը կազմակերպում են այն ժամանակ, երբ հայ երիտասարդությունը կանչված էր թուրքական բանակ և դիմադրություն կազմակերպելու հնարավորությունը բացառվում էր: Չնայած այդ ամենին՝ հայ հերոսական ժողովուրդը Մուսա լեռան շրջանում, Տարոնում, Եղեսիայում, Վասպուրականում կազմակերպում է հերոսական դիմադրություն:

Այսօր դժվար է մարդկային լեզվով ներկայացնել կամ պատմել երիտթուրքերի սադիստական դաժանությունը...

Սուլթանական Թուրքիան ո՛ւմ էր կոտորում՝ մի ժողովրդի, որը մեծապես նպաստել է Թուրքիայի արդյուրաբերության, ծարտարապետության, թատրոնի, տպագրական գործի, արհեստների զարգացմանը:

Թուրքական արնածոր յաթաղանը հայկական հարցից ազատվելու ծրագիրը ժառանգել է սուլթան Համիդից: Հայ ժողովրդի հետ սրախողխող է արվում արևմտահայ գրականության ու արվեստի ծաղիկը: Ընդհանուր առմամբ, Մեծ եղեռնին զոհ են դառնում շուրջ 600 մտավորական (գրողներ, բժիշկներ, նկարիչներ, ծարտարապետներ, կոմպոզիտորներ, երաժիշտներ):

Կոտորածից պատահաբար փրկվում է հանճարեղ երգիծաբան և վիպասան Երվանդ Օտյանը, որը հետագայում այդ թեմայով ստեղծում է մի շարք գործեր:

Արևելահայ և արևմտահայ բոլոր գրողներն էլ անդրադարձել են Եղեռնի թեմային: Նույնիսկ դժվար է գտնել մի գրողի, հրապարակախոսի, հասարակական ու քաղաքական գործչի, որը ինչ-որ չափով իր ստեղծագործություններում շոշափած չլինի Եղեռնի հարցը:

1915-ի ապրիլի 25-ի առավոտը սուգ էր իջել հայ մշակույթի խոշորագույն կենտրոնի, ամենահայաշատ քաղաքի՝ Պոլսի վրա: Ձերբակալել էին մի քանի հարյուր հայ մտավորականների... Կոմիտաս, Սիամանթո, Վարուժան...

Վտանգի տակ էր արդարության համար մարտնչած մեծ իրավաբան Չոհրապի կյանքը: Իր ազգային պարտականություններին

նվիրված զգայուն հայրենասեր քաղաքացին տարիներով կուտակված վշտի ու զայրույթի պոռթկումով բողոքում է հայ սպանող նախաձեռնողների՝ Թալեաթի ու երիտթուրքերի դեմ: Նա հաշիվ է պահանջում նրանց անվերջանալի ոճրագործությունների համար: Թալեաթի կարգադրությամբ ձերբակալվում է նաև Չոհրապը: Ազգային մեծ վշտով ապրող քաղաքագետը, հավատարիմ իր ժողովրդին, չի հեռանում երկրից, թեև այնտեղ նրան մահ էր սպասվում. «Որով՞ թողում սա անտեր ու անգլուխ ժողովուրդը: Չէ՛, փախչիլ չեմ կրնար, պետք է, պարտքս է մինչև վերջը պատնեշի վրա կենալ»:

Չոհրապի կյանքը մաքառումների հոյակապ պատմություն է: Նա մարտնչում է համիդյան ոճրապարտ բռնակալության, իրավազրկության և կամայականության դեմ: Եվ այդ է պատճառը, որ թուրքերը սադիստական մոլուցքով, բորենու կատաղությամբ քարով ջախջախում են Չոհրապի գլուխը:

Այդ նախձիրի զոհ են դառնում գիտնականներ, հրապարակախոսներ, գրողներ Երուխանը, Թլկատինցին, Սիամանթոն, Ռուբեն Չարդարյանը, Վարուժանը, Ռուբեն Սևակը, խելագարվում է հանձարեղ Կոմիտասը:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Օսմանյան կայսրության մեջ հայերի ցեղասպանության վերաբերյալ գոյություն ունի հարուստ գրականություն՝ գիտական աշխատություններ, հուշեր, հողվածներ, գեղարվեստական բազմաթիվ ստեղծագործություններ, որոնց անդրադառնալը մեր խնդրից դուրս է: Մեր նպատակն է ներկայացնել գեղարվեստական արժեքավոր այն ստեղծագործությունները, որոնք վերաբերում են Հայոց Մեծ եղեռնին:

Այս տարի հայ ժողովուրդը, աշխարհի գրեթե բոլոր երկրներում ապաստանած իր բեկորների հետ, սրտի անասելի կսկիծով նշում է ազգային մեծագույն ողբերգության, ամենաահավոր ոճրագործության՝ Մեծ եղեռնի 90-ամյա տարելիցը:

Ե Ղ Ե Ռ Ն Ը

Հ Ա Յ

Պ Ո Ե Ձ Ի Ա Յ Ո Ի Մ

Եղեռնի գոհ են դառնում Պոլսում ապրող հայ գրողներից 196-ը: Չոհված գրողների մեծ մասը երիտասարդ էին և գտնվում էին ստեղծագործական ուժերի ծաղկման ու հասունացման շրջանում:

Օսմանյան Թուրքիայի կոտորածների երկու ողբերգական թվականների միջև ծնվում, գործում և գոհ է դառնում **Սիամանթոն՝ Ատոմ Յարճանյանը**: Նա այդ ժամանակաշրջանի խոշորագույն ներկայացուցիչներից է, որն իր ձայնն է բարձրացնում արդարության համար մղվող պայքարում: Այդ աղետալի երևույթը ըմբոստացրեց հայ ժողովրդին: Համիդյան քաղաքական ռեակցիան համաճարակի է ենթարկում գրողներին և ընթերցողներին: Թուրքերի կողմից կատարված ժողովրդասպանության ոճիրն ամենաողբերգականն է հայ ժողովրդի պատմության մեջ:

Ժողովրդի համազգային ողբերգությունը՝ 30-ամյա եղեռնը, Սիամանթոն ընկալում է որպես հայ բանաստեղծների անձնական եղերերգություն:

1894-1895 թթ. Թուրքիայի նահանգներում ու քաղաքներում ուժեղանում է հայահալած քաղաքականությունը: Սիամանթոն կանգնում է արյան ու դիակների առջև:

Ահավասիկ հոգիիս ջահերը, որ վայրկյան առ վայրկյան,
Ստածունս կարեգակեն՝ զանիկա խավարին մեջ սուզելե հետո...
Հոգիս ան է, որ բյուրավոր անգամ ձեր ամենուն ցավն ապրեցավ,
Ան է, որ անդունդի մը մեջ՝ իր մոխրին վրա ծնրադիր՝
Հարագատ ու շղթայակապ քույրերու աքսորը կուլա...
Հոգիս այն վայրն է, ուրկե արյունուշտ լուսին մը բարձրացավ
Անմեղներու կոտորածեն ծովացյալ դաշտի մը վրա...
Ու այն հողմակոծ անտառն է, որուն ավազներուն շուրջ՝
Օ՛, եղբայրական արյունի հեղեղներ կհոսին...
Հոգիս այն երկիրն է, ուր որբ և սևահեր տղաներու բազմություններ,
Անարդար սուրերու շոյուններեն հալածական,
Աղեխարշ ճիչերով փլատակներու մեջեն կփախչին...

1904-ին Փարիզում գրված «Հոգիս» բանաստեղծությունը կարծես անբաժանելի մասն է կազմում «Մահերգ», «Որբերը», «Քնարիս լարերը դեռ թաց են» բանաստեղծությունների: Նրանցում հեղինակն արտահայտում է ժողովրդի անլուր տառապանքների մորմոքն ու մրմուռը:

Հայ ժողովրդի նկատմամբ անպատիժ ոճիրը Սիամանթոյի գրչից պուկում է տանջագին ճիչեր, ցասման շանթեր և հատուցման կոչեր.

Տարիներով և խավարներով ձեր մահացու ցավն իմ կարմիր ցավս եղավ,
Ու տառապանքիս տիեզերքին մեջ՝ ձեր արցունքն իբր անծու,
հոգիս վրա կտեղար:
Ձեր հեծեծանքներն մահվան հովերուն պես մենավորի
լուսամուտիս փեղկերը կոտրտելու եկան...
Եվ անհնարին սոսկումներ ապրեցա ան անտառին մեջ որ ձեր
հայրերուն ոսկորներեն էր կազմված...
Բարբարոսներեն թափված արյունը, կյանքիս առջև,
այն կմախքատեսիլ ավազանն էր,
Որուն խորերը, ես քանի՜ անգամ մաքառումի և ուխտի արդար
ընկերներուս հետ,
Իմ նորավարժ քնարս, գրիչս, սուգերու սրինգս և անբիժ սուրս արծաթյա:
Եկա, եղերականորեն ահավոր մկրտության մը համար,
անոր մեջը թաթխելու...

Բանաստեղծի ճշմարտասեր հոգին ճշմարիտ ցավի համար դառնանում է, արդարության առավոտը դաժանորեն հեռու էր: Մարդկային բանականությունից և երևակայությունից դուրս մարդակերության ժամանակները հիշեցնող ոճիրը պատկերելու համար բանաստեղծը սակավ է դիմում կոնկրետ սյուժեների: Կիլիկիայի ջարդերին նվիրված «Կարմիր լուրեր բարեկամես» շարքի «Պարը», «Լոգանքը», «Դաշույնը», «Խաչը», «Կույրը», «Թթենին», «Խեղդամահ» բանաստեղծությունները հայկական ողբերգության ցնցող, սրտակեղեք պատկերներ ներկայացնող գործեր են, դրանցում պատկերված են հրեշավոր ոճիրների նկարագրություններ: Անշուշտ, ավելի ծանր է եղել այդ դրվագները պատկերող բանաստեղծի հոգեվիճակը:

Թուրքիան, սկսած Արդու Համիդից մինչև բոլոր արյունակից հաջորդները, հայ ժողովրդի նկատմամբ վարում էր բնաջնջման քաղաքականություն:

Ոճրագործների «ժողովրդավարության» իրականացման փուլերը սկսվում են 1890-ական թվականներից: Իսկ 1909-ին Ադանայի ջարդը

Միամանթոն եղերերգում է իր սրտամորմոք բանաստեղծություններում:

Միանգամայն տեղին է Չապել Եսայանի այն վկայությունը, որ կոտորածների մղձավանջն իր ճնշող ներգործությունն է թողել ժամանակի գրական սերնդի հոգեվիճակի և գրականության վրա: Պետք է ավելացնել Գրիգոր Չոհրապի հայտնի ասույթը նույն ժամանակաշրջանի գրականության մասին. «Մահահոտ և արյունաներկ» գրականություն՝ հայկական ճակատագրի պես:

Միամանթոյի երևակայությունը շիկանում է հայոց ցնցող ողբերգության մղձավանջային պատկերներով: Հայկական աղետի դժոխային սարսափները դառնում են Միամանթոյի տառապող սրտի սզավոր և ազատագրական պայքարի մարտահրավեր շեփորը.

Օ՛ չի սուկաք, երբ անպատմելի պատմություննս ձեզի պատմեմ...

Թող մարդերը հասկնան մարդուն ոճիրը մարդուն դեմ,

Երկու օրվան արևին տակ, գերեզմանին ճամփուն վրա

Մարդուն չարիքը մարդուն դեմ,

Թող աշխարհիս բոլոր սրտերն իմանան...:

Այդ մահաշուք առավոտը կիրակի էր,

Դիակներուն վրա ծագող առաջին և անօգուտ կիրակին,

Երբ սենյակիս մեջը, իրիկունեն մինչև արշալույս,

Դաշունահար աղջկան մը հոգեվարքին վրա ծռած՝

Արցունքներովս անոր մահը կթրջեի...

Հանկարծ հեռուեն սև խուժան մը անասնական

Քսան հարսներ իրենց հետ՝ մուլեզնորեն մտրակելով,

Շվայտության երգերով, այգիի մը մեջ կանգնեցան:

.....
Վայրենի մը՝ հարսներուն – Պետք է պարե՛ք, որոտաց,
Պետք է պարե՛ք, երբ մեր թմբուկը հնչե:

Եվ մտրակներն սկսան մահակարոտ հայ կիներուն
Մարմիններուն վրա կատաղությամբ մը շառաչել...

Քսան հարսներն ձեռք ձեռքի, իրենց շուրջպարն սկսան...

Աչվրներեն իրենց արցունքը վերքերու պես կհոսեր,

Ա՛հ, ես ո՛րչափ նախանձեցա իմ դրացի վիրավորիս,

Որովհետև լսեցի, որ հռնոյունով մը հանդարտ,

Տիեզերքն անիծելեն, խեղճ հայուհին գեղադեմ,

Իր տատրակի շուշան հոգուն դեպի աստղերը թև տվավ...

Ունայնորեն կռուփներս ամբոխին դեմ շարժեցի:

«Պե՛տք է պարեք, կոռնար խուժանը մոլեգին,
Մինչև ձեր մահը պե՛տք է պարեք, դուք անհավատ գեղեցիկներ,
Կուրծքերիդ բաց՝ պե՛տք է պարեք, մեզ ժպտելով և անտրտունը...
Հոգնությունը ձեզ համար չէ, ոչ ալ ամոթը ձեզ համար,
Ստրուկներ եք, պե՛տք է պարեք, և մերկանդամ և հոլանի,
Մինչև ձեր մահը պե՛տք է պարեք պագշոտորեն և ցոփությամբ,
Մեր աչքերը ծարավի են ձեր ձևերուն և ձեր մահվան...»:

Քսան հասներն գեղադեմ, գետին ինկան պարտասած...
«Ուտքի՛ ելեք», գոռացին, մերկ սուրերնին օծերու պես շարժելով...
Հետո մեկը սափորով մը քարյուղ բերավ խուժանին...
Ո՛վ մարդկային արդարություն, թո՛ղ ես թքեմ քու ճակատիդ...
Քսան հարսներն շտապով այդ հեղուկովն օծեցին...:

«Պե՛տք է պարեք, որոտաց, ահավասի՛կ ձեզի բուրմունք մը, որ
Արաբիան իսկ չունի...»,
Հետո ջահով մը բռնկցուցին մերկ մարմինները հարսներուն:
Եվ ածխացած դիակները պարին մեջեն դեպի մահը գլորեցան...:

Ջարհուրանքես՝ պատուհանիս փեղկերը՝ փոթորիկի մը պես փակելով՝
Իմ մենավոր մեռյալիս մոտենալով հարցուցի.
Ինչպե՛ս փորել այս աչքերս, ինչպե՛ս փորել, ըսե՛ ինձ...:

Այսպիսի մահասարսուտ տեսարան, եղերական պատմություն, մեռնող հոգիների անպատկերելի սարսավիղ, անմեղ հոգիների մահապարն ու մահը, մոխիր դարձած կույսերի ու հարսների ցասման տարերքը սովորական մարդու աչքի համար անդիմակայելի են: Կույսի գանգով արյուն խմել, հայ կյանքն արմատից կտրել, ստիպել մորը իր ձեռքով սպանել իր զավակին. «Ինչպես որ զայն ծնար, պեսք է այնպես մահացնես», սաղիզմին բնորոշ արարքները հնարավոր չէ բացատրել բանաստեղծական մտքի ու ժողովրդի սրտից դուրս պոռթկացող ցասման ու տարերքի արտահայտությամբ: Թուրքի մոլեռանդ, անհագուրդ ծարավը մարդկության գարիտրանքների մշտատև պատմություն է:

«Կարմիր լուրեր» շարքում հեղինակը պատկերում է ոչ միայն ֆիզիկական, այլև հոգեկան ջարդի ողբերգությունը: Նկուղում պատասպարված փախստականները խեղդում են մի երեխա, որպեսզի նրա ձայնը չմատնի իրենց:

Լռությունն այս անգամ նկուղին մեջ մրրիկ մ'էր:

Սիամանթոն սրում է հայ ժողովրդի գոյատևման խնդիրը: Չնայած ան-
ծայրածիր մահերին՝ բանաստեղծը հնչեցնում է մաքառման ու հաղթանա-
կի նվազներ: Արտացոլվում են ինքնապաշտպանության դրվագներ: Սիա-
մանթոն, մերկացնելով Թուրքիայի ու եվրոպական մեծ տերությունների քա-
ղաքականությունը, անարգանքի սյունին է գամում ջարդարարներին:

Կրակեցեք, որ խեղճ խուժանը նահանջե, կրակեցեք մինչև որ՝
Ծովուն վրա քնացող ռազմանավերն օտար,
Արդարության անդնդախոր իրենց քունեն թերևս բուպե մը արթննան...

Հումանիստ բանաստեղծը հայկական ողբերգության մեջ տեսնում է
մարդկության ողբերգությունը, նրա համար ազգային վիշտը դառնում է հա-
մամարդկային: Հայկական կոտորածները Սիամանթոն ընկալում է որպես
բնության դեմ գործած մեծագույն ոճիր: Բանաստեղծն իր ժողովրդի բար-
կությունն ու ցասումը ուղղում է մարդկությանը:

Քե՛զ, չարագոր օրենքներու և անչափելի անարդարության
այսօրվան մարդկություն,
Եվ քե՛զ, մարդկություն, որ եղբայրության ապառնիին տիրացող
ոսկեղեն հսկան պիտի ըլլաս,
Ձեր երկուքին համար, ես՝ արևելքներու և արևներու
իդեապաշտ և ըմբոստ քնարավորս՝
Ցավակոծ ցեղիս բարկության բոցը և իր ավերված աշխատանքին
մրրկե բողբջը պիտի բերեմ...

Հայ ժողովրդի մղձավանջային իրավիճակն ամբողջությամբ ցնցում է
Ման Հովհաննես Թումանյանի մեծ սիրտը: Հայ ազգային բանաստեղծը
տազնապում է: Ավերվում են հայրենի գյուղերն ու քաղաքները, կործանվում
է մեր հինավուրց ժողովուրդը: Սկսվում են ջարդերն ու տեղահանություննե-
րը, գաղթը: Հայ ժողովրդի համար փակվում են մարդկային երջանկության
ու երազի բոլոր դռները: Դաժանություններն ու դառնություններն ալեկոծում
են բանաստեղծին: 1902-ին նա գրում է «Հայոց վիշտը», «Մեր ուխտը» բա-
նաստեղծությունները:

Հայոց վիշտը անհուն մի ծով,
Խավար մի ծով ահագին,

Էն սև ծովում տառապելով,
Լող է տալիս իմ հոգին:

Մերթ զայրացկոտ ծառս է լինում
Մինչև երկինք կապուտակ,
Ու մերթ հոգնած սուզվում. իջնում
Դեպի խորքերն անհատակ:

Ոչ հատակն է գտնում անվերջ
Ու ոչ հասնում երկնքին...
Հայոց վշտի մեծ ծովի մեջ
Տառապում է իմ հոգին:

* * *

Մենք ուխտ ունենք՝ միշտ դեպի լույս,
Ու զընում ենք մեր ճամփով,
Մըրրիկներով պատած անհույս,
Սև խավարով, մութ ամպով:
Մենք անցել ենք արյան ծովեր,
Սուր ենք տեսել ու կրակ,
Մեր ճակատը դեմ ենք արել
Մըրրիկներին հակառակ:
Ու թեպետև պատառ-պատառ
Մեր դըրոշը սրբազան,
Ու մենք չունենք տեղ ու դադար -
Երկրից երկիր ցիրուցան:
Բայց զընում ենք մենք անվեհեր
Չարկերի տակ չար բախտի,
Մեր աչքերը միշտ դեպի վեր՝
Դեպի լույսը մեր ուխտի:

1914-ին Թումանյանը գրում է «Վերջին տագնապը» բանաստեղծությունը՝ հույս ունենալով, որ արևմտահայության վերջին տագնապն է լինելու, գալու է փրկության օրը.

Վեր է կացել հին վիշապը նոր թափով,
Վեր է կացել վերջին մոլի տագնապով,
Արյունոռուշտ, ոճիրներով ահավոր
Մահ է շընչում լեռներն ի վեր ալևոր:

Ու նրա դեմ ելած անգուսպ, անսահման,
Հորձանք տալով ամեն կողմից՝ հայության
Հին-հին հույսերն ու հուզմունքը դարավոր
Ծառս է լինում լեռներն ի վեր ալևոր:

Ծառս են լինում քաջ խմբերով անձնվեր,
Ծառս են լինում տանջվողներով կիսամեռ,
Ծառս են լինում անընկճելի ու արի
Մինչև ճերմակ գլուխները լեռների:

Ու լեռները պառավ մոր պես վերստին
Արնոտում են գլուխները իրենց հին,
Միշտ խորհելով ամպերի տակ սևակնած,
Որ հենց իրենց հառաչանքն են կուտակած...

Մեծ եղեռն. Ժողովուրդը ընկնում է ավելի զարհուրելի վիճակի մեջ:
Թուրք բարբարոսների չլաված գազանությունները ընդգրկում են ողջ Հայոց
աշխարհը: Արյունոտ նախճիրը սահման չուներ: Ծնվում են մոր ատելությ-
յուններ ու դառնություններ, ծնվում է բանաստեղծի գորովանքը դեպի մար-
դը, դեպի զոհերն ու նահատակները.

Ու իջավ նորից էնտեղ հանգչելու-
հոր արարչական հանգիստն անխռով,
էնտեղ հանգչելու, էնտեղ շնչելու
էն մեծ խոհերով, էն անվերջ սիրով...

Թումանյանի «Բարձրից» և «Հոգեհանգիստ» բանաստեղծությունները
պատկերում են հայ ժողովրդի մահաշունչ օրերի տխուր վիճակը: Բանաս-
տեղծն իր «վերջին հանգիստն» է կարդում ազգի անբախտ զոհերին: Բա-
նաստեղծությունը ողբերգական հույզերի պատկերավորման հզոր խոհ է.

Ու վեր կացա ես, որ մեր հայրենի օրենքով հին՝
Վերջին հանգիստը կարդամ իմ ազգի անբախտ զոհերին,
Որ շեն ու քաղաք, որ սար ու հովիտ, ծովից մինչև ծով
Մարած են, մեռած, փըռված ու ցըրված հազար հազարով...
Ու կրակ առա հայոց հրդեհի կարմիր բոցերից,
էն խաղաղ ու պաղ երկնքի ծոցում վառեցի նորից

Մասիսն ու Արան, Սիփանն ու Սըրմանց, Նճրուք Թանդուրեք,
 Հայոց աշխարհի մեծ կերոնները վառեցի մեկ-մեկ,
 Սուրբ Արագածի կանթեղն էլ, ինչպես հեռավոր արև,
 Անհաս, աննըվազ, միշտ վառ ու պայծառ, իմ գլխի վերև...
 Կանգնեցի խոժոռ, մենակ ու հաստատ, Մասիսի նման,
 Կանչեցի թըշվառ են հոգիներին՝ ցըրված հավիտյան
 Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Ծովն հայոց,
 Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ:
 - Հանգե՛ք, իմ որբե՛ր... իզու՛ր են հուզմունք, իզու՛ր և անշահ...
 Մարդակեր գազան մարդը՝ դեռ երկար տալես կը մնա...

Երբ խորանում ես այս բանաստեղծության մեջ, զգում ես, որ նրանում
 ամբողջ ուժով բարախում է հայրենասերի մեծ սիրտը, որտեղ ողբերգա-
 կանն այնքան ուժգնորեն է համակում ընթերցողին, որ չի կարող չառաջաց-
 նել վայրագ ցեղասպանների դեմ վրեժխնդրության և պայքարի զգացում-
 ներ: Իսկ եթե մոռանանք, ապա՝

Թող չտեսնենք մենք հավիտյան ոչ խնդություն և ոչ երգ...

1916-ին գրած «Դժոխքի հանդեպ», «Գերության մեջ», «Հողմերի առջև
 ցրված, հալածված» բանաստեղծությունները ոչ միայն Թումանյանի, այլև
 ամբողջ հայ գրականության հայրենասիրական պոեզիայի զագաթներից
 են, աղետալի տարիների հոյակերտ գործեր.

- Հո՛ւշ, հասավ օրը՝ վերջի՛ն, ահավո՛ր.
 Սըրով ու հըրով բացվում են էսօր
 Հայոց դժոխքի դռներն ամրափակ,
 Սարսափի պիտի աշխարհքը համակ...
 Եվ մարդն ամաչի գիլից ու շանից,
 Որ մարդն է ծնվել՝ մարդու նըմանից:
 Ո՛ւհ, ինչքա՛ն մութն է, գարշահոտ ու պաղ..
 Ինչքան ոսկորնե՛ր, կմախքնե՛ր անթաղ...
 էլ ի՞նչ կա հեռվում... հեռվի խավարում...
 Ո՞վ է իմանում... ո՞ւմ աչքն է գորում...
 Մեջտեղը մենակ, ժեռոտ բարձունքին,
 Հողմերի առջև կանգնած է մի կին. -
 Որդու արյունը իր ձեռքն են տըվել.
 - Խըմիր սուլթանի կենացը դու էլ...
 Եվ նա, որ մարդ էր ու մայր էր երեկ,

Այժըն, էն ժայռին կանգնած կիսամերկ,
Անուժ ու ապուշ խելագար է մի,
Բաժակը ծեռքին, որ պիտի խըմի...
Կանգնած է մենակ, և լոկ մոլեգին
Հողմերն են ոռնում ու նրանք չորս դին...
Բայց՝ հո՛ւշ, լռությո՛ւն... մըթին, ահավոր
Երկինք են նայում կըմախքները չոր,
Ու իրենց կարկամ շըրթունքները բաց
Խոսք են ասելու աշխարքի դիմաց,
Խո՛սք, որ չի լսված դեռևս լուսնի տակ...
Սարսափի պիտի աշխարի բովանդակ...
Եվ մարդն ամաչի գիլից ու շանից,
Որ մարդ է ծընվել՝ մարդու նմանից...

Անչափ դժվար է ամբողջությամբ ընդգրկել Եղեռնի նահատակ բանաստեղծներին և Եղեռնի մասին նրանց գրչից ծնված պոեզիայի հարյուրավոր ցնցող նմուշները, որոնք դարձել են սրբացած պատմություն: Եվ մանավանդ, որ եղեռնը յուրաքանչյուր գրողի ու բանաստեղծի ստեղծագործության մեջ է՝ ականատեսի աչքերով և չի կրկնվում, այլ ստանում է ուրույն բնույթ ու երանգ:

Ռուբեն Սևակը, ինչպես և նրա ժամանակակից արևմտահայ բանաստեղծները չէին կարող անտարբեր լինել հարազատ ժողովրդի ճակատագրի հանդեպ, որն ավելի ծանր ու չարագուշակ բնույթ էր ստանում սուլթանական Թուրքիայի արյունոտ մագիլներում:

1909 թ. Ադանայի հայկական կոտորածները վկայում են «երիտասարդ թուրքերի» նոր քաղաքականությունը՝ ավելի դաժան, անողորմ ու նենգ ձևերով:

Շվեյցարիայում սովորող երիտասարդ բանաստեղծն անմիջապես արձագանքում է այդ իրադարձություններին: «Ազդակում» տպագրում են «Ուսանողի նամակները» և բանաստեղծությունների մի ամբողջ շարք: Բանաստեղծն արտահայտում է Հայաստանից հեռու գտնվող հայրենակիցների տագնապն ու տառապանքը վայրագ կոտորածների վերաբերյալ: Նագործուն հայրենասիրության կոչ է անում. «Սև օրեր կապրենք, նորեն սարսափի օրեր: Հեռագիրներն ամեն ժամ նոր գույժ մը կը բերեն: Ջարդ, ու եթե ջարդ չէ, հրդեհ, ու եթե հրդեհ չէ, սով ու ինչ որ ամենեն սարսափելին է, համաճարակ: Լրագիրներն ամեն օր սուգի նոր գին մը կավելացնեն»:

Այս դաժան իրողությունը անհանգստացնում է Ռուբեն Սևակին, և նա գրում է իր հայրենասիրական լավագույն բանաստեղծությունները: «Հայաստան» բանաստեղծության մեջ նա խոսում է դարիբի, սովի ու ջարդի մասին.

Ո՞վ կուլա այսպես խշտյակիս շենքին.

- Քո՛ւյր, դարիբն է, բա՛ց...

Կմա՞խք մը կ'անցնի դուրսեն լալագին.

- Սո՛վն է, դուռըդ բա՛ց...

Տապա՞րն է ջախջախ դռանըս կուրծքին.

- Ջա՛րդն է, դուռըդ բա՛ց...

Աղանայի կոտորածների տպավորության տակ Ռուբեն Սևակը գրում է «Ով իմ հայրենիքս», «Ջանգակներ, զանգակներ...», «Կիլիկյան երգեր...», «Ինչպես երբեմն» բանաստեղծությունները, որոնցում ներկայացնում է հայերի ողբերգական կացության ցնցող տեսարաններ.

Ով դո՛ւն, ո՛վ դժբախտ երկիր հայրենի,

Որ արյունի տա՛ք շամանդադի մեջ,

Ջոհ գազաններու խաղին վայրենի,

Ու համայնասպա՛ռ բոցերու անշեջ,

Կը մըխասս, դժբախտ երկիր հայրենի...

Բանաստեղծը պատկերում է ամենուրեք յաթաղանից փախչող մարդկանց ճիչեր, բոբիկ երեխաների ու դողդոջ ծերունիների վայուններ, անվերջ դիակներ...

Յո՛ւ, մե՛նք ենք, մե՛ղք ենք, եղբայրնե՛ր, քույրե՛ր...

Մենք ենք, լափլիզված բոցորե անշեջ...

Մերկ սուսերներով հալածված կույրեր...

Մենք ենք, կը վազենք մութին, մահվան մեջ,

Յո՛ւ, մե՛նք ենք, մե՛րկ ենք, եղբայրնե՛ր, քույրե՛ր...

Օրեցօր ահագնացող հայերի կոտորածների ու նախճիրների լուրերը բանաստեղծի հոգում առաջացնում են դժոխային պատկերներ, նրան համակում ողբերգական տրամադրությամբ: Նա մերթ ճիչեր է արձակում, մերթ

մարտական վրեժի ձայներ հնչեցնում: Այդ տրամադրությունները երևում են հատկապես «Ահազանգերը» բանաստեղծության մեջ.

Արյունի գծե՛ր, պատկերնե՛ր, հուշեր...
Նորեն այս գիշեր, – տանջանքի գիշեր, –
Հիվանդ հոգիիս պատերուն մեջեն
Ղողանջի խավար երգեր կը հնչեն,
...Ղողանջը...Ողբի, աղեխարշ լալու,
ճիչի, անեծքի՝ - վայրագ ալելու-
Ու հառաչներու մեջեն խելահեղ
Սարսափի անհո՛ւն ղողանջն է ահեղ:
...Կարմիր կտեսնեն աչքերս նորեն...
Վերջին հառաչներ կուրծքերու խորեն,
Մեռե՛լ, հոգեվա՛րք, կույտ-կույտ, քով-քովի
Կռկռացող սև խումբեր ագռավի...:

Ադանայի աղետն իր դրսևորումը գտավ նաև «Կիլիկյան երգերի» շարքում: «Վերջին օրոր» բանաստեղծության մեջ մեռնող մայրը իր օրորոցային խոսքն է ասում մանկանը.

Արյան - հեղեղ հորդեց այս սուրբ ձորերե,
Բայց չի փախիս, փարե՛ երկրիդ, զայն սիրե՛
Հողիդ վրա գերի մ'ըլլար, այլ տիրե՛...
Օրո՛ր ըսեմ՝ քնանաս:

Ահա կիյնամ... Հայաստան մա՛յր քեզի.
Կտակ կուտամ այս կտորած սուրն երկսայրի՝
Ու հայրիկիդ դեռ տաք արյունը կայրի...
Օրո՛ր ըսեմ՝ քնանաս:

Ոճրագործ թուրքերի կազմակերպած համազգային ցեղասպանությունը ընդգրկում է հայ մտավորականությանը: Սուլթանական կործանիչ ուժի դեմ ծառայած՝ արևմտահայ պոեզիայում իր հրաշագործությունն է բերում **Դանիել Վարուժանը**:

1905-1915 թթ. ընկած ժամանակաշրջանում «Սարսուռներից» մինչև «Ցեղին սիրտը», «Հեթանոս երգերից» մինչև «Հացին երգը» ժողովածուներում նա ստեղծեց ժողովրդի տառապանքի, մահվան, ազատության ու մա-

քառման գործեր: «Յեղիմ սիրտը» եղեռնի և ազգային-ազատագրական մաքառումների արձագանքն է: Ահա այդ շարքի առաջին «Չոն» բանաստեղծությունը, որի եղեգնափողից ողբ է ելնում.

Եղեգնյա գրչով երգեցի փառքեր.
- Քեզի ընծա՛, *իմ հայրենիք* -
Սոսյաց անտառեն էի զայն կտրեր...
- Քեզի ընծա՛, *հին հայրենիք* -
Եղեգնյա գրչով երգեցի քուրմեր.
Ընդ եղեգան փող լույս ելաներ:

Եղեգնյա գրչով երգեցի կարոտ.
- Քեզի ընծա՛, *հայ պանդուխտներ* -
Ան տարաշխարհիկ բույսի մ'եր ծղոտ...
- Քեզի ընծա՛, *հեզ պանդուխտներ* -
Եղեգնյա գրչով գրեցի հարսեր:
Ընդ եղեգան փող ողբ ելաներ:

Եղեգնյա գրչով երգեցի արյուն.
- Չեզի ընծա՛, *սուրի զոհեր* -
Ան ծլած էր մոխրի մեջ իբրև կնյուն...
- Չեզի ընծա՛, *կրակի զոհեր* -
Եղեգնյա գրչով երգեցի վերքեր.
Ընդ եղեգան փող սիրտս ելաներ:

Եղեգնյա գրչով ողբ տունս երգեցի.
- Քեզի ընծա՛, *հայր ալեհեր* -
Ցամքած աղբյուրեն մեր զայն հոտեցի...
- Քեզի ընծա՛, *մայր կարևեր* -
Եղեգնյա գրչով օջախս երգեցի.
Ընդ եղեգան փող ծովս ելաներ:

Ու պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր երգեցի.
- Չեզի ընծա՛, *հայ մարտիկներ* -
Գրիչս եղավ անթրոց սրտերու հնոցի...
- Չեզի ընծա՛, *քաջ մարտիկներ* -
Եղեգնյա գրչով վրեժ երգեցի,
Ընդ եղեգան փող բո՛ց ելաներ:

Վարուժանի ըմբոստ, մրրկաշունչ ոգին երևում է «Կիլիկյան մոխիրներում» մեջ: Սա եղերականն ու հերոսականը զուգորդող քերթություն է: Վարուժանը ակամատես է լինում իր ժողովրդի անլուր ողբերգության, համատարած կոտորածների, դարավոր վայրենության ու բարբարոսության սաստկացած պոռթկումների, տեսնում ավերված օջախներ: Բանաստեղծի գործերում կա բնաջնջվող ժողովրդի ողբը, զայրույթի աղաղակը: Հայրենակարոտ բանաստեղծի սիրտը չի դիմանում, նա բացականչում է հրկիզումների ու արյան ծովում ծփացող դիակների բռնության դեմ.

Դիակ կույսի, դիակ աստղի և վարդի,
Դիակը մեր Ազգին և մեր Աստծոյն...

Նա մերկացնում է Թուրքիայի ահռելի եղեռնագործությունը և նրա եվրոպական հովանավորներին.

Դահիճ ցեղն ա՛լ կտոնե իր հաղթանակն արյունռուչտ,
Կիներ, տղաներ մորթելու ու հաղթանակն իր վատոգի:

Հայ ժողովրդի դեմ իրականացվող արհավիրքներն ու պատճառած տառապանքները, Արևմտյան Հայաստանի ջարդերը, տեղահանությունն ու բնաջնջումը, թուրք ջարդարարների կողմից շարունակվող ոճրագործությունները բորբոքում ու ըմբոստացնում են **Ավ. Իսահակյանին**: Նա մերթ քերթողահայր Խորենացու նման ողբ է գրում. «Ողբում են վիճակդ տխուր, ով հայ ժողովուրդ, տանջանքիս աղբյուր», մերթ ժողովրդական էպոսի ոճով հյուսում է հայ ազատագրական պայքարի վիպասքը: Նա ընդվզում է անմարդկային օրենքների դեմ, բռնության դեմ, աստծու դեմ, որն անտարբեր է մի բոտ ժողովրդի անլուր տառապանքների հանդեպ:

«Ես տիեզերական վիշտը զգացել եմ, հասկացել եմ հայության մեծ վշտի միջոցով», - գրում է Իսահակյանը: Բանաստեղծի վշտի այս բացարձակումը պայմանավորված է նրա ժողովրդին վիճակված անօրինակ դառն ճակատագրով: Նա իր հոռետեսության հիմքը համարում է «հայության աղետը»: «Անբացատրելի զարևուրելի ջարդերը միայն կարող են այդպես մթազնել մի հոգի, հայ մարդու հոգին», - գրում է նա «Աբու-Լալա Մահարի» պոեմի առիթով:

Իմ հայ ժողովուրդ,
Եվ հիմա դժնյա

Կամ

Այս ճգնաժամիդ
Կանգնել ես մենակ
Վե՛հ քարերիդ մեջ,
Սեգ լեռներիդ տակ՝
Եվ որդեկորույս
Եվ ուղեմուկոր...

* * *

Հայրենի տուն
Ավար, ավեր,
Արյուն, արյուն.
Անհուն ցավեր:
Սուրբ մանկիկներ,
Մեր մայր ու քույր
Հրին, ջրին
Ու սրին կուտ:
Կսկիծ, կսկիծ,
Այսքան կսկիծ
Ինչպես տանիմ
Այսքան կսկիծ...

Բոլոր մեծ բանաստեղծներն ազգային երևույթների գնահատման հարցում հանդես են բերում անսխալ զգացողություն, եթե իհարկե հավատում են դարին, ժամանակին ու ճիշտ գնահատում քաղաքական իրադարձությունները: Սակայն ամենահանճարեղ, բայց միամիտ, բարի ու հավատացող բանաստեղծները ոլորդ դեպքերում խաբվում են:

Վահան Տերյանն ու Եղիշե Չարենցը Թումանյանից ու Իսահակյանից հետո նոր հայեցակետով են նայում ազգային հարցին: Տառապող ժողովրդի դրաման դատապարտվում է միայն կենսավիլիստիայությամբ, տխրության, թախծի ու դժոխային պատկերների նկարագրություններով, նեղակուտ մարդու հոգեբանությամբ: Դժբախտաբար **Վահան Տերյանը** «Հոգևոր Հայաստանի ստեղծման խնդրում», ուր առաջ է քաշում Հայաստանի փրկության իր տեսակետները, իր ծրագրերը, դեմ է ազգային կուսակցությունների ծրագրին:

«Հոգևոր Հայաստան» հոդվածում նա գրում է. «Արդեն թվում է, որ եթե անգամ այդ Հայաստանի կոչված դժբախտ երկրում ոչ մի հայ չմնա, մեկը

դարձյալ պիտի այրվենք նույն իղձերով՝ նույն ցավագին, չեզ համար մի րեսակ կրոնական գունավորում սրագած այդ խնդրով: ... Մեզ մի րեսակ սրբապղծություն է թվում, երբ մարդիկ մեր ազգի՝ փարիներով ու րասնյակ փարիներով փայփայած գաղափարին մուրեկում են սառն մտքով, անփարքեր գիտնականի ոճով: Մենք ուզում ենք ճշալ, որովհետև երբ ցավ ես զգում, խոհեմ լինել չես ուզում, մենք ուզում ենք աղաղակել, որովհետև երբ սիրելին րանջվում է, խոհեմության խորհուրդներն անզոր են, իսկ այդ աղաղակի ապարդյուն լինելու մասին չես մրածում»:

Հողվածում Հայաստանի նյութական և ուազմական ուժի ստեղծման շուրջ Տերյանի դատողությունները ճիշտ են՝ ֆիզիկական և տնտեսական զորություն, իսկ ազգային կուսակցությունների՝ թուրքահայ հարցի ապագային նրա չհավատալը ազնիվ միամտություն է, որ գալիս է նորաստեղծ պետության կասկածելի խոստումներից:

Անհանգստանալով Արևմտյան Հայաստանի փրկության ուղիների համար՝ նա մեծ ցավով, բայց անկեղծորեն գրում է. «Մենք թերահավատ ենք դեպի այդ մի հարվածով, մի թեկուզ հերոսական ճիգով սրեղծվելիք Հայաստանը: Մեր խորին համոզումով, որքան և կարևոր ու խոշոր լինի այսօրվա այդ հերոսական ճիգը, այնուամենայնիվ նա չէ, որ պիտի որոշե, վճռե հայության ապագայի վիճակը, սրեղծի այն Հայաստանը, որ մեզ համար բաղձալի է»: Վահան Տերյանը գտնում է, որ հայ ժողովուրդը մեծ աշխարհի դեմ կարող է կանգնել միայն այն դեպքում, երբ կառուցի իր ազգային մշակույթը, դպրոցը, լեզուն, ծանր ու տևական աշխատանքով հասնի համախմբման, ստեղծի ազգային ինքնուրույնությունը հաստատող մշակութային արժեքներ, դիմադրի արտաքին ճնշմանը:

Դժբախտաբար, մեր ժողովուրդն աղետների և ողբերգությունների օրերին է միայն ճիգեր թափում համախմբվելու, ազգայնանալու, ինքնուրույնանալու, մշակույթը, դպրոցը, ազգն ուժեղացնելու: Այնուամենայնիվ, տառապող ժողովրդի բանաստեղծը ցավի խոր զգացողությամբ է պատկերում կործանման ու տազնապների օրերը: Նա ապրում է որբացած սերունդների կսկիծը.

Մշուշի միջից,- տեսի՛լ դյութական,-
Բացվում է կրկին Նաիրին տրտում.
Ո՞ր երկրի սրտում թախիծ կա այնքան,
Եվ այնքան ներում- ո՞ր երկրի սրտում.
Որտե՞ղ են քարերն այնպես վերամբարձ
Չեռների նըման պարզված երկնքին.

Որտե՞ղ է աղոթքն այնպես վեհ ու պարզ
Եվ զոհաբերունն այնպես խնդագին...
Որտե՞ղ է խոցում այնպես չար ու խոր
Սիրտը մարդկային դաշույնը քինոտ.
Որտե՞ղ է հոգին այնպես վիրավոր,
Եվ անպարտ երկիրն այնպես արյունոտ...

«Երկիր Նաիրի» շարքի բոլոր բանաստեղծությունները՝ գրված 1915-1916 թթ., բանաստեղծի հոգու կսկիծն են արտահայտում: Նրա հոգում ծնվում է ազգային մեհուքյան դրաման: Նա ծանրորեն հյուսում է երկրին վիճակված յուրահատուկ ցավի տխրագին երգը, որն անհասկանալի է աշխարհին ու մարդկանց.

Այնպես անխիճ եմ և նման լացին
Երգերն իմ երկրի, այնպես տխրագին.
Մեզ չի հասկանա օտարերկրացին,
Մեզ չի հասկանա սառն օտարուհին:

Տեսնում եմ ահա գյուղերը մեր խեղճ,
Եվ թուխ դեմքերն այն տխրության սովոր.
Իմ ժողովուրդը անել վշտի մեջ,
Երկիրն իմ անբախտ և աղետավոր:

Թող հնչե երգն այդ դառն ու ցավածին,
Երգը հայրենի ցավագար ու հին,
Մեզ չի հասկանա օտարերկրացին,
Մեզ չի հասկանա սառն օտարուհին...

Տերյանի խոսքի մեջ խտանում են իր ժողովրդի թախիծն ու տագնապները.

Մենք բոլորըս, բոլորըս
Մանուկներ ենք որք.
Մանուկներ ենք մենք կորած -
Հավիտյան անմայր.
Մենք բոլորս մոլորված
Անտառում խավար...

Մենք նետված ենք բոլորըս
երկիրն այս հեռու,
Կանչում ենք միշտ – ձայն չըկա,
Աղոթում ենք – ո՞ւմ.
Ո՞վ կըփրկե, ո՞վ կըգա,
Որ տանի մեզ տուն...

Քանաստեղծի հոգու վրա է ծանրացել հայրենիքի բախտը.

Ինչպե՞ս չսիրեմ երկիրն իմ կիզված,
Պարզված վերջստին սրերին սուրսայր,
Ինչպե՞ս չսիրեմ – հեզությամբ լցված
Դու յոթնապատիկ խոցված Տիրամայր:

Որքան որ ելան արյունից ազահ,
Դու կամավոր զոհ - բոլորը տվիր.
Դու հավետ եղար անարատ վըկա -
Չարերի կոխան, խաչված իմ երկիր:

Չրկեզ քո հոգին, որպես առատ խունկ,
Աշխարհի համար պարզեցիր անպարտ,
Չեզ ընդունեցիր երդում ու երկունք,
Դու արքայաբար վեհ ու անհպարտ:

Ժամ է, ե՛լ նորից, իմ ծիրանավառ,
Չրահավորվիր խանդով խնդագին,
Վառիր երկունքի գիշերում խավար
Չրով մկրտված նահրյան հոգին...

Այսպես են տառապում քանաստեղծները, իրենց զգայուն հոգին նվիրում հայրենիքի ճակատագրին՝ երբեմն մոռանալով անձնական ցավն ու հուսալքությունը: Մարգարե է այն քանաստեղծը, որ չի կորցնում գալիքի հույսը և այն մարգարեն, որ միամտաբար հավատում է ժամանակի խաբկանքներին: Այդպիսին է մեր ժողովրդի մյուս հանճարը՝ **Եղիշե Չարենցը**: Նա ապրեց իրականության ամենաողբերգական տարիներին: Նա քայլեց հայոց եղեռնադժոխքի դանթեական ճանապարհներով: 1915-16 թթ. ողբերգական իրադարձությունների թելադրանքով ծնվեց «Դանթեական առասպել-

լը»: Պոեմը եկավ լրացնելու Թումանյանի, Սիամանթոյի, Վարուժանի, Տերյանի եղեռնին նվիրված երկերի շարքը: Հայրենիքի ու ժողովրդի ցավը դառնում է բանաստեղծի անձնական ողբերգությունը: Ինչպես Սիամանթոն, Վարուժանը, Չոիրապը, Չարենցը նույնպես տեսել է հայոց եղեռնի իրական դժոխքը:

Չարենցի «Վահագն» (1916) պոեմը նույնպես արժարժում է հայրենիքի ու ժողովրդի ճակատագրի թեման: Մեծագույն աղետի օրերին Չարենցը մեր ժողովրդի փրկության հույսը կապել է Վահագնի փրկարար գործության հետ.

Ու հավատացինք հարբած ու գինով,
Թե դու կաս՝ հզոր մարմնացում ուժի,
Բայց նրանք եկան արյունով, հրով,
Մեր հին երկիրը դարձրին փոշի:

Ու երբ քարշ տվին դիակդ արնաքամ,
Որ նետեն քաղցած ոհմակներին կեր՝
Մեր կյանքի հիմերն անդունդը ընկան
Եվ արնոտ միգում ճարճատում են դեռ:

Նա տազնապում է Հայաստան աշխարհի գալիքի համար, ազգային կյանքի կամայականության համար, խաչի ու խաչվածի համար: Ազգի մաքառող որդին գրում է.

Օ, այն չէ՛ր, այն չէ՛ր –
Երկիրը հրի ...
- Մահի՛, ոճիրի՛
Արնաքո՛ւյր գիշեր:
Օ, այն չէ՛ր, այն չէ՛ր:
Ու ցո՛ւրտ էր այնքան...
Ձեռքեր արնաքամ...
Յուսահատ կանչեր...
Լեզենդ էր թվում
Մահի՛, ոճիրի՛...

Չարենցի համար երկիրը մնում է հեռավոր երազանքի անիրականալի ցանկություն: Բանաստեղծի մշուշոտ աչքերի մեջ խավարում են կապույտ երազները: Իրականությունը բանաստեղծի համար դառնում է անհայտ ու-

ղի, անհայտ աշխարհ ու մահ: Ողբերգական շեշտերը տեսանելի են դառնում 1920-ականներին գրված բանաստեղծություններում: Եթե Վահան Տերյանը կարողանում է, ինչ-որ չափով ազգային ողբերգությունը անձնական դրամայի հետ խառնելով, գտնել ցավի արմատները, ապա դժբախտաբար մեր հանճարեղ Չարենցի առագաստն իր մեջ չի ընդգրկում եղեռնի թեման: Նրա շոնդալից, պայծառ քնարը հազար թելերով կապվում է Լենինյան դարի հետ և ցավով ինքն էլ դառնում է դարի զոհը:

Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախադանին թող մոտ չգան...

Չարենցի՝ հեղափոխությամբ խանդավառվելն ու նրա գովերգումը ամենևին էլ չի հակասում բանաստեղծի մարդկային էությանը, ազգային ոգուն ու գաղափարախոսությանը:

Մեծ Եղեռնը, երկուսուկես միլիոն հայերի կոտորածը ու դրա հետևանքով աշխարհով մեկ սփռված միլիոնավոր հայերի բախտը սպիացել է ամեն մի հայի հոգում, դարձել ազգային ճակատագրի աղերսը:

Դժվար է գտնել խորհրդահայ շրջանի մեկ բանաստեղծ, որն անդրադարձած չլինի մեզ հուզող հայկական հարցին ու բախտին, նրա ճակատագրին ու անմեղ զոհերին: Դժբախտաբար, երբ ցանկանում էինք ինչ-որ ձևով հաշտվել այն մտքի հետ, որ այլևս չեն կրկնվի թուրքական ոճրագործությունները, կրկին ականատես ենք լինում նոր եղեռնագործությունների ու ջարդերի, որոնք կատարվում են պատմական նույն ձևերով, նույն ձեռագրով ու հովանավորչությամբ:

Կան բանաստեղծներ, որոնց գրչից ու սրտից անբաժան է եղեռնի թեման: Հակադարձ կարող ենք ասել, որ Սիամանթոյի, Վարուժանի, Ռուբեն Սևակի, Թումանյանի, Տերյանի, Չարենցի հաջորդները եղան Պարույր Սևակը, Հովհաննես Շիրազը, Սիլվա Կապուտիկյանը, Գևորգ Էմինը, Վահագն Դավթյանը, Մարտ Մարգարյանը, էլի ուրիշներ: Նրանցից յուրաքանչյուրի երակների միջով արյան պես հոսում է ազգային աղերսը: **Վահագն Դավթյանի** «Ռեքվիեմը» գեղարվեստորեն և պատմականորեն ցնցող մի գործ է, ուր մարդու շուրթերը դողում են և սիրտը մորմոքում:

Աշխարհում անթիվ գերեզմանոցներ,
Անթիվ շիրիմներ՝ հողագունդն ի վար...

Եվ սակայն շիրիմն իմ ժողովրդի,
Իմ մի բուռ, փոքրիկ իմ ժողովրդի
Ամենամեծն է
Աշխարհում արար...

Դեր-Ջորի քամին
Մանկան ոսկորից սրինգ է սարքել
Եվ արշալույսի խաղաղության մեջ
Սուլում էր մահվան անմահ նվագներ:
Սուլում էր, հուշում,
Որ ավագի տակ
Մի կարմիր-կանաչ
Երագ կա թաղված...
Եվ անապատը,
Որ հսկա ու փակ
Մեռյալ կոպ էր թվում իմ աչքին,
Շարժվում էր ասես,
Ու այն կապուտակ,
Այն կարմիր-կանաչ
Երագն էր ցուլում...
...Գյուղի բարդին էր կատարն օրորում,
Ու լույսերի մեջ արևագալի
Զիլ զրնգում էր օրհներգը կալի:

Հայ ժողովրդի ցավով ու բախտով ապրող հայոց բանաստեղծուհին՝ **Սիլվա Կապուտիկյանը**, այրվում է իր ազգի չար ու բարով, դառը բախտով: Շիկացած զգացմունքով ու մտքով փայլատակող «Մտորումներ ճանապարհի կեսին» պոեմը հայ ժողովրդի պատմության բանաստեղծական ու փիլիսոփայական ողջամիտ ընկալումն է և բարձրարվեստ վերարտադրումը:

Պոեմի գաղափարական բովանդակությունը հայ ժողովրդի հարստության, ազգային բնավորության ու պատմության վերածնության հարցն է: Պոեմում նա խոսում է հայ ժողովրդի պատմության ամենաողբերգականի՝ Մեծ եղեռնի մասին:

...Եղել է մի հին, մի հաշտ ժողովուրդ՝
Ծվարած հողում իր բիբլիական.
Քարի՛ց է քամել իր հացը ավուր,

Քարի՛ն է տվել ծիրքերը իր բյուր,
Մեղմել մռա՛յլը ժայռեղեն իր տան:
Եվ նվիրունով այրվող իր սրտի
Կանգնել է վեմե՛ր, սյունե՛ր, խոյակնե՛ր,
Իր քաղաքներն ու շենե՛րն է հիմնել,
Իր Մեսրոպատառ գրերն է երկնել,
Տաղերգել վասըն սիրո ու վարդի,
Հյուսել իր արդար վիպե՛րգը Դավթի,-
Եվ միշտ՝ իր հոգով, իր հին վիպերգով,
Հանապազօրյա խոսք ու աղոթքով՝
Ապավինելով ճերմակ իր աստծուն՝
Խաղաղությո՛ւն է երագել անսուտ
Աշխարհի՛ն, իրե՛ն և ամենեցո՛ւն...

Եղել է մի հին, մի հաշտ ժողովուրդ,
Սակայն եղել է աշխարհը՝ անհաշտ.
Բախվել են կռվի ճամփաները մութ
Նրա հեգ հողում ու ծեռքով անգութ
Խաղի՛ են հանել հողը խաչապաշտ...
Եղել է ավե՛ր, ավար, Ավարա՛յր,
Ու Բյուզանդիոն, ու պարսի՛կ են եղել.
Խորշակի նման փրօել են ցեղեր,
Տրորե՛լ, տիրե՛լ, այրե՛լ վայրաբար.
Ու երկտակ բեռը դրսի ու ներսի
Հայ շինականին երկտակ է բեկել,
Թե բարակել է հաստը երեսից,
Բարակի հոգին, ախ, դո՛ւրս է եկել...

Միվա Կապուտիկյանն իր հոգու լեզվով ու բարձր հումանիզմով արտա-
հայտում է հայ դարավոր տառապանքը, կսկիծն ու մորմոքը:

Վերջին եղեռնի դու անվե՛րջ կսկիծ,
Այդ ե՞րբ գարթնեցիր իմ երակներում...
...Զգվելով մեր որբ հողերի՞ց արդյոք
Ի՛նձ փաթաթվեցիր, դու՛ փո՛ւշ ու մացառ.
Թե՞ Կոմիտասը – զմռսված մորմոք,
Քեզ իր հետ բերեց, երբ որ տո՛ւն դարձավ:

1950-ական թվականների կեսերին, երբ սկսվում է հայ ժողովրդի անցյալի պատմության անտեսված էջերի վերագնահատման, ազգային մշակույթի անվանի, բայց անիրավի մոռացության մատնված դեմքերի և նշանավոր կոթողների արժեքավորման բուռն շրջանը, Շիրազի, Սևակի, Դավթյանի, Սահյանի, Էմինի հետ Սիլվա Կապուտիկյանը ևս իր իմաստավորող խոսքն է ասում եղեռնի մասին.

Օ՛, կիսալուսնով զմռած ու կնքած
Վեցհարյուրամյա գիշե՛ր օսմանյան.
Խարխափում էր իմ ժողովուրդն անկար՝
Իր հայրենիքում՝ ինքն օտարական:
Եվ փորփրում էր հողն ու այգին
Սևը՝ ներս արած, սպիտակը՝ դուրս.
Եվ իր սրտի մեջ, ինչպես երդիկից
Թոնիրին ընկած բարալիկ մի լույս,
Պահում էր հո՛ւյսը ու, թեև վախով,
.....
Թալեաթն առավել խոժոռվեց ոխով.
Եվ համբուրելով այտը Ջոհրապի՝
Համբուլյրով տվեց մահվան ահագանգ...

Օ՛, գարնան ամիս, ապրելու ապրիլ,
Դու որ բերում ես ծաղիկներ ու կյանք,-
Ինչո՞ւ դու դարձար մահվան տարելից,
Մահով մնացիր մեր պատմությունում...
Ապրելու ապրիլ, ինչո՞ւ է մեռնում
Գարնան սպասող մի ողջ ժողովուրդ.
Գարնան օրերին, օրը ցերեկով,
Աշխարհին ի տես, աչքի տակ աստծու...
Ով արդարություն, ես թքե՛լ եմ քո...

Բայց կազնի ր, կանգնի ր, կարկամի՛ր, լեզու,
Ո՛չ, ես չեմ ծնվել անեծքի համար,
Ես միշտ բարեկամ խոսքի՛ եմ սովոր.
.....
Եվ մի՞թե հիմա ես էլ հիրավի
Շուրթերս պիտի անեծքով պղծեմ...

Հայ ժողովրդի հիշողությունից երբեք չի ջնջվի 1915 թվականը՝ Հայոց Մեծ եղեռնը՝ մարդկության պատմության առաջին ծրագրված ցեղասպանությունը, որ իրագործեցին ջարդարար թուրքերը: Բայց բանաստեղծուհին չի ուզում իր շուրթերը պղծել անեծքով. նա մեծ Թումանյանի պես բարի է, քարեկամական խոսքի է սովոր...

Ուրեմն ինչպե՞ս, հեղեղներն արյան
Թողնել որ ծածկի՞ մոռացման փոշին...

Բայց ո՛չ, ուրիշ է հատուցման ուղին: Հայ ժողովուրդը մոռացկոտ չէ, բայց և հիշաչար էլ չէ: Բոլոր բարբարոսներին հայ ժողովուրդը հակադրում է իր ապրելու և ստեղծելու կամքը, որքան էլ ցանկանում են բնաջնջել նրան, նա ապրում է և հենց դրանով էլ հաղթում թշնամուն: Այդպես է եղել անցյալում, այդպես է նաև այսօր: Դիմելով ժողովրդին՝ բանաստեղծուհին առաջադրում է իր ծրագիրը:

Ո՛չ, իմ ժողովուրդ, դու շա՛տ ես տեսել,
Դու պիտի հիշե՛ս ապրելու համար...
Դու պիտի առնե՛ս վրեժդ անհուն,
Պիտի խաղաղե՛ս հոգին քո խռով,
Բայց ո՛չ արյան դեմ կոչելով արյուն
Եվ մահի դիմաց մա՛հ սերմանելով, -
Ո՛չ, ի՛մ լուսավոր, դու որ այն պահին,
Երբ ընկած էիր տմարդ հարվածից,
Երբ թվում էր թե՛ աչքերդ մթին
Էլ չե՛ն պարզելու թույնից ու մաղձից, -
Քո մեջ ուժ գտար պայծա՛ռ նայելու
Մարդկանց, ազգերի՛ն, զարթնող աշխարհի՛ն
Եվ խոցված ձեռքով զինագրվելու
Եղբայրության նոր գաղափարների՛ն,-

.....
Ո՛չ, ուրիշ է քո հատուցման ուղին,
Քեզ կյանքի ուրի՛շ ճամփա է տրված...

Դու պիտի վրեժ առնես ապրելով,
Ապրելով համառ, հազարապատիկ,
Ավերուճի դեմ՝ քո ստեղծելով,

Ավեր Վանի դեմ՝ քո Երևանով,
Աքսորների դեմ՝ խուլ անապատից
Նորից տուն դարձող քո քարավանով, -
Դու պիտի ապրես այսպե՛ս, սրանով:

Միվա Կապուտիկյանը անտարբեր չէ հայ ժողովրդի ողբերգությանը: Նրա հայրենեղբայրության բոլոր թեմաները, հարցերն ու խնդիրները խտանում են այս պոեմում: Նրանում իրենց իրական արտահայտությունն են գտնում բանաստեղծուհու ազգայնասիրությունն ու մարդասիրությունը, որոնք ոչ թե հակադրվում են միմյանց, այլ պայմանավորված են միմյանցով:

Միվա Կապուտիկյանն այն բանաստեղծներից է, ովքեր լսում են բանականության ձայնին, անսասան հավատ են տաժում դեպի հայրենիքն ու ապագան, դեպի սեփական ժողովրդի արժեքները: Նա այն բանաստեղծներից է, որոնք հարազատ են մնում մեծ Թումանյանին:

Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը՝ նոր երգերով, նոր խոսքով:

Նրա հոգու խորքում չի մոռացվում ոչ մի պատմական անցք, ոչ մի գարուն, ոչ մի ողբերգական դեպք.

Ամիսն ապրիլ էր,
Եվ օրը - լցված:

Հրապարակներում՝ ծուլ բազմությունն էր
Ծովացած- փռված,
Փողոցների մեջ՝ մարդկային գետեր,
Որ չգիտեին ուր էին գնում,
Բայց - գնում էին...

Ասես դարերի խորքերից եկող ալիք մի անտես,
Դարերի խորքում վաղ տեղադրված ոգեղեն մի սարք՝
Գերհզոր ռադիո-ճառագայթներով
Իր ծիրի մեջ էր պահում այդ երթը,
Վարում էր նրա ընթացքն ու հոգին,
Տանում դեպի ետ՝ դեպի Դեր-Էլ-Չոր, Անի, Ավարայր
Ու տանում է դեպի գալիք դարերը...

Եվ - գնում էին...

Սասնա Դավթի պես խակ պատանիներ,

Դավթի նման ծուռ,

Բայց մեն մի օրում այրացած արդեն,

Երակների մեջ՝ զարթնած արյունը ու զարթնած ոգին,

Աչքերում կսկիծ, բողոք ու հարցում

Դեզ գնում էին.

- Ասե՛ք, ո՞ր էիք պահել մեզանից

Եղելությունը «եղեռն» անունով.

Աշխարհ սպանող այս դավի մասին.

Մեր սուրբ զոհերի,

Մեր սուրբ հողերի,

Մեր ցավի մասին

Այսքան տարիներ ո՞ր էիք լռել...

Գնում էին, որ

Տեր կանգնեն իրենց որբ մեռելներին, որբ շիրիմներին,

Չոքեն համբուրեն Մարութա վանքի

Մասունքները որբ,

Ետ տանեն հողը և հանեն հողից Թուրք-Կայծակին,

Ետ տանեն քարը և հանեն գոմից Քուռկիկ-Ջալալուն,

Ասեն՝ զորո՛ւ ենք թամբելու մեր հոր

Վիշապաքաղ ծին,

Ասես, որ՝ տե՛րն ենք, տե՛րն ենք Սասնա տան

Ու Սասնա դատին:

Ամիսն ապրիլ էր,

Եվ օրը – արդար...

Անչափելի է **Հովհաննես Շիրազի** գայրույթը թուրքերի դեմ: Նրա համար հայոց Եղեռնը ոչ միայն ազգային էր, այլև համամարդկային: Եղկելի թուրքերի արյունոտ ձեռքերը դատապարտելու փայլուն օրինակ է «Հայոց դանթեականը»: Պոեմում Շիրազը պարսավում է քաղաքակիրթ մարդկության համար այդ ամոթալի իրողությունը: «Հայոց դանթեականը» հանճարեղ բանաստեղծի դատաստանամատյանն է: Բանաստեղծը պատմական փաստերը ներկայացնում է մարդկային հուզականության բնորոշ գծերով, եղեռ-

նագործներին խարազանող մեկնաբանություններով, խարանող խոսքերով, բանաստեղծական մենախոսության, հրովարտակային կոչի և դիմումի միջոցներով:

«Հայոց դանթեականը» Շիրազի բնատուր տաղանդի փայլատակումներից է, որը դարձավ ազգային մեծ բանաստեղծի հարատևության վկայագիրը: Պոեմը ազգային ոգու լավագույն դաստիարակը դարձավ հայ երիտասարդության համար: Եղեռն տեսած և հայրենիքը կորցրած բանաստեղծն իր պոեմով դարձավ ամենամեծ մարտնչողներից մեկը: *Դիմելով ժողովուրդներին՝ Շիրազը գրում է. «Ձեր աչքերը թեև չոր, բայց հայոց այս մշտախարույկ ցավերի և տառապանքների, խոցերի ու վերքերի վկան են, խլված հողերի և չթաղված դիակներին վկան են... Այն օրերում տեսաք՝ չլացիք, գեթ այժմ եկեք լալու, գեթ լալու, գեթ լալու, գեթ լալու, գոնե լացով կիսելու այս անկիսելիներս հայոց...»:*

Շիրազի պոեմի քսաներկու գլուխները և վերջերգը խոցված ու խաչված ժողովրդի, եղեռնապուրծ ազգի փրկվածների անեծքն է թուրքերին:

Ախ, մի մանկիկ էլ խեղդված տեսնելով՝
Ես անաչում եմ, որ մարդ եմ ծնվել,
Մի՞թե մարդ է մարդն այնտեղ հասնելով՝
Ում ծեռքով հազար աչքեր են հանվել...
Ի՞նչ հազար, բյուրե՛ր խեղդել մի գետում,
Մանկիկներ՝ մեղքին ցմախ անընտել,
Միայն Դեր Ջորի այն անապատում
Չաշվիր ինչ ծով է ոսկրակիտվել՝
Ջորքից զրկված, անզորներ... հայի՝
Մայր ու մանուկներ, ծերուկներ մանուկ,
Շուրջն՝ աշխարհի խիղճն՝ համր ու՛ ամայի,
Ամայի, ինչպես լուսինն այս տամուկ,
Ամայի, ինչպես գոռնահան մի գանգ,
Ինչպես լեզվակը պոկված կավե գանգ...
Ո՛վ անողորմներ, չտեսա՞ք, միթե,
Գանգագորգերը՝ թուրքի ոտքն ընկած. —
Քո ցնորքը չէ, ո՛վ լռին Դանթե,
Ուրի՛շ է դժոխքն այս ցեղի ցնկնած,
Այս իմ ողբերգածն ուրի՛շ է, ուրի՛շ,
Մինչ քունը թղթե դաշտիկ է թավիշ...

* * *

Օ՛հ, ես հպարտ եմ, որ հայ եմ ծնվել...
Բայց ամաչում եմ, որ ձեզ եմ նման,
Ձեր ծով աչքերից մի շիթ չի քամվել,
Երբ ծնվել է հայ դժոխքն անսահման
Եվ ծավալվել է այսքան աղեկեզ...
Գայլացած մարդիկ, ես ատո՛ւմ եմ ձեզ,
Ես կարմրում եմ, որ ձեզ եմ նման՝
Թեկուզ տեսիլքով այս երկոտանու,
Դուք ծնունդը չեք վաղեմի մարդու, –
Նույնիսկ քարայրի մտքով չի անցել
Սպանել ցեղը այլ մի քարայրի,
Այն, ինչ որ այժմ ինքներդ եք գործել,
Ինչ չէին լսել դարերն էլ վայրի,
Ով մարդ-վամպիրներ ճերմակածեռնոց,
Դուք դեռ սկիզբն եք գալիք եղեռնոց...
Մարդ, որ այսքանը տեսավ ու լռեց՝
Ինչպես սառնաշուրթ իր լեռները մեծ,
Ինչպես Արևմուտքն հազարաչքանի,
Որ ցավեր կիսող մի աչք էլ չունի,
Որի ուրվականն այս Դանթեն է լուռ՝
Իր մեջ է, ասես, եվրոպյն անսարսուռ...
Ես ամաչում եմ գայլից լեռների՝
Տեսնելով դժոխքն այս թուրք ձեռների...

Բանաստեղծի համար փոքր ազգերի վշտերը աշխարհը չի հասկանում:
Փոքր ազգի մեծ վշտերը միայն տվյալ ազգին է ցավ պատճառում: Հայ
մայրերի թաց աչքերը և որք երեխաների արցունքները մշտալուռ հողագնդի
հոգսը չէ: Ոչ մի դժոխք չի կարող չափվել հայ կոտորածի արնածովի հետ:
Եթե եղեռն տեսած մարդու աչքերը հայոց վշտի կշեռք դառնան, չեն
կարողանա ճշմարիտ չափել ու վրձնել այդ զարհուրելի պատկերները: Թող
անիծվեն բազմալեզու սերունդները, եթե չարձագանքեն մեր ժողովրդի
բազմահավիտենահառաչ ողբերգին:

Էլ ի՞նչ... Չոհերս մեկ առ մե՞կ վրձնեմ,
Մեկ առ մե՞կ բանամ աչքերը մանկանց,
Մանկասիրտ սարսափն ինչպե՞ս վերձանեմ՝

Չորս հազար մանուկ բերանից փակված,
 էլ ինչպե՞ս ճչամ ճիչերը խեղդված,
 Իմ կսկիծները ո՞նց բանաստեղծեմ,
 Որ չխոնարհվի արվեստն իմ հաղթված
 Մերկ եղեռներից, – ու՞մ խիղճը պղծեմ,
 Որ գեթ մի գիշեր սիրտս հովանա,
 Չգոռա, ինչպես ծովակն իմ Վանա,
 Ինչպես Տիգրիսն էլ հայոց դիաբեր,
 Ո՞նց պատմաբանեմ ձեզ համար, ազգե՛ր,
 Ո՞ւմ համար վրձնեմ արցունքներս հին,
 Երբ աչքեր չկան ձեր ականջներին...

Ավա՛ղ, մարդը լոկ իր ցավն է զգում
 Լոկ իր ցավով է ցավում ամեն ցեղ,
 Հասմիկի մահը վարդը չի սգում,
 Ոչ էլ վարդի մահն՝ հասմիկն աչազեղ:

Հայ իրականության մեջ **Պարույր Սևակի** ճանաչումը եղավ շատ մեծ գիզգագներով: Ե՛ւրամարտությունն ասելու, հայրենի երկրի եղերական անցյալը ներկայացնելու դարավոր երազը, հազարամյա ողբն ու կարոտը պատկերելու ճանապարհը անցնում է խորդուբորդ ուղիով: Նրա հոգու ցավը գնալով խորանում է, դուրս գալիս համբերության երկաթյա սահմաններից: Շատ դժվարությամբ, բայց բանաստեղծը կարողանում է դիմանալ «Ժամանակի շունչը դառնալու» իր առջև դրած խնդրին: Պարույր Սևակին հուզում է հայ ժողովրդի ֆիզիկական գոյության խնդիրը: Նա, մտնելով դարերի խորքը, դառնում է դարի նվիրյալը: Հայոց Եղեռնի թեման մշտապես զբաղեցնում է Սևակին: Ազգային ցավի ողբերգուն 1969-ին հրատարակում է «Եղիցի լույս» ժողովածուն: 20-րդ դարի բանաստեղծն ու քաղաքացին իր ցավը ամբողջությամբ դրսևորում է ժողովածուի «Եռաձայն պատարագ» պոեմում:

1915 թիվը...

Եվ եղավ...կյանքի ճոխ տոնավաճառ,
 բարբարոսության աճուրդ մեծագին
 և մարդկայնության փակ գրավատուն...
 Եվ եղավ... մի նոր երկրորդ ջրհեղեղ,
 որ իր տակ առավ – առաջի՛ն հերթին –

այն երկիրը հենց, որ Նոյին փրկեց:
Եվ իր տակ առավ այն ժողովրդին,

որ 15 դար

սրտով ու շրթով հայցեց իր աստծուն
«Արձակեա՛ր զմեզ»,

բայց Տերն արձակեց նրա ոսոխին՝
միայն սաստումի թելով ձերբակալ
ու սուտ խոստումի մազով թևակապ
ոսոխին նրա:

Եվ ինչու:

Արդյոք ո՞չ այն պատճառով,
որ աստվածները տանել չեն կարող իրենց նմանին
ինչպես որ ազգը՝ իրենից բարձր իր հարևանին...

Եվ եղավ, օ ո՛չ, և եղավ... խավար,
այսինքը՝ սկիզբ,

այսինքը՝ մարդու տարեգրության նոր դարագլուխ,
հիմնադրումը գիտության մի նոր.

- Առաջին դեպքը ոչ կոտորածի,
առաջին դեպքը ... ազգասպանության:

1915 թվին...

Եվ այդ թիվն էր,

որ մի ողջ ազգի աղոթքը սառեց շրթուների վրա,
լերդացավ բերնին՝

բերանից դուրս ժայթքող արյան հետ ու պես
մինչդեռ շների աղոթքը լավեց անտեր երկնքում...

Եվ ոսկրով ծածկվեց մի հսկա երկիր,
ուր / ճիշտ են ասել ու ճիշտ են ասում/
եղել էր ու կար շնից շատ իշխան,
բայց, արդարություն... ալլա՛իր թող տար.
Երկիր, որ տվեց դարեր շարունակ ալան-թալանի.
ուստի չէր կարող չլինել աղքատ ու դատարկափոր:

Եվ, ձեզ եմ ասում,

ձե՛զ, որ չեք տեսել.

- Այդ արարական անապատներում
գիշեր ժամանակ

մինչև հիմա էլ,
կես հարյուրամյակ անցնելուց հետո,
պաղ ֆոսֆորային փայլ է արծակում ավազը մթին.
ուղտի պես ծունկի բերված ու մորթված
մի անբողջ ազգի փտող ոսկորի՝ ֆոսֆորափայլը:
Փտող ոսկորի ֆոսֆորափայլը,
որ չի կուրացնում մի՛միայն նրանց,
որոնց աչքերի ցանցաթաղանթը
ջնարակված է նույն այդ ֆոսֆորով.
և այսպիսին են գայլի աչքերը,
Իսկ մեծատառված- խորհրդանշված Գորշինն՝ առավել...

-Բեկանեմ շանթեր՝
իմ աչքերի մեջ
անտառային ֆոսֆորափայլից կիսակուրացող
իմ գույգ աչքերի:

Եվ զո՛ց աչքերով ես ասում եմ ձեզ.
- Եթե Փոքր ու Մեծ Մասիսները դուք զանգ չեք համարում,
գեթ համարեցեք բրածոյացած վիթխարի սապատ՝
այն, ինչ որ մնաց Ուխտավոր Ուղտից...

Թողեք ես լռեմ
և թող անլեզու քարերը խոսեն քարեղեն լեզվով.
– Այս ազգը որից և ինչո՞վ է վատ,–
պատասխան տվեք, քարե՛րն են հարցնում.–
այս ազգը ումի՞ց և ինչո՞վ է վատ,
որ դատապարտվեց այսչափ վատության,–
պատասխան տվեք, քարերն են հարցնում:
Եվ ո՞վ, և ինչո՞ւ սրանց «հայ» կոչեց,
որ հանգավորի միմիայն «վայ»-ով:
Եվ ինչպե՞ս, և ե՞րբ, ի՞նչ ուժով արդյոք
/թեկուզ և՛ ինչպես ատոմն ատոմից,
թեկուզ և՛ ահեղ պայթյունի՛ գնով
ու կործանումի սպասմամբ թեկուզ/
իրարից «հայը» ու «վայը» պոկե՛լ,

ինչպես ես հիմա շանթեր եմ պոկում
և խշրտուքով բեկանում -բեկում
իմ խավարադեմ –կուպրածեփ հոգում,
ուր գահավիժված հրեշտակներն են մորմոքում անխոս
մեռած հավատի
և մարած հույսի դիակի վրա`
միակի՝ վրա...

Ախ, եթե հիմա կարողանայի ես ձայնըս պոկել
կոկորդից իմ խեղճ
և օգտագործել իբրև խարազան`
չգիտեմ, թե ում մեջքին կամ դեմքին,
միայն թե մեզնից նա բարձրը ոռնար
և իր ոռնոցով մի պահ լռեցներ
մեր ցավը,
ցավը`
մեր անլռելի՛ն...

Մեծ դժվարությամբ է ծնվում նաև «Անլռելի զանգակատուն» պոեմը:
Այս պոեմով Սևակը ոչ միայն ներկայացնում է հանճարեղ Կոմիտասին ու
նրա ողբերգությունը, այլև հայ ժողովրդի հարյուրամյա պատմությունը: Դա
ազգի ջարդի, ավերման և հարատևման պատմությունն է: Դա պատմութ-
յուն է, որով աշխարհը նորովի ճանաչեց թուրք բարբարոսներին ու նրանց
հովանավորներին:

Գարուն էր: Չեկած ամառ`
Փուլ եկավ երկնակամար,
Ձյուն մաղեց մեր բաց գլխին,
Ձյուն մաղեց՝ կրակի՛ պես...
– Գարուն ա, ծուն ա արել...
Գետերը մեր երերման
Յոսեցին՝ երակի՛ պես...
– Արունը ջուր ա դառել...
Ձորերը շիրիմ դարձան,
Վիհերը՝ գերեզմանոց.
– Ջուրը մեր տունն ա տարել...
Ամեն քար՝ լուռ մահարձան,

Ամեն տուն՝ վառման հնոց.

– *Բնավեր հավք ենք դառել...*

Ինչքան բառ՝ ո՞ղջը մըրմունջ:

Ինչքան երգ՝ ո՞ղջը լալով.

– *Չուլում էր, զուլո՞ւմ, լառ՛...*

Թրի դեմ, սրի, հրի՝

Լոկ մանգաղ, լոկ բահ ու մաճ.

– *Տնավե՛ր- բնավե՛ր լաճ...*

Մեր հողը, մեր հայրենին,

Մեր երկիրն ամայացավ.

– *Մե՛վ կապիր, սեվսիրտ մարե...*

Յինավուրց տոհմիկ մի ազգ

Չմեռավ, այլ...մահացավ.

– *Գարուն ա, ծուն ա արել...*

Գարուն էր: Ամառ եկավ,

Ձագ հանեց ձորում կաքավ,

Իսկ հայր գրկվեց ձագից,

Իր պոռթկան թոնրի տաքից,

Իր մորից, հորից, յարից,

Իր բնից ու աշխարհից.

– *Գարուն ա, ծուն ա արել...*

...Ա՛խ, ինչպե՞ս, ո՞նց մոռանալ

Արհավիրքն այն օրերի.

– *Աշխարքում ով մոռանա՛*

Չուխտ աչքով թող քոռանա...

Գառնարած-հովիվ-նախորդ

Ետ չեկան սար-ձորերից...

Կեսօրին էլ ո՞վ երգեր.

– *Սարերը հով չեն անում,*

Իմ դարդին դարման անում...

Յնծվորը արտում մորթվեց

Իր ձեռքի սուր մանգաղով...

Խեղճ հարսը էլ ո՞նց երգեր.

– *Քաղվորին հաց են բերում,*

Բերանը բաց են բերում...

Ձկնորսը Կանա ծովում

Չըփրկվեց ճարպիկ լողով...
Աղջիկը գո՛ւր էր կանչում.
– *Իմ ծամթել տամ լողվորչուն...*
Երկրի մեջ մարդ չմնաց՝
Մարդ թաղեր մարդու նման...
Ա՛խ, մնար մեկը գոնե
Ու կանչեր.
– *Դէ յամա՛ն...*
Ա՛խ, ինչպե՛ս, ո՞նց մոռանալ
Արհավիրքն այն օրերի.
– *Աշխարքում ով մոռանա՛
Ջուխտ աչքով թող քոռանա...*

...Ջահերը վառ մնացին
Ժամերգվող եկեղեցում,
Ժամհարին կախ տվեցին
Պարանից զանգակատան...

Ջաղացից աղուն բերող
Ալրոտված խեղճ գյուղացուն
Իր սայլը դագաղ դարձավ,
Ալյուրը՝ արնոտ պատան...

Մայրն ընկավ՝ ծիծը թողած
Իր թըմփլիկ մանկան բերնում.
Ծծի տեղ ցից խրելով՝
Խեղդեցին մինուճարին...

Տատն ընկավ ծեռքը մեկնած
Կըչկըչան հավի թառին—
Իր հիվանդ թոռան համար
Խորոտիկ ճուտ էր բռնում...
Կալի մեջ պապիկն ընկավ—
Իր ոսկե թեղն էր էրնում,
Որպեսզի տուրքը թուրքին
Օր առաջ շուտ վճարի...

Ով ծաղիկ հաց էր թխում՝
Խորովվեց թոնրի ծխում...

Ով հասել ուխտատեղի,
Վառել էր մոմը դեղին.
Մոմի դեմ իջել էր ծունր
Ու հայցում էր աստղծուն,
Որ բաշխի մի լաճ տղա,
Իր արյամբ մոմը մարեց՝
Չավարտած «Տե՛ր, քեզ մեղա՛»-ն...

– *Գարուն ա, ծուն ա արել...*

...խոցեցին ու ջընջեցին,
Հատեցին հաստ ու բարակ,
Հոշեցին ու տանջեցին,
Փշրեցին, տվին կրակ,
Վաթեցին արյուն-արցունք,
Ներկեցին ձոր ու բարձունք,
Քանդեցին երկինք մի լուրթ,
Սորթեցին մի ժողովուրդ,
Հացառատ մի ողջ աշխարհ
Սարքեցին փշրանք-նշխար,
Սո՛ւրբ նշխար՝ շան բերանում, –
Ուզեցին մեկ հայ թողնել,
Եվ այն էլ... թանգարանում...

– *Գարուն ա, ծուն ա արել...*

Այսօր, երբ դարավոր նիրհից արթնանում են աշխարհի ժողովուրդները և տատապում ազգային հիվանդությամբ, հրաշքներ է տեղի ունենում, իսկական հրաշքներ, և մեր ազգի կորուստներն ավելի են զգացվում: Վերջին տարիներին ապրեցինք կոտորածների նոր սարսափը, առաջինը՝ 1988-ին Սումգայիթում և երկրորդը՝ 1990-ին Բաքվում: Չնայած այդ բոլորին՝ հայ ժողովուրդը վերածննդի ու զարթոնքի, ազգային ազատագրության հերոսական օրեր է ապրում: Այնուամենայնիվ, ցանկանում ենք Հովհ. Թումանյանի լավատեսությամբ նայել աշխարհին ու մարդկությանը, գալիք սերունդներին ասել, որ իրենք շարունակելու և շատ բան ունեն ասելու:

Մեր խոսքն ավարտում ենք հայ ժողովրդի ու նրա մեծ բանաստեղծի
աստվածային կարողության ու մարգարեացված իմացությամբ.

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,
Չազա՛ր-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,
Կենսաժպիտ իր շողերը պիտի ժլպտան առաջին,
Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,
Իմ նո՛ր հայրենիք,
Չըզո՛ր հայրենիք ...

**ՄԵԾ ԵՂԵՌՆԸ
ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԱՐՁԱԿ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Եղեռնի զոհ հայ գրողները նահատակվում են, բայց նրանց հուշարձանը կառուցվում է մեր ժողովրդի սրտում: Իսկ գալիք գրողներն իրենց մեսրոպատառ ստեղծագործություններով նրանց հավերժություն են պարգևում:

1894-1895 թվականների կոտորածներից հետո ստեղծվում է ազգային յուրահատուկ գրականություն: Ինչպես բնորոշել է Ջոհրապը, գրականությունից «արյան ու մահու» հոտ էր գալիս: Այլ կերպ լինել չէր կարող: Եղեռնից փրկվածները՝ Երվանդ Օտյանը, Լևոն Շանթը, Վահան Թեքեյանն ու Ջապել Եսայանը, չէին կարող շրջանցել այդ ողբերգական իրադարձությունները:

Այսօր մենք միայն մտավոր կարող ենք ներկայացնել ու փառաբանել այն գրողներին, որոնց գրչի տակ անմահացան հարյուրիազարավոր հերոսներ:

Ջապել Եսայանի ստեղծագործական կյանքի երկրորդ շրջանը կապվում է հայ ժողովրդի ճակատագրի ամենացնցող դեպքերի հետ: Նրա այդ շրջանի և՛ հրապարակախոսության մեջ, և՛ գեղարվեստական ստեղծագործություններում արտացոլված է պայքարի թեման՝ ուղղված համիդյան բռնապետության դեմ:

1909 թ. Կիլիկիայի կոտորածների տպավորության տակ նա գրում է «Ավերակներուն մեջ» գիրքը, որտեղ ներկայացնում է հայ ժողովրդի ահավոր ողբերգության դրվագները: Նրա «Ժողովրդին մը հոգեվարքը» աշխատությունը նվիրված է հայկական ջարդերին, հայերի աքսորին, տառապալից կյանքին ու ցնցող դեպքերին:

Խորհրդահայ գրողներն ուշացումով են անդրադառնում Եղեռնի թեմային: Եթե մինչև 1960-ական թվականները ստեղծվում են հատուկեմտ կամ զուգահեռ թեմաներով արձակ գործեր, ապա 1960-ականներից հետո լայն ծավալ են ստանում հայկական կոտորածներին նվիրված գրքերի հրատարակումները:

Լույս տեսած վեպերի, ակնարկների ու պատմվածքների մեջ առանձնա-

պէս արժեքավոր է **Գառնիկ Ստեփանյանի** «Մղձավանջային օրեր» վավերագրական ակնարկը, որը բովանդակում է 1914-15 թվականների իրադարձությունները: Իսկ **Աղավնու** «Շիրակը» վեպը հայկական կոտորածներն ու ժողովրդի ազատագրության դրվագները պատկերող վկայություն է:

Խորհրդահայ գրողներ **Դերենիկ Դեմիրճյանն** ու **Ալսեւ Բակունցը** իրենց վշտի ու ցասման բողոքն են արտահայտում Եղեռնի զոհերի ու նրա հետևանքների համար: Թե՛ Դեմիրճյանի «Ավելորդը», թե՛ Բակունցի «Լառ Մարգարը» Եղեռնի ողբերգական զոհ դարձած անհատների են պատկերում:

Տեղահանման ու արհավիրքի դրսևորումներից է «Ավելորդը» պատմվածքը, ուր դրսևորվում է Դեմիրճյանի կյանքի փիլիսոփայությունը: Դեմիրճյանի այս նովելն իրոք եզակի երևույթ է հայ գրականության պատմության մեջ:

Լառ Մարգարն իր ժողովրդի տեղահան արված բեկորներից է: Հարագատ տան ավերման, սիրելիների կորստյան և գաղթի ճանապարհներին կրած տառապանքների ծանրությունը չեն մթագնում նրա հոգին: Նա մի կերպ հասնում է հայրենիք և զորացնում իր կենաց ծառը:

Հայ ժողովրդի արյունոտ քառուղիներին է նվիրված **Գուրգեն Մահարու** «Այրվող այգեստաններ» գիրքը: Դեռևս 12 տարին չբոլորած՝ Մահարին դառնում է 1915-ի գաղթականներից մեկը, բռնում անհայտ հեռուների, մահվան և սարսափների ճանապարհը: Դատարկվում է նաև նրա ծննդավայրը՝ Վան քաղաքը:

«Առավուր լուսո եղավ և ըստ ամենայնի՝ արդար արեգակ, թեպէտ չեն երևում ոչ առավուրը, ոչ արևը:

Չեն երևում, որովհետև փոշին կանգնում է և՛ առավուրի, և՛ լուսի, և՛ արեգակի, և՛ արդարության դեմ, փոշի, փոշու մեջ լողացող մարդիկ, կանայք, երեխաներ, սայլեր, անասուններ»:

Ներկայացնելով Վանի ինքնապաշտպանությունն ու գաղթը՝ Մահարին բացահայտում է արևմտահայության, մասնավորապէս Վասպուրականի ողբերգության պատճառները: Մանկական հոգու ծխացող կարոտի աչքերով է նա ներկայացնում Վանի առավոտներն ու մայրամուտները, ծխացող այգեստանները: Նրա նկարագրության մեջ կա ազնիվ սարսուռ, բանաստեղծական վեհություն. «Պալան-պալան թոնրի ծուխը կախվել է այգեստանների վրա: Չվարթ նայում է առավուրը, և առավուրը առավուր է իր համար, աստիճան նման գեղեցիկ և նրա նման պայծառ, որը չգիտէ, թե ով է

պաշտում իրեն, ով է կեղծում, ում համար ահ ու սարսափ է և ով է նայում իրեն արցունքով լեցուն աչքերով: Բայց եթե չկա աստված, առավուրդ կա: Նա նայում է եթերից ու լեռներից, պայուսահաններից ու երդիկներից, ու նա գեղեցիկ է»:

Նպատակ չունենալով խոսել Մահարու քաղաքական ու ազգային կուսակցությունների նկատմամբ ունեցած դիրքորոշումների մասին՝ անհրաժեշտ ենք համարում կանգ առնել միայն իրական փաստերի, կատարված արհավիրքների, ավերիչ հարձակումների վրա, որոնցով և սկսվում են հայ ժողովրդի պատմության ամենամոռայլ էջերը:

Թուրք ժողովրդի կուլտուրական ցածր մակարդակը, կրոնական մոլեռանդությունը թույլ չեն տալիս ընդունել իր տիրապետության տակ գտնվող զարգացման բարձր աստիճանի վրա կանգնած ազգերին և ազգություններին: Այդ ժողովուրդներին կոտորելու, ծուլելու, միասարր դարձնելու նրանց բարբարոսական նողկալի ծրագրերն առանց փոփոխության մի բռնապետից մյուսին են անցնում: Դժոխսային վիճակ է ստեղծվում հատկապես քրիստոնյա ժողովուրդների և, մասնավորապես, հայերի համար: Հայերի հիմնովին բնաջնջումը սուլթանների ու նրանց կառավարությունների ծրագիրն էր: Դեռևս 1878-ին Էլեմալ փաշան ցինիկարար հայտարարում է.

«Որպեսզի Փոքր Ասիո մեջ մեր ունեցած երկրներն ազատ մնան օտարների միջամտություններից և միջամտության ամեն առիթներից, ուստի այդ սուրբ նպատակի համար պիտի պետական իրավունքը պահանջի, որ բոլոր կասկածելի տարրերը վերացնենք... Ուրեմն հայ ազգը վերացնելու, անհետ և անճիտ անելու ենք: Դա գլուխ բերելու համար բան չի պակասում մեզ: Ամեն գործիք պատրաստ ունենք... քուրդ, չերքեզ, կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամեն ինչ, կրոնական պատերազմ կհայտարարենք, դյուրին պատերազմ այնպիսի մի ազգի դեմ, որ ոչ գենք ունի, ոչ զինվածություն, ոչ պաշտպան»:

Սա, իհարկե, մարդակերության, ցեղասպանության թուրքական ամբողջական մի ծրագիր էր:

Հայերին բնաջնջելիս թուրք բարբարոսների վարած քաղաքականությունը մեր ժողովրդին ստիպում է անցնել ազգային-ազատագրական պայքարի: Ստեղծվում են կուսակցություններ՝ իրենց գաղափարախոսություններով: Հայաջարդ քաղաքականությունը թուրքերի մոտ սկսվում է ավելի վաղ, քան հայկական կուսակցությունների ստեղծվելը: Ուրեմն, Մահարու տեսակետը, թե Թուրքիայում հայերի ոչնչացման պատճառը իրենք՝ հայերն են,

սխալ է և անընդունելի: Գրողը պետք է այնքան համարձակ լինի, որ նույնիսկ Եղեռնից 50 տարի հետո գրվելիք ու ասվելիք խոսքը չունենա վախի զգացում, այլ ճիշտ մեկնաբանի ողբերգության պատմությունը: Թշնամուն դիմադրելը և ինքնապաշտպանության համար զենք վերցնելը մեղք չէ: Ցավալի է նույնիսկ այն փաստը, որ մեր թե՛ պատմաբանները և թե՛ արձակագիրները մինչև օրս չեն կարողանում ստեղծել հայոց եղեռնի 30-ամյա (1894-1923) ճշմարիտ պատմությունը:

Գուրգեն Մահարին, չընդունելով իր քաղաքական սխալը, բոլորովին չի դիմադրում քննադատությանը: Նա ընթերցողին դիմում է միայն այն ճշմարտությամբ, որ ամեն մի ստեղծագործության պետք է մոտենալ իրեն իսկ բնորոշ օրենքներով և շեշտը դնել ամենակարևոր կետի վրա:

Գրքի «Վերջաբանը՝ որպես նախաբան» բաժնում Մահարին իր նպատակի մասին գրում է.

«Ոչ մի նոր մոլորակ հայրնաբերելու մարմանն չի տառապել այս վիպերգի հեղինակը և ոչ էլ ցանկացել է երկնքից աստղեր վար բերել: Ինչ հայրնագործության կամ սիրագործության մասին խոսք կարող է լինել, երբ մեր դպրությունն իր աղամանդե գանձարանում ունի անմահ քանաքեռցու «Վերքը», մեծ կարսեցու «Երկիր Նաիրին», պայծառանուն գորիսեցու՝ Ակսել Բակունցի «Կյորեար»: Այս կոթողների մոտ ի՞նչ նոր հոգևոր կառույց կարող է պարծենալ իր գոյությամբ: Ուրիշ է շարժառիթը, խանդը, որն ինչպես հայրնի է մարդկային թուլության արտահայտություններից մեկն է:

Եղել է մի քաղաք՝ բազմահազար բնակիչներով, որոնք սիրել են իրենց ծննդավայրի հողն ու ջուրը, հնամենի վանքերն ու հուշարձանները: Ու մի օր ավերվել է նաիրյան կախարդական ուրանը, իսկ նրա խաղաղասեր ժողովուրդը ցրվել է աշխարհով մեկ: Այս եմ ես երգել, երգել ի խորոց սրտի...»:

Միանգամայն հասկանալի է «երգի», «սրտի երգի» մահարիական հիշատակությունը: Վեպում գրողն ապրում է 1915-ի ամենաողբերգական շրջանը, երբ «անբոց ու անկրակ, իրենց ծխի մեջ խեղդվելով, այրվում է ադերսալոր այգեսրանը»: Կործանվող Վանի պատմությունը նկարագրելով՝ Մահարին ներկայացնում է գաղթի ճամփան բռնած վանեցիներին, հարազատ ուստանի դատարկումն ու ավերումը: Ներկայացնելով Վանի համայնաբանդակը, ինչպես վկայում է Սուրեն Աղաբաբյանը, Մահարին ասպարեզ է բերում բնակչության սոցիալական, դավանանքային, ազգային խնդիր-

րը: Ինչպես վկայում է ինքը՝ Մահարին, ականատեսի անմիջական տպավորության տակ նա վերարտադրում է իրական դեպքերն ու փաստերը, եղելությունները: Հայ արձակի պատմության մեջ, որպես եղեռնի թեմային վերաբերող գործ, «Այրվող այգեստանները» գեղարվեստական մի հուշարձան է, որն արժանի է բազմակողմանի և խոր հետազոտության:

Հայ ազգային մեծագույն աղետը, բարդ ու խճճված հանգույցները չէին կարող դուրս մնալ առաջադեմ մտածողների գրական գործունեությունից: Ինչպես արևմտահայ խորունկ և հեռատես մտածողները, այնպես էլ արևելահայ գործիչները դրանք կապում են ազգային կյանքի իրական անցուդարձի լուսաբանման հետ: Այդպիսիք էին Վահան Թորոպենցը, Համաստեղը, Հրաչյա Քոչարը, Վիլյամ Սարոյանը, Վահրամ Փափագյանը, Հմայակ Սիրասը, Ծերուն Թորգոմյանը:

Վիլյամ Սարոյանի գրվածքների մեջ զգալի տեղ է հատկացված հայերին, գլխավորապես օտարության մեջ ապրող տարագիր հայերի կյանքին ու ճակատագրին: Հայտնի է նրա «Մպիտակ ձիու ամառը» հուզիչ պատմվածքը: Հայի ճակատագրի մասին է խոսվում նաև «Հայն ու հայր» պատմվածքում: Գարեջրատան մշեցի դոնապանը եղեռնի ժամանակ կորցնում է իր բոլոր հարազատներին, զրկվում մտերիմներից, ծննդավայրից ու հայրենիքից: Սարոյանի հետ կեսգիշերին Ռոստով քաղաքի մի խուլ թաղամասում, գարեջրատանը նստած, խմում է, հայիտյում ու ծիծաղում աշխարհի վրա և անո՛ւշ-անո՛ւշ խոսում է, կարծես ոչինչ չի պատահել, կարծես թե նոր պիտի ապրի: Եվ հեղինակը, այս հասարակ տարագիր մարդու գորավոր ոգին և հարատևելու անսասան կամքը տեսնելով, պատմվածքի վերջում բացականչում է. *«Կա՞ աշխարհի մեջ որևէ ուժ, որ կարողանա ոչնչացնել այս ցեղը: Կարծում էի՜ն այդ ցեղը չպիտի ապրի: Բայց հիմա նրանցից երկուսը, քսան տարի հեղո մի գարեջրատան մեջ իրար հանդիպելով, խնդում ու խոսում են իրենց մայրենի լեզվով: Այդպիսի ուժ չկա»:*

«Մարդկային կատակերգության» մեջ Սարոյանը կերտում է նպարավաճառ Արայի անմոռանալի կերպարը՝ դարձյալ հայրենիքը կորցրած մի պանդուխտ հայ, որ շարունակ հիշում է իր հայրենիքը և զայրույթով հայիտյում այն մարդկանց, ովքեր այժմ ապրում են այստեղ:

- Շնե՛ր, - ասում է Արան՝ գետին թքելով և չարացած նայելով յոթ հազար մղոն հեռուն՝ իր կորցրած ծննդավայրի կողմը:

Հրաչյա Քոչարը, օժտված լինելով հայի ու քաղաքացու մարդկային բարձր գծերով, գործելով 1930-ական թվականների ծանր ու ցնցումներով լի

ժամանակներում, հավատարիմ է մնում իր դավանանքին ու ժողովրդին: Նա ստեղծում է ազգին արժանի գործեր՝ մխրճվելով նրա ազգային ակունքների, պատմական խորքերի ու անցյալի ողբերգությունների մեջ:

Չափազանց հետաքրքրական և արժեքավոր է Քոչարի ստեղծագործության վերջին շրջանը: Հայացքն ուղղելով անցյալին՝ նա կանգ է առնում հայ ժողովրդի պատմության ամենացավալի, ամենաողբերգական էջերից մեկի՝ Եղեռնի վրա: Նրա «Նահապետը» վիպակը դառնում է նոր երևույթ այդ թեմայով ստեղծված գործերի մեջ: Հանձին Նահապետի գրողը ստեղծում է այնպիսի կերպար, որն իր մեջ խտացնում է հայ ժողովրդի ողբերգական ժամանակների ճշմարիտ պատմությունը: Ճակատագրի ծանր հարվածներից բզկտված Նահապետի կյանքը դառնում է հայ ժողովրդի վերածննդի խորհրդանիշը: Վիպակը տաղանդավոր ռեժիսոր Հենրիկ Մալյանի էկրանավորումից հետո իր արժանի տեղն է գտնում հայ կինոյի պատմության մեջ՝ արժանանալով մեր ու արտասահմանյան հանդիսատեսի ջերմ ընդունելությանը: Հենրիկ Մալյանը կինոլեզվի գույներով և խոր հոգեբանությամբ ստեղծում է Եղեռնի արհավիրքներից փրկված, վերածնված հայ ժողովրդի կերպարը: Ֆիլմի հերոսը՝ Նահապետը, որպես իր ժողովրդի խորհրդանիշ, հրաշքով է փրկվում՝ մաքառելով մահի դեմ՝ հանուն կյանքի հաստատման ու գոյապահպանման:

1965-ին լույս է տեսնում Հրաչյա Քոչարի «Մալխոսակ գիրքը»: Այնտեղ տեղ գտած վիպակների մեջ եղեռնի թեմային է նվիրված նաև «Կարոտը»: Վիպակի հերոսների հոգին ու միտքը կապված է Երկրի կարոտի հետ և երկիր ասելով էլ մեռնում են հերոսները՝ հավատալով իրենց իղծերի իրականացմանը: Չէ՞ որ դա ազգի, ժողովրդի երազն է:

Վիպակի հերոսը՝ Առաքելը, հաճախ էր մտքում շշնջում.

- Վայ ընկեր Սյրալին, բալբի դու լի բո թախարից գլորիս, հորի՞ մեր երկիր թողեր իս թուրքին ...

Երկրին կարոտ Առաքելի սիրտը ցավում է, զգում է երկրի կանչը:

- Երդում կուրի Առաքելը, հոգի ունի Կալու, որ իր մտքով չէր անցել էն կողմ գնա: Կարոտում էր, վառվում, եփվում: Ամեն օր երսագին երկիրն էր Կուսնում, Արսածանու խշշոցն էր լսում, բայց մտքով չէր անցել, որ գնա: Հակառակի պես ամեն օր՝ արևածագից առաջ, երբ աչքերը բաց էր անում, արթնանում էր, երկրի սարերն էին կանգնում աչքերի առաջ, Գեղուկն էր երևում, էն ճանապարհը, որ Ալադաղի սարերի վրայով Կուսնում է երկիր: Քուն ու դադար չունեիր: Էնպեղ է ծնվել, էնպեղի սար ու ջոր, դաշտ ու ջուլն է չափել, չափ-

չիել հիսուն տարի ու էս տասնհինգ տարի է, որ գրկվել է երկրից: Տասնհինգ տարի է՝ հոր ու մոր գերեզմանը չի տեսնում, որ հիմա մամռուրել են, մոդեսներն են խաղում սուրբ քարերի վրա, Նպար սարի տակ Հովհաննու մեծ վանքը չի տեսնում, որ ժողովուրդին կոտորածից փրկել էր քանի, քանի անգամ, իրենց պաղ-պաղ աղբյուրների ջուրը չի խմում, ծաղկած լանջերում չի քնում, Արածանու զուլալ ալիքների մեջ չի լողանում ամառները: Պարտական մնա Առաքելը, թե սուր է ասում, կարոտում էր, բայց ոչ մի անգամ մտքով չէր անցել, որ տուն ու տեղ, կին ու որդի թողնի, գնա են կողմերը:

Ինչ անենք, որ մերն է, մերն է, բայց զազանի թաթն է դրված վրան ամերվել են, քանդվել են գյուղերը, պղծվել են վանքերը, դաշտերը երանի են դարձել ճամբեր խորտրոմ ու փշերոմ են ծածկել, արևի տակ հայերու ուկորներն են անթաղ մնացել մինչև հիմի: Առաքել գնա՝ ի՞նչ տեսնի, ի՞նչ անի: Ոչ գնալու միտք է եղել, ոչ խոսք ու գրույց, ոչ խորհուրդ ու խրատ տվող: Մի իրիկուն կուպակ առավ ու դաշտ գնաց: Լուսնյակ գիշեր էր, Մասիսը կշողար Առաքելի դիմաց, Գեղուկի ջուրը բացվել էր: Լեռները մուրեցել էին, մուրեցել, կանգնել էին Առաքելի դեմ-դիմաց: Լսում էր Արագի ալիքների ձայնը: Նայեց մի թմբի, նայեց, նայեց, մտածեց: Լուսնյակը նայում, ծիծաղում էր, ծղրիղները երգում էին: Արագը թեթև խշշում էր: Աշխարհը Առաքելի աչքերի միջից ներս էր մտնում, լցվում էր նրա հոգին, բոլոր ձայները հասնում էին նրա ականջներին: Ու մեկ էլ... Որ Առաքելը պատմի, չեք հավատա, դուք անհավատ եք: Վկա երկինքն ու գետին...

Հայոց եղեռնի մասին իր կարոտի ու ցավի խոսքն է ասում և գուցե բոլորից էլ ավելի՝ **Խաչիկ Դաշտենցը**: Նրա «Խողեղենն» ու «Ռանչպարների կանչը» իրականության հայտնությունն է մեր գրականության մեջ: Դաշտենցը մեզ է ժառանգում հայ ֆիդայիների հզոր կամքը, հրեղեն շունչը, մեծ հոգին ու առասպելական կերպարը: Հայրենիքի պաշտպանների մասին նա գրում է. «Քարանձավն էր նրանց տունը, ամենաշատը, ամենաշատը՝ գյուղեզրի մարագը կամ գոմը, խոտը կամ չյունն է նրանց անկողինը, փոթորիկն է նրանց սպիտակեղենը, քարն է նրանց բարձր, սեփական շունչն է նրանց կրակը, գեներն էր պատկաված, ուսապարկերում՝ մի կտոր կորեկ հաց կամ մի բուռ փոփինչ, ուսապարկում իրենց պարտանքացուն, հպարտ ճակարները թշնամու նեղ գնդակի դեմ բաց, զօր ու գիշեր լեռներում քայլում են կրակե շապիկներ հագած աստվածներ»:

Դաշտենցը մեզ այսպես է ներկայացնում հայրենիքի ինքնագոհ այրերին: Այսպիսի կյանքով կարող է ապրել միայն նա, ով իր ազատությունը չի

զատում հայրենիքի ազատությունից, ով իր փառքը չի բաժանում հայրենիքի փառքից, ով իր երջանկությունը չի բաժանում հայրենիքի երջանկությունից, ով իր սերը չի զատում հայրենիքի սիրուց... «Ասպետություն, ազատություն, հերոսություն, փառք և երջանկություն է անանչնական կյանքը: Եվ անասհման են անանչնական կյանքի սահմանները: Ֆիդայությունը՝ ասպետելու սկզբունք», – այս է սովորեցնում Խաչիկ Դաշտենցը:

Ինչպես «Խողեղանը», այնպես էլ «Ռանչպարների կանչը» նոր էջ են բացում հայրենական գրականության պատմության մեջ: Դա 1915-ի կոտորածներից փրկված մարդկանց վերածնության գեղարվեստական մարմնավորումն է: Կյանքի վերջին տարիներին Դաշտենցը վեպում ասպարեզ է հանում իր հոգու խռովքը, դավանանքն ու տարերքը, ներշնչանքն ու երազանքը:

«Առավոտյան գյուղում հայտարարեցին, թե հայ կանայք ու աղջիկները երկու օրվա ուրելիքով պետք է գնան Բիթլիս. գերմանացու թագավորի աղջիկը նկել է՝ ուզում է նրանց Կեսսել: Մի քանի փղաների հետ ինչ էլ աղջկա շոր հագցրին և խառնեցին Բիթլիս գնացող կանանց խմբին: Ճանապարհին մեր կապոցներն առան և մեզ փոքրիկ խմբերի բաժանելով՝ քշեցին դեպի Երիշտեր գյուղի գոմերն ու մարագները: Գոմերը փակեցին, զինված հսկիչներ դրեցին և երդիկից քարյուղ լցնելով՝ կրակ փչին: Ես, գոմի մտորում կանգնած, քերակս սեղմել էի պատին: Կրակն ու ծուխը փարածվեցին դեպի պատերը, և ես մեջքի կողմից ուժեղ փաթություն զգացի: Սաստիկ ճնշումից ելքի պատը փուլ եկավ, և ես դուրս փախա կրակի միջից:

Հերեյալ առավոտ Սլեման Օնթաշին ինչ և Գորդոնի ծառու լալ Հասոյին կարգադրեց, որ գնանք հայերի ցրված նախիրը ժողովենք, փուն բերենք: Գնացինք մինչև Մկրագոն գյուղի շորը: Հասուն գնաց դաշտի ուղղությամբ, իսկ ես իջա դեպի մեծ խանդակը: Չարմանքով փեսա դիակների կույտեր, խառնիխուռն իրար վրա լցված: Նրանց մեջ ճանաչեցի Տեր Բերոբին, մեկ թևը կտրած, կրծքի վրա դաշույնի մի քանի հարված:

Մարագների վրա ընկած էին մի քանի դիակներ: Լալ Հասուն սկսեց քարերով դրանց գլուխները ջախջախել, իսկ ես զբաղվեցի Վաղարշակ հորերբորս դիակը որոնելով: Մի բլուրի փակ գլխա այն մերկանդամ ու բաց չգված: Գորդոնի կողմը գնացի և հայերից թալանված մի հին կարպետ գտնելով՝ դիակը նրանով փաթաթեցի, հողի մի քանի կույտեր դրեցի վրան ու գյուղ վերադարձա: Քիչ հետո փեսա, որ վրան չգված կարպետը առել փարել էին, և դիակը բաց թողնված էր արևի փակ»:

«Ռ-անչպարների կանչը» հայ նորագույն գրականության թռիչքներից մեկն է՝ ազգային ու հայրենական խոր ապրումների մի հրաշալիք:

Դաշտենցի երկրային, նույն հող ու ջրից ծնված, նույն արմատներից ծլարձակած, նույն ոգին ու արյունը ժառանգած **Մուշեղ Գալշոյանը** ապրում ու գործում է ազգային նույն հերոսականությամբ, նվիրվում հոգու ամբողջ էությամբ և կյանքից հեռանում առասպելական պատմությամբ: Բայց նա խառնվում է այն հազարավոր անմահներին, որոնք դառնալու են հայ ժողովրդի ասքը: Մուշեղ Գալշոյանի պապերն ու հարազատները Մեծ եղեռնի զոհեր են: Փախեփախի ու գաղթի ժամանակ ճանապարհին սպանվում են թուրքերի կողմից: Եվ այն առասպելական, հեքիաթային հերոսությունը, որ դրսևորում է արձակագիրն իր ստեղծագործություններում, դառնում են նրա հոգու բոցը, ջերմությունն ու լույսը:

«Մարութա սարի ամպերը» ժողովածուն նրա անբասիր աշխատանքի լավագույն վկայությունն է: Գրողն իր գերագույն խորհուրդը իրականացնում է «Մուշ քաղաքի վերին թաղի տղան», «Մանփրե արքան» և «Կանչը» պատմվածքներում: Եղեռնի դառն ու դաժան ճշմարտությունը վերհիշելու լավագույն արտահայտությունն է «Չորի Միրոն» վիպակը, որտեղ գրողը չի կարողանում չասել այն, ինչ մտածում է Համիդի վիժվածք երիտթուրքերի արյունոտ գործունեության մասին: Չորի Միրոն, Խողեղանի, Ասատուրի, Նահապետի մոնումենտալ կերպարների շարունակողն է:

1960-ականների կեսերը ազգային, քաղաքական ու գրական նոր մտածելակերպի տարիներ էին, որ, դժբախտաբար, լիիրավ ընթացք չեն ստանում բռնապետության պատճառով: Այդ թվերին (1966-1967) է լույս տեսնում **Ստեփան Ալաջաջյանի** «Եղեգները չխոնարհվեցին» երկհատորյակը: Երիտասարդության և մասնավորապես ուսանողության ուրախությանը չափ չկար: Զննարկումներ, բանավեճեր շատ են լինում: Վեպը արժեքավոր և մնայուն հուշարձան է եղեռնի պատմության: Այն պատկերում է Չեյթունի հերոսամարտը: Եղեռնից հրաշքով փրկված բեկորներն ապաստան են գտնում Կիլիկիայում՝ հույս ունենալով, որ այստեղ կստեղծեն հայկական ինքնավար պետություն: Նրանք կրկին խաբվում են եվրոպական դիվանագետների կողմից: 1921-ին տեղի է ունենում հերոսական կռիվ: Պայքարելով թշնամու դեմ՝ հայերը ապաստան են գտնում Մերձավոր Արևելքի հյուրընկալ ժողովուրդների մոտ:

Ստեփան Ալաջաջյանի վեպն ազգային ողբերգությունների և նրա հետևանքով ձևավորված հերոսական պատմությունների հրաշալի տարեգ-

րություն է: «Միքայելը միայնակ էր աշխարհում, ծնողներ չունեի, սպանել էին: Քույր ու եղբայր չունեի, սպանել էին: Ազգական ու բարեկամ չունեի, սպանել էին: Սպանեցին իր աչքի առաջ՝ Ամանոսի սրորորում: Կիրճ էր փարագրվածներին լցրեցին կիրճը, թույլ փվին հանգստանալ: Ժանդարմները, զենքերն ուղղած հանգստացողների վրա, փակեցին կիրճի ելքը: Որտեղից որտեղ կիրճը լցվեցին յաթաղանավորները՝ կեռ թրերով զինված, սարսափելի, անմարդկային կերպարանքներ, և չորս ժամում կիրճը ամալացավ, լռեց: Ինքը թաքնվեց մի ժայռի փակ, հեղու սողաց կիրճն ի վեր, մի քիչ էլ սողաց ժայռերի միջով, թիերի արանքով, սողաց, սողաց և ծնկների վրա մնացին պալարներ: Յավից լաց եղավ, և թվաց, թե լաց է լինում կիրճում սպանված հազարավոր հարազատների համար: Արամի զինվորները նրան զենք փվին ու փարան իրենց հեղ: Եվ ուր էլ որ փարան, Միքայելն իրեն զգաց մեկավոր, որբացած»:

Երբ կարդում ես հայ ժողովրդի դառնագին կյանքի պատմության էջերը, շնչահեղձ ես լինում կյանքի անարդարությունից, այսբան նեղության ո՞նց դիմանա այս ժողովուրդը: Ու ցավով ուզում ես ճշալ. «Տե՛ր աստված, երբ պիտի վերականգնվի արդարությունը... »:

Արդարության, ազատության, սիրո համար իրենց կյանքն են նվիրել հայ գրողները: Նրանցից է **Ավետիս Ահարոնյանը**, որի համար ցեղասպանության դառնությունը դառնում է հայ ազատագրական պայքարի հոգի:

Ավետիս Ահարոնյանի «Ազատության ճանապարհին» ժողովածուն կարևոր տեղ է գրավում հայ գրականության անդաստանում: Նրանում հայոց վիշտն է, ֆիդայիների պայքարը բռնակալության դեմ: Արդեն մեկ դար է անցել Ահարոնյանի նկարագրած պայքարի օրերից, սակայն տակավին շարունակվում է հայերի պայքարը: Հուսանք, որ ամեն մի պայքար նոր հորիզոն կբացի, և ամեն մի նոր հորիզոն՝ նոր արշալույս:

«Հարզանք քեզ, նահապտակ ժողովուրդ: Ո՞վ չափեց երբևիցե քո փառապանքի անդունդները, ո՞ր սզավոր կարապր եկավ յուղելու հոգուդ խորունկ ցավի լճերը, ուր եռում են պղպոր ալիքներն՝ անեծքի մրմունջով: Ինքդ միայն գիտես անօրինակ ցավիդ մեծությունը, ինքդ մեկակ ես վարում քո անդեկ ու ալեծուփ նավը դեպի անծանոթ հորիզոններ, ով դու ծովերի մուլար, փանջված ճամփորդ, մրրիկների հավիտենական ուղեկից, հարզանք քեզ... »:

Գրողի «Ազատության ճանապարհին» պատմվածքների ժողովածուն հայոց պատմության ու հայ երիտասարդության պայքարի հարատևության

կոչ է, հրովարտակ՝ ուղղված դաժան, բայց հերոսական, հպարտ կյանքով ապրող մարդկանց՝ նրանց, ովքեր հայոց սև կյանքին նոր փայլ են տալիս:

«Դուք էիք, որ Ազատության փայտակոյուղու ճանապարհին ցավոյր ու բուսորի մշուշի մեջ ամենից մեր գեղեցիկ, ամենից խիզախ երազները հյուսեցիք:

Դուք էիք, որ ընթացողության ժայռերի բարձրությունից գահավեժ՝ ներվեցիք ժողովրդի փառապանքի մեծ ծովը, որ ուռած ու մրրկածուսի եռում էր ձեր ուրբերի փակ:

Դուք էիք, որ բռնության ու արհավիրքի խեղդող խավարի մեջ ձեր բոցավառ աչքերի փայլով մոլորված ու լքված հոգիների ուղիները լուսավորեցիք:

Փա՛ռք ձեզ:

Հոյակապ բախումների ու հսկայական պայքարի մեջ ձեր բաց ու գունաւոր ճակատներին կախված մնացին բոլոր զրկվածների, բոլոր դժբախտների հուսացող հայացքները:

Ձեր երկաթե բազուկների գոռ հարվածները շարիքի խոլ կամարները դղրդեցին և փանջված հոգիների մեջ ազատության հույզեր փոթորկեցին:

Եվ այժմ, ո՛վ հոյակապ, ուխտած հսկաներ, Ազատության խորանի առաջ ծնրադիր՝ ձեզ են նվիրում ձեր արյունով ցողված այս կարմիր երազները:

Եվ ձեզ, ո՛վ անանուն ու կորած մարտիկներ, լուռ անպառնկերում և մռայլ չորերում ընկած հերոսներ, որոնց վերջին հառաչանքները մրրկիկների հետ են փարվում, որոնց ոսկորները հողմերը լիզում են հեծեծալով:

Ձեզ, բոլորիդ, պաշտամունքի և հիացմունքի արցունքով և ձեզնով այն վսեմ, այն արյունալի Գաղափարին, որին այնքան սերունդներ փարել են խանդաղափարանքով և որ ահա ձեր շնորհիվ փայլվում է մեր մռայլ հորիզոնի վրա:

Փա՛ռք ձեզ»:

Յեղասպանության և երիտթուրքերի ամենաբարբարոս ծրագիրը՝ Հայաստանն առանց հայերի իրագործվում է Արևմտյան Հայաստանում: Հայոց Եղեռնը և նրա հետ առնչվող խնդիրները իրենց տեղն են գտնում ոչ միայն գրողների, այլև մյուս արվեստագետների ու մշակույթի գործիչների գրական գործերում և հիշողություններում: Այս միտքը վերաբերում է արվեստի բոլոր ճյուղերին՝ երաժշտությանը, գեղանկարչությանը, քանդակագործությանը, ճարտարապետությանը, պարարվեստին ու ժողովրդական բանահյուսությանը, ինչպես և թատրոնին, բեմարվեստին առհասարակ:

Շատ է խոսվել ու գրվել **Վահրամ Փափազյան** արտիստի արվեստի, Փափազյան գրողի գրչի մասին: Սակայն ոչ ոք նրա ստեղծագործությունը քննության չի առել հայոց ցեղասպանության առնչությամբ: Մինչդեռ հայ ժողովրդի ապրած մեծ ողբերգությունը՝ եղեռնը՝ իր ահավոր հետևանքներով, անջնջելի կնիք է դրել նրա գրական ստեղծագործության վրա: Հատկապես ցնցող պատկերներ կան Վահրամ Փափազյանի «Հետադարձ հայացք» հուշերի գրքում: Ահա դրանցից մեկը. «Այդ ժամանակներն էր, որ պարսահեց մի դեպք, որ թեև լավ չհասկացա, սակայն խորը փրկավորություն թողեց վրաս: Եվ ահա մի օր, երբ դասարանում նստած՝ լուռ, զուսպ լսում էինք պարոն Տրդատին, որն ավանդում էր մեզ թվարանության չորս գործող օրենքները, բարձրացավ մի անսովոր իրարանցում: Տեսուչ վարդապետի և Գարեգին վարժապետի կարգադրությամբ անմիջապես փակվեցին դպրոցի բոլոր պարուհիները, և դարպասի ծանրափեղկ դռների նիզերը դրվեցին: Մեր հաղթանդամ մշեցի Գրիգորը, մի մեծ մահակով զինված, կանգնեց մուրքի դռան հեյլեր, իսկ փարեց աշակերպներից երկուսը բարձրացրին դպրոցի փանիքին իրալական պերական դրոշը: Օդար պերության դրոշը պահպանեց դպրոցը և հարյուրից ավելի դպրոցականների կյանքը: Ջարդարար խուժանը հեռացավ՝ ավարով բեռնավորված՝ իր հեյլե թողնելով արյունի, առևանգման ու խուժողու մահվան զարհուրելի փեսարանը:

1896-ի ջարդն էր այդ:

Առաջին անգամ իմ կյանքում զգացի, թե մարդ կարող է մարդուն սպանել...

Օրը մթնում էր. աշակերպներին չէին թողնում դպրոցից մենակ դուրս գալ: Վախեցած ծնողները մեկ-մեկ գալիս էին ու փակում իրենց զավակներին: Հայրս նույնպես եկավ և արդեն մութ փողոցներով, ինչ պիևդ գրկած, շրտապ հասցրեց մեծ հորս փունը, որը մութ էր դպրոցին ավելի, քան մեր քնակարանը, ուր արդեն հավաքվել էին մայրս, քույրերս և եղբայրս:

Լույսերը մարած՝ մթնում նստել էինք բոլորս՝ ընդարձակ քարաշեն փան վերնահարկի մի սենյակում:

Փողոցից անցնող արյունաժարավ խուժանի վայրենի աղաղակները մեկ-մեկ պարոտում էին գիշերվա լռությունը: Հեռավոր հունական եկեղեցու ահագանգր ողբում էր անընդհար և Ոսկեղջյուրի ափերի հայաշար թաղերից մինչև մեզ էր հասնում կոտորածի խուլ թնյունը:

Օ՛հ, հեռավոր աղիողորմ այդ ճայնը, գիշերվա մթի միջից... ոչ կմոռանամ, ոչ էլ կներեմ: Եվ անգիրակից, վայրենի խուժանի արարքը չէ, որ թե-

լադրում է ինչ այս փողերը, այլ նրա զինող ու զրգռող, ամբարտապան, մարդասպան, բռնակալ ինքնակալությունը, առավել ևս այդ ինքնակալության թև ու թիկունք եղող և իրենց քաղաքականության ռաիվիրա հորջորջող թագակիրները:

Ներկայացողը պղտոր ու վշտահար հայացք ունի, ջեռքերը կոպիտ են, մաշկը կոշտ, դեմքը՝ նախշված մուգ բծերով: Յոթանասունն անց մի ժերունի է նա, որն իրեն ուղղված խոսքն անպայման կրկնել է փալխս՝ միաժամանակ շրկելով ալեխառն մազերը:

Ծերունին առողջ է, գրադված է փնային մանր-մունր գործերով: Սակայն շուր-շուր հիվանդանում է: Այդ ժամանակ է, որ նրա անկողնու վրա թափթփված են լինում թղթի կտորտանքներ: Հիվանդ ծերունին գրում է, ջնջում, նորից ջնջում, ասյա վերմակը գլխին էր քաշում ու... արտասվում:

... Ընթերցող, թերևս բոլորովին էլ հաճելի չէ նման պատկերի նայելը: Սակայն խուսափելն անհնարին է: Չէ՞ որ կյանքի մայրամուտին ուզում է անդառնալի կորստից փրկել «Երկիր» ծննդավայրի հիշատակներից մի փշրանք կազմող իր կյանքի «երկրայինը»: «Երկիր», որ դարեր-դարեր եղել էր, կար ու հիմա չկա... »:

«Թուրքիայի առաջնորդները գայլեր էին՝ ոչխարի մորթի հագած, և հարմար առիթի էին սպասում՝ անչնարտոր լինելու իրենց մարդակույր բնագոյին», - գրում է Վ. Փափագյանը:

1922 թ. Փափագյանը վերջին անգամ հայտնվում է Պոլսում, և սրտի անհուն կսկիծով տեսնում ցեղասպանության հետևանքները: «Հայ ժողովուրդը հալածանքից ու բռնի փեղահանությունից այնքան էր հյուծվել, որ դարձել էր գրեթե անշնչացած մի դիակ: Հայ գաղութի նախկին մտավորականությունից այժմ ոչ ոք կենդանի չէր, փառահեղ անուններ, որոնցով հպարտ էր մեր ժողովուրդը, անթաղ կմախքներ էին հիմա՝ Միջագետքի հեռավոր անապատներում կամ Եփրատի պղտոր ջրերի երեսին ծփացող նեխած դիակներ», - գրում է Փափագյանը:

«Իմ երկրային ուղին» վեպի հեղինակը՝ **Սերիներն**, ընթերցողին ներկայանում է ինքնակենսագրական մի վեպով, որը 1894-96 թվականներից մինչև 1915-ը ձգվող արյունալի մաքառումների հետևանքով ազգային-ազատագրական պայքարում հայ զավակներին ծրագրված ոչնչացման ենթարկելու և աշխարհով մեկ ցրելու մասին է: Ամայացած Արևմտյան Հայաստանը՝ հայ ժողովրդի հազարամյա հայրենիք-օրրանը, մնաց հիշողություն ապրողների մեջ: Եղեռնը վերապրողներից մեկն էլ Սերիներն էր՝ Վանի

նահանգի տասնվեց գավառներից մեկի՝ Արճակի երբեմնի բնակիչը:

«Աշխարհագրական քարտեզի վրա՝ Վանա լճից արևելք, գծագրված է մի փոքրիկ լճակ, դիմացը գրված՝ Արճակ, իսկ լճափին մի կլոր կեպ՝ նույնպես գրված Արճակ: Ահա այդ կլոր կեպը իմ ծննդավայրն է...»

- Ասում են, որ ներկայում Թուրքիայի քարտեզագիրները Արճակի լճակի դիմաց կլոր կեպ չեն դնում...» Դառնացած ասում է Սերիներն և հայտարարում՝ «Հայ են ճակատագրով: Դառն ու անարդար է եղել այդ ճակատագրի...»: Սերիներն վախճանվում է 1971թ-ին, յոթանասունվեց տարեկանում: Նրան բախտ չի վիճակվում իր երկու բարձրարժեք գործերը՝ «Արճակ» ազգագրական բանահյուսական աշխատությունը և «Իմ երկրային ուղին» վեպը, տեսնել հրատարակված: Հեղինակի մահից տասներկու տարի անց՝ 1983-ին, լույս է տեսնում նրա այս վեպը:

Ընթեցողը սիրում է գիրքը ու ծանոթանում նրա հերոսուհու՝ Հեղինեի՝ զիզգազներով անցած ճակատագրին, «Երկրի» մարդկանց նահապետական կյանքին, նրանց պայքարող ոգուն ու տառապանքներին:

«Արևուր, պայծառ օր էր :

Ինչ գրկած ու իմ եղբայր Արշակի ձեռքը բռնած՝ Վանի երկար ու ծառայապար փողոցով վազում է հեացող մայրիկը: Մեր կողքով վազում են Հաջի աղան ու Սառա խաթունը՝ մի-մի կապոց շալակների: Ես երկու ձեռքով կախ եմ ընկել մայրիկի պարսնոցից և փեսնում եմ նրա աչքերից թափվող արտասուքը:

Վազում է մայրիկն ինչ գրկած, վազում է Արշակը՝ մայրիկի փեշից բռնած, վազում են Հաջի աղան ու Սառա խաթունը՝ կապոցները շալակների:

...Մեծ, շար մեծ բակ է և այնքա՛ն-այնքա՛ն բազմություն: Անժանոթ երեխաներ, կանայք, փղամարդիկ: Բազմության միջով առաջ է շարժվում մի փոշեթաթախ ու կորացած կին՝ շալակին մի փղամարդ: Տղամարդու երկար ոտքերը կախ են ընկած գեղնին, գլուխը ծոված է մի կողմի վրա, իսկ թիկունքից բարակ արյուն է ժրոում: Նրա սղերը Հաջի աղայի սղերի նման են»:

Գրքի հերոսուհու ամենավաղ հիշողություններում, ինչպես տեսնում եք, իրենց անդրադարձն են գտնում Վանի, Արճակի 1896 թվականի ջարդերը: Դրանից հետո Վանի Արարուց դպրոցի հարգված Մովսես վարժապետի գուրգուրված դատրիկը պետք է կորցնի մորը, զգա խորթ լինելու դառնությունը: Իսկ վեց տարին հազիվ բոլորած՝ գրկվի նաև հորից: Ազգային-ազա-

տագրական պայքարի ճանապարհին նահատակվողները անթիվ-անհամար էին, միայն Մովսեսը չէր, ուստի և շատ-շատ էին այրիներն ու որբուկները:

Թեև իր ժողովրդի անարդար ճակատագիրը դառնացնում է Սերինեի հոգին, բայց նրանից չի խլում բարությունն ու երազայնությունը: Գրքի էջերում մի զգալի մեղմություն կա, քնքշանք՝ երկրի ու նրա մարդկանց հանդեպ: Ակամայից հիշում ես կարոտի գրականության նահապետներին՝ Համաստեղին ու Մնձուրուն:

Այո՛, մեր ժողովրդի՝ դարասկզբի մեծ ողբերգությունն արտացոլող հայրենի գրական ստեղծագործությունների շարքում իր արժանի տեղն ունի Սերինեի «Իմ երկրային ուղին» վեպը: Նա մեզ ավանդում է լավատեսություն, բայց և պահանջում է՝ երբեք չմոռանալ կորուստները:

Սերինեի մասին խոսքն ավարտելուց առաջ ուզում ենք հույս հայտնել, որ «Իմ երկրային ուղին», որ ժամանակի հրամայականով է կրճատվել, կտեսնենք վերահրատարակված ամբողջությամբ:

Իհարկե, անհնար է չանդրադառնալ **Անրի Վերնոյի** «Մայրիկ» վեպին: Կարծում ենք՝ հայկական ցեղասպանության 90-ամյա տարելիցի նախօրեին այս վեպի մասին խոսելն անհրաժեշտ է ու տեղին: Ինչո՞վ է այն ուշագրավ: Ինքնակենսագրական այս վեպը հուզիչ մի գիրք է, ուր պատմվում է ճակատագրի դառն իրողությամբ Ֆրանսիայում հայտնված մի հայ ընտանիքի մասին: 1915-ի հայոց Մեծ եղեռնից հետո տասնյակ հազարավոր ընտանիքներ ապաստան են գտնում նաև Ֆրանսիայում: Գթասիրտ, ազատասեր ու մեծահոգի ֆրանսիացիները վաղուց գիտեին հայերին: Նրանք բարձր են գնահատում աշխատասեր, բարեպաշտ, քրիստոնյա հայերին և թուրքական յաթաղանից փրկվածներին ապաստան տալիս իրենց հողում:

Հասուն տարիքում գրողը հիշում է իր մանկությունն ու ծնողների պատմությունը և տխուր մտքերի մեջ է ընկնում. *«Այդ երեկո հայրս պատմությունն սկսեց «Կռունկ, մեր աշխարհեն խաբրիկ մը չունիս» բանաստեղծությամբ: Սա կարուրի երգ է: Հայրենաշունչ բանաստեղծության խոսքերը, որ հայրս պատմում էր, ինչ թվում էին առասպելներ:*

... Աշնան պատկերը:

Պանդուխտն, աչքն երկինք հառած, նայում է կռունկներին, որոնք, լայն թևերը քացած, չվում են հեռավոր երկրներ.

*Թողել եմ ու եկել մուլքերս ու այգիս,
Կոունկ, պահ մը կացի՛ր՝ շայնիկդ ի հոգիս,
Թողիկ մը գրեմ, քեզ փամ ամանաթ,
Տարեալ հասուցիս զայդ իմ սիրելյաց:*

Բայց կոունկը պատասխան չի փալիս, ականջ դնելով պանդուխտի ողբին, թևին փալով՝ թռչում է, գնում: Հանկարծ մի կոունկ անջափովում է երամից և սքանչելի ճախրանքով իջնում պանդուխտի մոտ, կեռ կրուցով վերցնում է նրա թղթիկը ու խոսարանում՝ զարնանը նրան լուր կբերե իր հեռավոր երկրից:

Հակառակ իմ զայվածությանը՝ վերջին քառյակը լսելիս արցունքները խեղդեցին ինձ, ողորեցին դեմքս:

Հայրս գիրկն առավ ինձ.

-Մանչս, դու լավ չհասկացար, կոունկը իջավ, պատասխանեց պանդուխտի կանչին... »:

Անրի Վերնոյի մանկության հիշողություններն ու պատկերները հայ քրիստոնյայի դառը ճակատագրի ցնցող նկարագրություններ են: Ահա նշանավոր արվեստագետի մի այլ պատմություն.

«Ես մկրտվել եմ հայկական առաքելական եկեղեցում: Եվ հպարտ եմ իմ արմարների խորությամբ:

Հայերը քրիստոնեություն են ընդունել պերսականորեն 301թ-ին՝ Հռոմից 13 փարի և Եվրոպայից 5 դար առաջ: Հազարավոր մարտիրոսների նահապակության վայրերում՝ հեթանոսական փանարների ավերակների վրա, Գրիգոր Լուսավորչը կառուցեց աշխարհի առաջին քրիստոնեական փանարը, որի անունը հնչում է ալեխոփայի նման՝ «Էջմածին», այսինքն՝ «իջավ ասրժոռ որդին... »:

Ահա այս եկեղեցում 4-րդ դարի վերջին Սահակ Պարթև կաթողիկոսը և Մեսրոպ անունով մի վանական սրեղծում են հայոց սքանչելի այբուբենը՝ երեսունվեց գրերով, որոնք կարդացվում են չափից աջ, ինչպես արևմուտքում: Այսպես, հազարամյա այս լեզուն, որ հին հայերը սրիպված են եղել արրահայրել հունարեն, լարիներեն, ասորերեն փառերով, չեռք է բերում սեփական գրեր: Թարգմանվում են Հին կրակարանը, շարադրվում սուրբ ծեսերը, պատարագն ու սաղմոսները, և ահա դեպի իր ոսկեդարն է ընթանում հայկական հոյակապ գրականությունը:

Այդ ժամանակից ի վեր ոչ մի բան չի կարողացել հային բաժանել իր եկեղեցուց, հավարից, արվեստներից ու մշակույթից:

Ահա այդպիսի համեստագույն եկեղեցում քահանան, ինչ պահելով մկրտության ամազանի վրա, երեք անգամ փվել է նույն հարցը.

- Երեխան ի՞նչ է ուզում:

Պատասխանել են.

- Հավատ, հույս, մկրտություն»:

Վեպում հեղինակը պատկերում է իր կյանքի տարբեր շրջանների դեպքերն ու դեմքերը, նախնիների առնական, բայց հեզ ու հանդուրժող բնավորությունը: Նա հիշում է իր ծննդավայրը, դիմում երեկվա ու այսօրվա թուրք դահիճներին, հավաստում, որ մենք ողջ ենք և երբեք չենք մոռանա մեկուկես միլիոն հայերի ցեղասպանությունը: Այո՛, կան թվեր, դեպքեր, որ ընդմիշտ դրոշմվում են մեր հիշողության մեջ:

Նորից թերթենք գրքի էջերը. «Մի օր թուրք միևնույնները գրել են. «1915, ապրիլի 24. Առանց խորության կանանց, երեխաներին, ծերերին... անհրաժեշտ է վերջ դնել նրանց գոյությանը»:

Ստորագրված՝ Թախաթ փաշա,

Ներքին գործոց միևնույն»:

Այս վավերագրերը Թուրքիայի ամոթանքն են: Հիշում են երեկոներից մեկը՝ մի սրահում, որի բնույթ ծածկված էր սև պատարաններով, հավաքվել էր թուրքական յաթաղանից փրկված մուր երկու հազար մարդ: Հիշելու ինչքան բան ունեին: Հայրենիք էին կորցրել, հարազատներ, հայրենի տուն:

Մարդիկ խոսում էին աշխարհի կործանման պատմությունից. մի ժողովուրդ խաղաղ ապրում էր իր նախնիների հազարամյա երկրում, մի մոլեռանդ, վայրենի հորդա խուժում է հայոց հնամյա բնակավայրերը, քաղաքները, գյուղերը և նրա ծաղկածիծաղ դաշտավայրերը: Իրենից հեյրո թողնում է մահվան ծանր լուծություն, մոխրացած դաշտեր, ծխացող ավերակներ, հրկիզված եկեղեցիներ», - այսպես է գրողը նկարագրում այն ողբերգական պատմությունները, որոնք ծնողների, ազգակիցների ճշմարիտ վկայություններն են:

Կինոռեժիսոր-արձակագիրը սրտի ցավով ու խոր տազնապով գրում է. «Արևելքից կհիշվի Արդույ Համիդը՝ «Կարմիր սուլթան» մականունով, ի հիշարակ արյան, որն այդպես էլ նա ժամանակ չունեցավ չորացնելու ջերթերի վրա: Նա սկսեց Եդեռնի արյունուր գործը՝ սրի քաշելով երեք հարյուր հազար անմեղ հայերի:

Արդույ Համիդին գահընկեց են անում և խոստանում մի նոր Թուրքիա՝ եղբայրական, խաղաղասիրական, բարգավաճ: Այնուհետև 1905-ի գարնանային մի առավոտ երկրի նոր տերերը «Թուրքիան միայն թուրքերին» կոչով Կիլիկիայում մորթում են 30 հազար հոգի:

Մոլեռանդ թուրք մուսուլմաններն իրենց բարբարոսական գործողությունները շարունակում են 1915-ին՝ սկսելով հայերի բնաջնջման հրեշավոր ծրագիրը: Թալեսթն իր ճառերում եզրակացնում է՝ «...Ինչ վերաբերում է հային, ապա այն բնակավայրը, որտեղ ապրել է, այլևս չի ճանաչի նրան, և թուրքը կժառանգի նրա բարիքներն ու երկիրը ...»:

Տեղասպանությունը «պետական ծառայության» որոշմամբ իրագործվում է նախապես կշռադատված, ծրագրված, նախորդ սպանդերում փորձարկված պլանով: Անդրադառնալով այդ իրողություններին՝ Անրի Վերնոյը ոչ միայն գրողի, այլև պատմաբանի խոր իմացությամբ է նկարագրում այդ պատկերները: Եվ որպեսզի կանխելին դիմադրության կամ ինքնապաշտպանության որևէ շարժում, տասնութից մինչև քառասուն տարեկան բոլոր տղամարդկանց նախ կանչեցին թուրքական բանակ, ապա զինաթափ արեցին և մեկուսացրին աշխատանքային ճամբարներում, հետո գնդակահարեցին հարյուր հոգիանոց խմբերով:

Երբ մնում են միայն կանայք, երեխաներն ու ծերունիները, հռչակվում է դեկրետ՝ «Փրկության նպատակով» բնակչության տեղահանման մասին դեպի Միջագետք՝ օսմանյան կայսրության ամենադաժան վայրը: Օտարերկրյա դեսպանների, հյուպատոսների, նաև Թուրքիայի դաշնակից Գերմանիայի ներկայացուցիչների վկայությունները, պատմաբանների կամ Կարմիր խաչի հասարակ հիվանդապահների պատմածները ստիպում են սոսկումից փշաքաղվել, ի տես սովալլուկ, ծարավ, գզգզված մարդկային երկար շարանի, որն առաջ էր շարժվում հեծյալ ոստիկանների մտրակի շառաշյունի տակ:

«Գալիս էին... տասնյակ հազարներով գալիս էին Չեյթունից, Մոկսից, Ուրֆայից, Դեր Չորից... Այս քայլող կմախքները վայր էին ընկնում ճանապարհի եզրերին, և նրանց անմիջապես պարտադրում էին որոնացող շները, որոնք սպասում էին նրանց վերջին հառաչին»,- գրում է հեղինակը:

Իսկ կենդանի մնացած վերջին ուրվականները՝ դալուկ, փոս ընկած այտերով, հիվանդություններից հյուծված, հասնում էին անապատ:

Մի զինվորական բժիշկ, տեսնելով նրանց, բացականչել է. «Ես փախչում եմ՝ այսքան տառապանքներ ամոքելու անգործությունից հուսահատ»:

Անրի Վերնոյի վեպը դուրս է գալիս ինքնակենսագրականի շրջանակներից ու դառնում հայ ժողովրդի ազգային պատմության ու նրա դեմ գործած ոճրագործությունների ճշմարիտ վկայություն, որն անարգանքի սյունին է գամում թուրք ցեղասպանների ծրագրած ոճիրը:

«Մայրիկ» վեպը, որը դառնում է համանուն ֆիլմի սցենար, իրականացնում է հեղինակը՝ Անրի Վերնոյը: Ֆիլմը ԱՄՆ-ի և Ֆրանսիայի համատեղ արտադրություն է՝ բաղկացած վեց մասից:

«Եթե թուրքի անուն ունես, այս ֆիլմից հետո պետք է անունդ փոխես: Երբ այս խոսքերն ասում են թուրքերին, միշտ աղմկում են», - ասում է Անրի Վերնոյը: «Մայրիկ» վեպը հայոց ցեղասպանության պատմության թարմ վավերագրերից է:

Եղեռնի թեմային անդրադարձել են 20-րդ դարի հայ և օտար ազգի բազմաթիվ հեղինակներ: Նրանց չափաժոռ և արձակ ստեղծագործություններում, գիտական ուսումնասիրություններում և հրապարակախոսական հոդվածներում շոշափված բազմաթիվ փաստեր ու լուսանկարներ հաստատում են այն ճշմարտությունը, որ թուրք ջարդարարները չտեսնված ողբերգություն բերեցին հայ ժողովրդին՝ մասսայական կոտորածների ենթարկելով Արևմտյան Հայաստանի ողջ բնակչությանը: Այն աննախադեպ սպանող, որ սարքում են հայ քրիստոնյա ժողովրդի նկատմամբ, հազիվ թե որևէ գրիչ կարողանա անկորուստ ներկայացնել: Քրիստոսի Գողգոթան, Դանթեի դժոխքը դալկանում են հայության ապրած ողբերգության՝ մինչ աստծո գահը բարձրացող կրակե լեզուների ցուլերից: Պահպանվում են հազարավոր լուսանկարներ, որոնց հնարավոր չէ մայել անսարսուռ: Անցել է ինը տասնամյակ, սակայն հայը չի կարող մոռանալ ո՛չ Եփրատի ջրերի ճամփան փակող անհամար դիակները, ո՛չ անդնդախոր կիրճերի հատակը նետված մայրերի ու երեխաների գրկախառն մարմինները, ո՛չ հայ մարդկանց զանգերից բարձրացած բուրգերը, ո՛չ անապատների այրող, շեկ ավազների վրայով անցնող ուրվականների քարավանները, ո՛չ իսկ քարերով ջախջախված իմաստուն գլուխներից դուրս թափված ուղեղների ճապաղիքը սալաքարերի վրա ...

Այս սարսափելի սպանդի ձևը անժանոթ էր անգամ միջնադարյան ինկվիզիցիային: Մարդկության հազարամյա պատմության մեջ նախադեպը չունեցող մի նախճիր, որը աշխարհի լուսավոր մարդիկ ընկալում ու բնութագրում են իբրև դավաճանություն ու ոճրագործություն մարդկության դեմ:

Եվ այսօր զանգվածային կոտորածներից փրկված, վերապրող մարդիկ՝ երեկվա որբերը, նրանց զավակներն ու թոռները, անգուսպ զայրույթով հիշում ու պահանջում են՝

– **Արդարություն:**

ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿ
ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԳՈՐԾԻՉՆԵՐ

Եղեռն իրականացնող թուրք արյունարբու գործիչները՝
Էնվերը, Թալեաթը և այլոք, գործի դնելով իրենց հրեշա-
վոր ծրագիրը, սրի մատնեցին հայ բնակչությանը:

Թուրքական կառավարության նպատակն էր՝ գլխա-
տել ժողովրդին, այսինքն՝ սրի քաշել ողջ հայ մտավորա-
կանությանը:

1915 թ. ապրիլի 24-ի գիշերը բանտարկվում են 210
մտավորական, որոնց թվում Սիամանթոն, Վարուժանը,
Չոհրապը, Կոմիտասը, Ռուբեն Սևակը, Թլկատինցին,
Օտյանը, Երովսանը, Չարդարյանը, Տիգրան Չեոկյուրյա-
նը, Մելքոն Կյուրճյանը: Նշվածներից հրաշքով փրկվում է
միայն Օտյանը:

Դադարեց արևմտահայ գրականությունը, երգը,
երաժշտությունը, խոսքը, միտքը:

Խորտակվեցին հայ բանաստեղծների, հրապարակա-
խոսների, արվեստագետների հոգու, մտքի, ուժի երազ-
ները:



Գրիգոր Չոհրապ
(1861-1915)

Գրիգոր Չոհրապը հայ ազգի պարծանքն է: Ենթոջ 30 տարի նա եղել է պոլսահայ մտավորականության նշանավոր անհատներից ու Օսմանյան խորհրդարանի անդամներից մեկը: Չոհրապը ծնվել է 1861թ. Կ.Պոլսի Պեշկեթաշ թաղամասում: Նախնական կրթությունը ստացել է Մաքրունյան վարժարանում: Սովորել է նաև թարգմանչաց դպրոցում: Այստեղ սովորելու տարիներին նա գրում է փոքրիկ ուտանավորներ:

Նրա ուսուցիչները՝ Թ. Թերզյանը, Ռ. Պերպերյանը, Հ. Եիշմանյանը, նկատում են նրա տաղանդը: 1876 թ. Չոհրապը ընդունվում է Թուրքիայում գործող միակ բարձրագույն վարժարանը: 1880-ին աշխատում է իրավաբանական գրասենյակում՝ որպես գրագիր: 1881-ին ընդունվում է «Հուգուգի» իրավաբանական վարժարան: Հետագայում Էտրինե թաղաքում քննություն է հանձնում և ստանում փաստաբան-իրավաբանի վկայական: 1878 թ. աշխատում է «Լրագիր» օրաթերթում, դառնում աչքի ընկնող հրապարակագիրներից մեկը:

Գրականությանը համատեղ նա զբաղվում է ազգային, հայրենասիրական գործունեությամբ:

1887 թ. տպագրում է իր անդրանիկ վեպը՝ «Անհետացած սերունդ մը» վերնագրով: Գրողի գրական գործունեությունը բուռն վերելք է ապրում 1890-ականների սկզբներին: Իբրև գրող և հրապարակախոս, հասարակա-

կան գործիչ՝ նա ճանաչվում է 1898-ից հետո: 1894-96 թվականների մոճավանջային տարիներին նա գրեց իր լավագույն ստեղծագործությունները: 1888-89 թվականներին «Մասիս» և «Արևելք» հանդեսներում տպագրում է մի քանի նորավեպեր:

Նա «Այրին» նորավեպում անդրադառնում է հայ երիտասարդների ճակատագրին, որոնք թողնում են հայրական տունը, ընտանիքը և մեկնում մայրաքաղաք՝ Պոլիս: Այս նորավեպի գլխավոր խնդիրը պանդխտության գաղափարն է: Նա ցույց է տալիս սոցիալական երևույթի ծանր հետևանքները, որը դառնում է պանդխտության պատճառ:

Չոհրապը ճշմարիտ և նորարար արվեստագետ է:

Նրա «Ճիտին պարտքը» հայ նորավեպի գլուխգործոցներից է: 1880-ական թվականներին նա գրում է մի քանի սքանչելի նորավեպեր, ուր քննարկում է կանացի մի շարք խնդիրներ («Արմենիսան», «Փոթորիկը», «Թեֆարիկը», «Կատակը», «Ճոկոն», «Դիմակը», «Տալիան» և այլն): Առաջին անգամ հայ գրականության մեջ կինը գտնում է իր գեղագետ-մեկնաբանին: 1889-ին «Մասիսում» հրատարակած «Փոթորիկը» ուղղակիորեն ցնցեց պոլսահայ հասարակությանը:

«Արմենիսա» և «Թեֆարիկ» նորավեպերում Չոհրապը դասական արվեստին հատուկ ճարտարապետական մտահղացումներով ներկայացնում է կանացի սիրո պատմությունները:

19-րդ դարի վերջերին Թուրքիայում հայ գրական կյանքն անկում ապրեց, գրողներից շատերը հեռացան Պոլսից: Չոհրապը զբաղվում է իրավաբանական գործունեությամբ և թարգմանական աշխատանքով:

1908 թ. պառլամենտական ընտրության համար օսմանյան սահմանադրական հայ ներկայացուցիչների ժողովում արտասանած մի ճառում Չոհրապն իր փաստաբանական գործունեությունից որոշ փաստեր է բերում: Պարզվում է, որ նա Թուրքիայի վճռաբեկ ատյանի առաջ պաշտպանել է Չեյթունի հայերին և այնպիսի վճռականությամբ, որ ատյանը իսկույն փաստաբանին ձերբակալելու հրաման է արձակել: Պաշտպանել է նաև հայ, հույն, բուլղարացի քաղաքական անբաստանյալներին: Մի բուլղար հեղափոխականի դատավարության ժամանակ արտասանած ճառի համար Իշթիպի գայմագամը (նահանգապետը) պահանջում է, որ Չոհրապն անմիջապես թողնի Պոլիսը:

1898 թ. Չոհրապը հրատարակում է «Մասիս» օրաթերթը և համարներից մեկում տպագրում «Խնդուրը» վերնագրով նորավեպը: «Փոստայը», «Մագ-

դադին», «Երջանիկ մահը» նորավեպերը Չոհրապի գեղարվեստական բարձր կարողությունների ու հոգեբանության արդյունք են:

Չոհրապի երկերը թարգմանվել են քսանվեց լեզուներով:

Արժեքավոր են նաև Չոհրապի գրական դիմանկարները, հուշագրական, երգիծական, խոհական, հրապարակախոսական և ուղեգրական ակնարկները, որոնք ներթափանցված են խոր մտահոգությամբ՝ հայ ժողովրդի ճակատագրով:

1908-15 թվականներին նա եղել է Ազգային ժողովի երեսփոխան և օսմանյան պառլամենտի դեպուտատ: Պառլամենտում լայն գործունեություն է ծավալել, պահանջել է վերակառուցել կրթական գործը, օրենսդրությունը, նպաստել է գիտության և արվեստների զարգացմանը, ճանաչել և պաշտպանել է երկրի բոլոր ազգերի քաղաքացիական և ազգային իրավունքները:

Չոհրապը քաղաքացիական բացառիկ արիություն է դրսևորում Ադանայի կոտորածի ժամանակ: «Եթե Չոհրապը չլլար, -ասում է Օտյանը, - թերևս ջարդվողները հանցավոր հոչակվեին»: 1911-ին Չոհրապը հուշագիր է ուղարկում Թուրքիայի վարչապետին՝ պահանջելով վերջ տալ հայերի նկատմամբ իթթիհատական կառավարության համիդյան մեթոդներին: Հայկական հարցի վերաբերյալ նա բանակցություններ է վարել մեծ տերությունների դեսպանությունների հետ:

1915-ի մայիսի 25-ին երիտթուրքերը Չոհրապին ձերբակալեցին և վայրագորեն սպանեցին աքսորի ճանապարհին:

Գրիգոր Չոհրապը և թատրոնը

Գրիգոր Չոհրապի գեղագիտական հայացքից չեն վրիպում հայ թատրոնը և նրա հետ առնչվող մի շարք հարցեր: Սիրելով հայ թատրոնը և ապրելով նրա ճակատագրով՝ Չոհրապը մեծ գեղագետի խորաթափանցությամբ գրում է հայ թատրոնին նվիրված մի շարք հոդվածներ: Նրան անհանգստացնում է արևմտահայ իրականության մեջ գործող թատրոնների վիճակը: Թատրոնի մասին գրած առաջին հոդվածում՝ «Հայ թատրոնի նավաբեկությունը», գործնական միջոցներ է առաջարկում ազգային թատրոնի դրությունը բարելավելու համար: Արևմտահայ թատրոնի վիճակը նա բնութագրում է որպես քայքայված և սպառվող բնագավառ: Նրա կարծիքով արևմտահայ թատրոնի վատթարության պատճառը «հասարակության մտավոր ներուժի, ճաշակի անկման, ազնվացման և զարգացման նվազեցումն է»:

Հասարակության մտավոր անկումը հետևանք է հայերի նկատմամբ հետզհետե ուժեղացող հալածանքների, որ 1878-ից հետո հասկանալի պատճառներով ընդունում է հայությանը՝ իբրև ազգություն ոչնչացնելու բնույթ: Եվ, այնուամենայնիվ, ժամանակի հայ առաջավոր երիտասարդությունը ծավալում է գրական-հրապարակախոսական գործունեություն, որի մեջ կենտրոնական տեղ է գրավում 80-ական թվականների գրական շարժումը: Շարժման նպատակն էր նպաստել հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության բարձրացմանը, նրա բարոյական, մտավոր և հոգևոր աճին, հոգևոր միասնությանը՝ իբրև ազգություն, որով և ունակ դարձնել նրան՝ համիդյան հայաջինջ քաղաքականությանը դիմակայելու: Այստեղ մեծ դեր է խաղում նաև թատրոնը: 1892 թ. սկսած՝ ժամանակի գրական գործիչներից միայն Չոհրապեհ է, որ լրջորեն զբաղվում է հայ թատրոնի վերականգնմամբ և նպաստում նրա զարգացմանը:

Հայ թատրոնի վերածննդի ուղին Չոհրապեհ տեսնում է ամենից առաջ ազգային ինքնություն թատերագրության զարգացման մեջ: Ազգային թատերագրության և դերասանական արվեստի զարգացումը չի կարող լիարժեք լինել լոկ թարգմանական պիեսներով: Եթե արվեստը հոգու լեզուն է, ապա նա պահանջում է հոգեհարազատ ազգային արվեստ: Հայ հասարակության թատրոնից հեռանալը բացատրվում է առանձնակի հետաքրքրություն չներկայացնող թարգմանական պիեսների բեմադրությամբ:

«Գրողներ պակասած են միշտ հայ թատերաբեմին համար, – գրում է Չոհրապեհ, – ինչպես հանդիսատեսները պակասած էին արդեն անոր սրահեն և օթյակներեն»:

1892 թ. Չոհրապեհ գրում է «Թատրոն» հոդվածը՝ առաջ քաշելով մի շարք տեսական հարցեր: Նա նշում է, որ թատրոնը պետք է արտացոլի ժամանակակից կյանքը և դպրոցի դեր կատարի, որ թատրոնը՝ իբրև համադրական արվեստ, իր բոլոր առավելություններով պետք է դառնա իրական կյանքի՝ զոհրապայան գեղագիտական տերմինով ասած՝ հոգեբանական կրկներևույթ, կյանքից պիես և պիեսից բեմ փոխադրված երևույթ: Թատերագրի պատկերած կյանքը թատրոնում մեկնաբանվում է կենդանի օրինակով, ուստի հանդիսատեսը բեմում տեսնում է բուն կյանքը, ապրածը, իրականը: Ինչպես գրականությունը, երաժշտությունը, նկարչությունը հաճախ կարիք ունեն մեկնաբանման, թատրոնը ևս պետք է դառնա կյանքի եական կողմերի զննման, ուսումնասիրման և հայտնաբերման միջոց: Չոհրապեհ ընդունում է գրականության և արվեստի հասարակական վերափոխիչ դերը,

զնահատում գրողի գործուն միջամտության իրավունքը կյանքի երևույթների:

Արդյոք կարո՞ղ են թարգմանական պիեսները կատարել այն դերը, երբ հասարակությունն ունի բազում հոգսեր ու պակասություններ, որոնց վերացմանը կամ ներկայացմանը կարող են նպաստել միայն ազգային թատերգությունները: Ելնելով իր առաջ քաշած խնդիրներից՝ նա գրում է իրական կյանքից վերցրած «Չոքանչը» վերնագրով մի պիես:

Թատրոնին տալով մեծ նշանակություն՝ Չոհրապը չափազանց մեծ պահանջկոտություն է ցուցաբերում հատկապես դերասանական արվեստի նկատմամբ: Նա պահանջում է բարձրացնել բեմական լեզուն, գրական ճաշակը, հրաժարվել կեղծ դասականությունից:

Չոհրապի թատերախոսականները այսօր էլ չեն կորցնում իրենց արդիականությունը: Ուշագրավ փաստեր են բովանդակում մի շարք դերասանների՝ Ադամյանի, Սիրանույշի, Աբելյանի, Արմենյանի, Դուրյան - Արմենյանի և ուրիշների մասին գրված հոդվածները:

Չոհրապը մեծագույն ակնածանքով և հիացմունքով է խոսում հանճարեղ Ադամյանի մասին: Փարիզից գրած մի թղթակցության մեջ, նկարագրելով Ֆրանսուա Կոպեի մահը, Չոհրապը հիշատակում է Պետրոս Ադամյանին, որ Կոպեի «Դարբինները» կարտասաներ պերճությամբ, իր անզուգական բերնեն թոչող ամեն ներդաշնակությանց պես»:

Չոհրապի թատերախոսականներից մեկը նվիրված է Ֆասուլյանյանի խմբի ներկայացմանը: Խմբի ներկայացրած Մոլիերի «Երևակայական հիվանդը» և Ալ. Դյումայի «Քամելազարդ տիկինը» ներկայացումների մասին Չոհրապը գրում է մի հոդված, որտեղ շատ հետաքրքիր դիտողություններ է անում Սիրանույշի դերի վերաբերյալ: Վերլուծելով Դյումայի վերոհիշյալ կերպարը՝ հեղինակը գրում է. «Տիկին Սիրանույշ ամեն հասկություն ունի արժանավոր թարգմանը ըլլալու Դյումայի այս գեղեցիկ գործին: Իր արվեստի չափ զգացում ունի, ինչ որ անհրաժեշտ է Մարկրիթի դերին համար: Քաջ կը խոսի հայերեն, բան մը որ քիչ-քիչ պակսելու վրա է մեր դերասաններեն շարերուն, իսկ ինչ որ ավելին է, խոսիլ գիտե փիկին Սիրանույշ սիրո լեզուն»: Երկու պիեսների դերակատարումների մասին խոսելիս նա հատկապես բարձր է զնահատում հռչակավոր դերասանուհուն:

Չոհրապի թատերախոսականներից ամենաարժեքավորը 1908 թ. Աբելյան-Արմենյան խմբի կողմից Պոլսում տրված Շիրվանզադեի «Պատվի համար» ներկայացման մասին գրված նյութն է: Հոդվածում Չոհրապը դրսևո-

րում է պիեսի և դերակատարների խաղը վերլուծելու մեծ հմտություն: Չոհրապը, որ արվեստի ջերմ երկրպագու էր, խանդավառ տողերով գնահատում է թե՛ դրաման, թե՛ դերասանների խաղը, ինչպես և ներկայացման՝ հանդիսատեսի վրա թողած բացառիկ ուժեղ տպավորությունը:

Չոհրապը մեծագույն հիացմունքով է խոսում ամբողջ խմբի մասին.

«Ադամյանի մահվրենն ի վեր Պոլիս ասանկ արվեստական ներկայացում տեսած չէր: Ֆրանսական մեծ ներկայացումներն անգամ այս տպավորությունը չկրցան ձգել, այն պատճառով, որ անոնց մեջ մեկ-երկու առաջնակարգ դերասանի շուրջ բոլորված են անհավասար և աններդաշնակ կարողություններ, իսկ հոս բոլորը ներդաշնակապես կցված, հավանակաւարար, երկար արվեստակցությամբ մը միևնույն զարգացումն ու ըմբռնումը տրացած են: ...Առանց վերապահության կրնամ հայտարարել, որ այս դրամատիք խումբը հայոց գեղարվեստական փառքն է»:

Նա շատ բարձր է գնահատում նաև Շիրվանզադեի դրաման: «Հայրոր մը պերք է ամբողջ այս հրաշակերտը վերլուծելու համար», - գրում է նա:

Պիեսի դերակատարներից հատկապես բարձր է գնահատում Աբելյանին:

«Պ.Աբելյանը, - գրում է նա, - Անդրեաս Էլիզարյանի ճնշիչ դերի մեջ, անըստըզուր կատարելությամբ մը ցույց տվավ, որ լիովին ըմբռնած է Շիրվանզադեի գծած վաճառականի դեմքին բոլոր գիծերը, ամեննն նուրբերեն սկսելով, մինչև ամեննն թանջրերը, այդ նկարագրին հոգեկան ազդակները, ընկերական (սոցիալական) ըմբռնումները, առույտորի մարդու բարոյականը, խորամանկություններն ու ճարտարությունները: Այս ամենը այնքան հարազատ կերպով պատկերացած էր իր դեմքին վրա, այնքան ճշգրիտ կերպով խրացած իր շարժուչներն մեջ, որ մտքովս ըսի թե մի գուցե պ. Աբելյանը առույտորի աշխարհեն վրարյալ մը ըլլա և ոչ աննման արվեստագետ մը»:

Աբելյան - Արմենյան խմբի «հաջողության մեկ մեծ բաժինը կը վերաբերի տրված փիեսի ինքնին հոյակապ գրվածք մը ըլլալուն, - ասում է Չոհրապը, - անոր համար վերջին կեցցեններու մեջ Շիրվանզադեի անունը կցեցի իր դերակատարներուն անունին»:

Այս սրտաբուխ ու անկեղծ գնահատականը շատ խոր տպավորություն է թողնում Շիրվանզադեի վրա: «Ժամանակի» խմբագրությանը ուղղած մի գամակի մեջ նա գրում է. «Միանգամայն ոգևորությամբ կարդացի հայտնի վիպասան Գրիգոր Չոհրապի նուրբ, խոր հոգեբանական հողվածը»: Մի այլ

նամակում՝ Տ. Կամսարականին ուղղված, Շիրվանգաղեն գրում է. «Այն ինչ ոգևորություն էր, որ օտարության մեջ պաշարեց ինձ, երբ բաց արի այս նվիրական կապոցը (Պոլսի հայերեն թերթերը) և կարդացի Չոհրապի և այլ թրքահայ խոշոր դեմքերի հուզիչ հոդվածները իմ բեմական երկերի մասին»:

Իր կյանքի վերջին տարիներին գրած «Էջեր ուղևորի մը օրագրեն» ճամփորդական ակնարկների մեջ Չոհրապը անդրադառնում է ֆրանսիական թատրոնին, որը նա լավ գիտեր ոչ միայն ֆրանսիական խմբերի՝ Պոլսում տված ներկայացումներով, այլև Փարիզում տեսածներով: Չոհրապը ընդհանրապես գոհ չէր ֆրանսիական թատրոններից: *«Ֆրանսական թատրոնը,- գրում է նա,- փրկեցրական համբավ մը կը վայելէ թեև՝ հիմա, հանճարե ավելի ճարտարությամբ կազմված է ան»:*

Ֆրանսիական թատրոններից Չոհրապը գատորոշում է հատկապես երկուսը, որոնք միայն, նրա կարծիքով, «էապես ֆրանսական են, ֆրանսական ոգվույն անեղծելի փրոշմը կը կրեն»՝ Կոմեդի Ֆրանսեզը և Օպերա Կոմիկը: Վերջինից Չոհրապը գոհ էր, որովհետև «Սովորական կյանքի տրոփումները» տեղ էին գտնում նրա «ձեղումին տակ», իսկ Կոմեդի Ֆրանսեզը նա համարում է «ժամանակագրական սխալ»: Չոհրապը լավ ծանոթ էր Կոմեդի Ֆրանսեզի «մեծ անցյալին», նրա «շլացուցիչ» օրերին, «երբ որ ինքը միայն ֆրանսիական թատերգությունը իր ծոցին մեջ կամփոփեր»: *«Գոմեդի Ֆրանսեզը դասական գրականության նվիրված է. Մոլիերի փունը, գաղիական նրբամտության ասպարանն է. աշխարհիկ հասարակություն մըն է, բայց սովորական թատրոն մը չէ այն. գրեթե ծիսական բան մը ունի. սրբավայր՝ ուր մեծ թատերագիրները և մեծ դերասանները, ժողովուրդեն ճանչցվելու համար, անպարճառ պերք է որ օծվեն, աստիճան ատնեն: Ամեն ինչ սեթևեթ և հանդիսավոր է հոն. խոսքերը, շարժումները, և երբ բովանդակ աշխարհ արվեստական կյանքեն խորշելով դեպի իրականը կը դառնա, ոչ ոք Գոմեդի Ֆրանսեզին ժամանակագրական սխալ մը ըլլալը դեռ կը խոստովանի»:* Ինչպես տեսնում ենք, Չոհրապի դժգոհությունը այդ թատրոնից բխում է ռեալիզմի պահանջներից:

Չոհրապի՝ հայ թատրոնին նվիրված բոլոր հոդվածներն ու ասույթները, թատերագիրների և դերասանների արվեստի գնահատականներն ու մտքերը արդիական են բոլոր ժամանակների համար:



Միամանթո
(Արոմ Յարճանյան)
(1878 - 1915)

Միամանթոն ծնվել է բանաստեղծների հայրենիքում՝ Ալն քաղաքում, 1878 թ.: 1892 թ. Ատոմը ընտանիքի հետ մեկնում է Կ.Պոլիս: Սովորում է Միրիճանյան դպրոցում: Երկու տարի հետո տեղափոխվում է բանաստեղծ և մշակութային գործիչ Ռ.Պերպերյանի վարժարանը: Այստեղ էլ ձևավորվում են նրա գրական հայացքները:

1894-96 թթ. Թուրքիայի նահանգներում և քաղաքներում ուժեղանում էր հայահալած քաղաքականությունը:

Այլուճալի ջարդերը դառնում են հայերի բնաջնջման ընթացքի նախերգանքը: Միամանթոն կանգնում է արյան և դիակների առաջ: Համաժողովրդական ողբերգությունը ցնցում է բանաստեղծի հոգին: 1896 թ. նա մեկնում է Եգիպտոս: Նույն թվականի սեպտեմբերի 20-ին ծնողներին գրում է պանդուխտի առաջին նամակը՝ Հունաստանի Պիերնա քաղաքից: Նամակում նա իր գոհունակությունն է հայտնում հույն և հայ ժողովուրդների բարեկամության, հույն ժողովրդի լեզվի գեղեցկության մասին: Հունաստանից հետո նա վերադառնում է Եգիպտոսի Կահիրե քաղաքը: Գնալով խորանում է բանաստեղծի վիշտը: Օտարության մեջ ծայրաստիճան գգայուն է դառնում, ջղային ու ջղաձիգ:

1897 թ. Միամանթոն թողնում է Եգիպտոսը և մեկնում Ժնև: Մի քանի ամիս հետո մեկնում է Փարիզ: Նա աչքի է ընկնում տեղի մտավորականության շրջանում: Նրա գրական փորձերը նկատում և գնահատում են Մինաս Չերազը, Սուրեն Պարթևյանը, Արշակ Չոպանյանը: Փարիզում Միաման-

թոն ազատ ունկնդրի կարգավիճակով հաճախում է Սորբոնի համալսարան: Բանաստեղծի բնավորությունն ու գրական հասունությունը ձևավորվում է Փարիզի գրական ու մշակութային մթնոլորտում: Այցելում է Փարիզի թանգարաններն ու ցուցահանդեսները, ուսումնասիրում համաշխարհային գրականությունը:

1902-1908 թթ. լույս են տեսնում նրա «Հայորդիներ» գրքի երեք շարքերը, իսկ 1907 թ.՝ «Հոգեվարքի և հույսի ջահեր» քնարական մատյանը: Այս գրքերը բանաստեղծի տաղանդի նոր դրսևորումներն են:

1908 թ. Թուրքիայի քաղաքական մթնոլորտում տեղի են ունենում որոշ փոփոխություններ: Խարխսվում է բոնակալի 30-ամյա գահը: Հայ մտավորականության շրջանում խաղաղ գոյատևման հույս է առաջանում: Տարբեր երկրներում ցրված հայերը բռնում են Կ.Պոլսի ճանապարհը: Երբ մյուս գրողների հետ Սիամանթոն ուրախության և տոնախմբությունների մեջ էր, 1909 թ. մարտ-ապրիլ ամիսներին Թուրքիայում կրկին բարձրանում է մահվան տազնապը: Օրեր առաջ երիտթուրքերի և հայ կուսակցությունների ներկայացուցիչների ողջագուրումներն ու հավերժ բարեկամության մասին ճառերը և կոչերը հողս են ցնդում: Կարճ է տևում հայ ժողովրդի ոգևորությունը, կրկին տազնապն ու անհանգստությունն ալեկոծում են մարդկանց սրտերը, կրկին արյան հոտ է բարձրանում հայրենի եզերքներում: Սիամանթոն առաջինն է բարձրացնում իր ձայնը՝ հանուն ժողովրդի ազատության, ընդդեմ թուրքական նոր ռեակցիայի...

1909 թ. ամռան ամիսներին Կ.Պոլսում նա գրում է իր նոր գիրքը՝ «Կարմիր լուրեր բարեկամես»: Կրկին բարձրացնում է իր ազնիվ ու շիկացած խոսքը: Սիամանթոն ասում է չարությունը, չար մարդուն և մարդասպանին: Չկա մարդկային խիղճ ու հոգի, չկա արդարություն, իսկ եթե կա՝ միայն ուժեղների ու անպտուղ կյանք վարողների համար է:

1912-1913 թթ. ողջ հայությունը նշում է հայ գրերի գյուտի 1500-ամյակը, որը խոշոր ազդակ է դառնում ժողովրդի հոգեկան միասնությունը զորացնելու, Հայաստանի երկու հատվածների մերձեցման համար: Այդ օրերին Սիամանթոն գրում է իր անմահ երկերից մեկը՝ «Սուրբ Մեսրոպը»:

1913 թ. Սիամանթոն Պոլսից գալիս է Հայաստան, այցելում նվիրական վայրեր՝ Էջմիածին, Չվարթնոց, Անի, Օշական, շփվում հայ մտավորականների հետ: Կովկասից հետո բուժման նպատակով նա մեկնում է Շվեյցարիա: Կարճ ժամանակից հետո նա վերադառնում է Պոլիս՝ բաժանելու հայրենի ժողովրդի ճակատագիրը:

1915 թ. ապրիլի 11-ին բանտարկում են 210 մտավորականի, որոնց թվում՝ Սիամանթոյին, Վարուժանին, Ջոհրապին, Կոմիտասին, Ռուբեն Սևակին, Թշկատինցուն, Օսյանին, Երուխանին, Ջարդարյանին, Տիգրան Չոլկյուրյանին: 1915 թ. նա արդեն Այաշի բանտում էր: Օգոստոսին Սիամանթոյին և ընկերներին կառքով տանում են անհայտ ուղղությամբ: Դժվար է կռահել, թե ինչ է մտածել ու հիշել երիտասարդ բանաստեղծն այդ ճանապարհին:

Հրանտ Թամրազյանը նրա երազանքների մասին գրել է. «Սիամանթոն աշխարհից հեռանում էր բոլորովին երիտասարդ՝ անավարտ թողնելով մտքի մի հոյակապ տաճար, իր հետ տանելով այնքան ծաղկուն երազներ, գալիք արշալույսների այնքան կարոտ ու սեր: Նրա հոգում երևի ծփացել են հայրենի հեռաստանները, կրկին ծավալվել դարերի հնություն ունեցող և այնքան նոր արյան շառագույն տվող տառապանքի ալիքները: Ու նա վերջին անգամ այնքան իրական, այնքան պարզ տեսել է իր ժողովրդին՝ ծովացյալ վշտի մեջ, կրկին ապրել իր տառապանքը: Սիամանթոյի վախճանը նրա ստեղծագործության վերջին, արյունոտ էջն էր, հայրենական ցավի վերջին ելևէջը, որ այնքան խոր ակոս ձգեց սերունդների հոգում: Ժողովրդական ողբերգության վերջին ակորդները, երկրներկիր ձգված արքայալների ուղիները, հայրենի երկրի տիեզերական ցավը հաստատեց մեծ բանաստեղծի հոգու ներքնատեսությունը, քանի որ նրա ստեղծագործության մեջ տարիներ առաջ ընդգծված, մեծացած, խոշորացած՝ արդեն արտացոլվել էր գալիքի պատկերը»:

Ականատեսները թողել են ցնցող հուշեր Այաշի բանտարկյալների ճակատագրի մասին: Նրանց մի մասը գազանաբար հոշոտվում է Ուրֆա-Տիգրանակերտ ճանապարհին: Այաշում մնացած բանտարկյալները բաժանվում են երկու մասի՝ մի խումբը, որոնց թվում Սիամանթոն, 1200 հոգիանոց քարավանի հետ, ըստ երևույթին օգոստոսի վերջին, գազանաբար հոշոտվում է Անկարա քաղաքից 4-5 ժամ հեռավորություն ունեցող մի ձորի մեջ, մի մասը՝ 27 արքայական, չարչարանքի է ենթարկվում Այաշից մի քանի ժամ հեռավորության վրա գտնվող «Գապլը պելի» լեռան ստորոտում: Թուրքական ոստիկանները միացած տեղի կույր ու մոլեռանդ ամբոխի հետ, բառիս բուն իմաստով, չարչարում են մեռնող մարդկանց, հոշոտում մարմինները, սվիններով քրքրում վիրավորներին: Մահամերձները մահ էին խնդրում ոճրագործներից, իսկ թուրք խուժանը, բանտերից բաց թողնված չարագործները, շրջապատի թուրք գյուղացիների մի մասը կացիներով, քարերով, եր-

կաթե ձողերով, բրիչներով դեռ տանջում էին գոհերին: «Սրբազան ջիհաթին» մասնակցում էին մոլեռանդ գյուղացիները, հանցագործները, ոստիկանները, եվրոպական կրթություն ստացած մինիստրներն ու մտածողները:

Իջնում է գիշերը, վայրի գազանները շարունակում են թուրքական բարբարոսների, նախապատմական վայրենիների արյան խրախճանքը: Իսկ առավուտը թուրք մարդասպանները Այաշի գյուղերում և Անկարայի փողոցներում քայլում էին՝ զարդարված եվրոպական տարազներով, հայ նահատակների զգեստներով: Չարչարանքի ու մահվան տեսիլներ, արյան ու ավերումի գիշերներ, կոտորածի ու «հանգստի» երեկոներ, - ահա արևմտյան ժողովրդի պատմությունը՝ քաղաքակրթության դարաշրջանում, նրա տառապանքների վերջին էջերը, որոնք զարմանալի ներքնատեսությամբ կանխագուշակել էր Միամանթոն և վաղօրոք իր ցավատանջ երևակայությամբ ստեղծել գալիք աղետների, իր և ողջ ժողովրդի տառապանքի ու բախտի ճշմարտացի պատկերը:

Ճակատագրի դաժան խաղով Միամանթոյի հոգեհանգստի երգերը զարմանալի նման դուրս եկան իր իսկ օրհասի, իր ժողովրդի կործանման պատկերների: Արդյոք այդ բախտի գուշակությունը չէ՞ր «Մահերգը»՝ անդազաղ մնացած հոգիների շրջող ցավի արձագանքը...

Ու ես, անմխիթար,
Յեռավոր հոգիներու պայծառ լացն իմ վրաս,
Ուրիշ անծանոթ հորիզոններե,
Գիշերներով իմացա:
Ու մահագույժ զանգակներու,
Ոսկեհնչուն հսկա քայլերը ցնորաբեր՝
Ոգեկոչող ու դիվական,
Ու քարայրին պարապը՝ քալող ուրվական՝
Մարմնույս վրա ահագնապես փոթորկեցան
Թերևս դագաղի մը հիշատակին՝
Որուն վրա արծաթ մուրճերը չի հնչեցին.
Վերջապես գամելու համար
Վրդովված անմեղությունը մոռացումին:
Ու ալ չեմ գիտեր ու՞ր տարին,
Անբիծ մարմինս անիրավորեն լքված,
Յողին բոլոր ապարդյուն փառքերեն վիրավոր,
Ու իր արյունի բոլոր ճամփաներեն դժգունած...

Չեսո հոգիս թռչուններուն հետ գիշակեր,
Խելահեղորեն գերեզմանե գերեզման,
Ամեն գիշեր,
Մութեն արյունած իրենց Ցավովը հպարտ,
Խենթության մահերգներն աքսորեցին
Չորիզոնե հորիզոն,
Ձեր արևներեն ու հողեն հուսահատ,
Չոգիներուն կյանքին:

Գիտե՞ք, դեպի ո՞ր Սահը դաժանորեն եղերական՝
Երբ ձեր հոգիները հողին փառքեն ալ վիրավոր,
Ու իր երկար օրերեն հոգնած՝
Ո՞ր հեռավոր միջոցներեն սգավոր,
Դժգունորեն պիտի երթան:

Սիանանթոյի երգերը դարձան իր եղերական բախտի հուշարձանը, նրա
ստեղծագործությունը մինչև այսօր պահպանում է նաև իր ճանաչողական
նշանակությունը, մնում է ազգային տառապանքի, արյան ու չարչարանքի
գեղարվեստական պատմությունը:



Դանիել Վարուժան
(Չպուգբյարյան)
(1884 - 1915)

Վարուժանի բազմակողմանի տաղանդը հայ գրականության պատմությունը հարստացրել է զարմանահրաշ գործերով, դարձել հայ պոեզիայի փառքերից մեկը:

Բանաստեղծը նոր էր բուրբել իր կյանքի երեսուներորդ գարունը և դեռ ինչպիսի՞ գոհարներ պիտի պարգևեր մեր գրականությանը, սակայն թուրք բորենիները նրա լուսաճառագ գլուխը քարերով ջարդեցին արքայի ճանապարհին:

Ընթերցողին զարմանք է պատճառում քսանամյա բանաստեղծի մտքի, երևակայության ճախրանքը, ընդգրկումների սահմանները, խտացումների թանձրությունը, մայր ժողովրդի արշալույսների հանդեպ ունեցած խորունկ ու հաստատ հավատը և մտքերի հեղեղային թափը: Ասվածի լավագույն վկայությունը «Ջարդը» բանաստեղծությունն է՝ գրված 1895-1896 թվականներին:

Դանիել Վարուժանի ստեղծագործությունները 20-րդ դարի համաշխարհային պոեզիայի գեղարվեստական հայտնություններից է:

Յրամանը, օ՛ն: – Քարոզին մեջ Պիլալի
Կը ցըցէ Ռիսն ահա ցուլի եղջիւրներ,
Սզկիթներուն բակերուն մեջ ժիրաժիր,
Սահակներն ալ կը յըղկին, կը հիւսուին
Խարազանները թունաւոր օձերով:
Եաթաղանները հատու են,

Եվ Ալիսի ու Ճորոխի, Եփրատի
Ափունքներուն վրայ դահիճները կըկգած
Կը յեսանեն կայծքարերով կացիներն,
Հրամանը, օ՛ն: - Ալ բաւական է մեծցաւ
Արծիւներու համբոյրով
Թորգոմ վիշապն օրոցքին մէջ Սասիսի:

Բանաստեղծը ընթերցողի հայացքի առջև փոռւմ է կոտորածների արնա-
շաղախ տեսարանները, թուրքերի սարքած սպանողը, ապա դատապարտում,
անարգանքի սյունին գամում մեծ տերութունների կառավարիչներին, որոնց
պաղ, անտարբեր հայացքները սահում, անցնում են արյան լճերի վրայով:

Լաց, Հայաստան, ո՛վ թըշուառ կին, ու փետտե՛
Վարսերդ սև, այդ գըլխուդ վրայ դրժըուած
Ցանե տաք-տաք մոխիրներ:
Լա՛ց ու պատռե ծիծերդ զմեզ մեծցընող,
Երակներեդ թող հոսի թոյն մ'ոխութեան
Ու Թեյմըզի, Հռենոսի, Վուզայի
Ակերն անբողջ լեցընե ժահր, սեւցընե,
Զի հոն լվացին քեզ դատող
Պիղատոսներն իրենց ձեռքերն ու հոգին.
Երբ յոյսերու Արշալույսին տակ բոսոր,
Առանց խղճի, ամոթի,
Քեզ նյութեցին խոր Լռութունը մատնիչ:

Եվ այս «մատնիչ լռության» գրկում բանաստեղծը տեսնում է անգոյութ-
յան գիրկը մեկնելու դատապարտված հայորդիներին, որոնք «ըղեղներուն
մէջ կ'զգան սոյլերը տաք գնդակին», տեսնում է յաթաղանագարկ որովայ-
նաճեղք կանանց, սրատված մանուկների ու ծերերի, տեսնում է հրդեհ ու մո-
խիրների կույտ, մի անասանելի անայացում:

Արեան ծովում, ալիքներեն կծփան
Մարդու ահեղ դիակներ,
Դիակ կույսի, դիակ աստղի և վարդի,
Դիակը մեր Ազգին և մեր Աստըծուն:

Եվ այսուհանդերձ, անգամ «ղլիակնացած Ազգի» պատկերը բանաստեղծին չի տանում անդառնալի հուսահատության գիրկը: Անգամ այս պարագային մեծ է Վարուժանի հավատը:

Ու վա՛ղը, վա՛ղն, ո՛վ հեզ Սայրեր, լսեցե՛ք,
Ձեր արգանդէ՛ն մի առ մի
Պիտի ելլեն անոնք հսկա եվ հերոս:

.....
Պիտի հագնին արծուի մաշկեղ թռռիչներ,
Շանթերն իրենց վրայ կրելու միշտ պատրաստ,
Գլուխներուն վըրայ Ազատութեան արաղչին
Ուլունքի տեղ պիտի հիւսուի աստղերով:
Օ՛ն, լըսեցե՛ք, լըսեցե՛ք այս, ո՛վ Սայրեր,
Վաղն երբ անոնք թամբեն իրենց նըժոյգներն
Ու անոնցմով, զերդ պողպատի ջըրդեղում,
Վըրեժին մէջ մըկրտուին.
Երբ թուրք արեան բարկ ծարաւեն մոլեգնած՝
Լեռներուն վրայ մըռընչեն,
Ո՛հ, այն ատեն, այս օրվան
Մեր Մեռելները բոլոր
Միահամուռ ոստնումով
Պիտի կանգնին գերեզմանին մէջ իրենց,
Ու անհամբեր հեռո՛ւն, հեռո՛ւն ակնապիշ
Պիտի սպասեն վարդահեղեղ գալուստին,
Արշալոյսի մ' Արշալոյսի մը՝ օրուն,
(Հավատացեք ինձ, Սայրեր)
Ես ոտնաձայնը կառնեմ...

Ինչպե՞ս կարող էր թուրքի արգոսյան աչքից վրիպել այս տողերի հեղինակը 1915-ի ապրիլի լույս 24-ի գիշերը:

Ստեղծագործելով ընդամենը մեկուկես տասնամյակ՝ բանաստեղծն իր տաղանդի ուժով արձագանքել է ժամանակաշրջանի սուր ու ցավոտ խնդիրներին:

Կենդանության օրոք հրատարակվել են՝ Դանիել Վարուժանի «Սարսուռներ», «Ցեղին սիրտը», «Հեթանոս երգեր» ժողովածուները: Բանաստեղծի վերջին մատյանը՝ «Հացին երգը» լույս է տեսնում նրա մահից հետո:

Վարուժանի պոեզիայում նշանակալից էր «Հացին երգը» բանաստեղծությունների նոր շարքը, ուր բանաստեղծը երգել է հայրենի հողը, մշակների աշխատանքը, գյուղական խաղաղ կյանքը:

1915 թ. Մեծ եղեռնի գոհ դարձած Վարուժանի արխիվը փրկվել է կորստից. ներկայումս այն գտնվում է Երևանում՝ Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում:

Կյանքի վերջին տարիներին Վարուժանը դասախոսություններով հանդես է եկել տարբեր ընկերությունների կազմակերպած երեկոներին, թողել է արժեքավոր նամակներ և չափազանց ուշագրավ հոդվածներ, որոնք բացահայտում են բանաստեղծի գրական դավանանքը և գեղագիտական ընթացումները: Նա ստեղծեց ինքնատիպ ու գունագեղ բանաստեղծական մի աշխարհ, որն իր հաստատուն տեղն ունեցավ հայ դասական պոեզիայի պատմության մեջ:



Ռուբեն Սեւակ
(Զիլինկիրյան)
(1885 - 1915)

Ծնվել է 1885 թ. փետրվարի 15-ին Պոլսի մոտ գտնվող Սիլվրի արվարձանում: Սովորել է ծննդավայրի Ասքանազյան նախակրթարանում: Այնուհետև մինչև 1901 թ. կրթությունը շարունակել է ամերիկյան վարժարանում: 1905 թ. ավարտել է Պոլսի Պերպերյան վարժարանը, իսկ 1911-ին՝ Լոզանի համալսարանի բժշկական ֆակուլտետը: 1915 թ. ձերբակալվել է և աքսորի ճանապարհին նահատակվել Վարուժանի ու Սիամանթոյի հետ:

Սևակի առաջին բանաստեղծությունը՝ «Բաժանման խոսքեր» վերնագրով, տպագրվել է 1905 թվին: 1910-ին հրատարակվել է նրա «Կարմիր գիրքը» ժողովածուն: Ռուբեն Սևակի ստեղծագործական կյանքն ընդգրկում է 1907-1915 թվականները: Նա թողել է շուրջ 150 բանաստեղծություն ու պոեմ, երեք տասնյակ արձակ գործեր: Եղերական մահը անկատար է թողել բանաստեղծի նպատակներն ու մտահղացումները: Նրա ստեղծագործությունները ցրված են մնացել տարբեր պարբերականների էջերում: Սևակը գրել է սիրո, բնության, սոցիալական, ազգային-հայրենասիրական թեմաներով: Սոցիալական անարդարության, բողոքի ու ընդվզման գաղափարը գեղարվեստական մեծ ուժով արտահայտվել է «Դրամին աղոթքը» (1907), «Կարմիր դրոշակը» (1909) բանաստեղծություններում:

Ռ. Սևակի ազգային-հայրենասիրական բանաստեղծություններն ու պոեմները գրվել են 1909 թ.՝ կլիկյան ջարդերի անմիջական տպավորությունների տակ: «Զանգակներ, զանգակներ», «Ով իմ հայրենիքս», «Հայաստան» քերթվածներում բարձրացրել է ժողովրդի ողբերգական ճակատագ-

րի թեման: Ռ. Սևակը հայտնի է որպես քնարերգու բանաստեղծ: Շարունակելով հայ սիրային քնարերգության ավանդույթները՝ նա ստեղծել է սիրո երգերի մի ամբողջ շարք՝ «Երգ երգոց», «Գինով սեր», «Եկուր», «Ինչո՞ւ», «Սիրո և մահվան երգը» և այլն: Նշված երգերը աչքի են ընկնում զգացմունքային նրբությամբ ու խորությամբ: Նրա պոեզիային բնորոշ են լեզվի մաքրությունն ու հստակությունը, տաղաչափական արվեստի բազմազանությունը, երաժշտականությունը: Սևակին անհանգստացրել են աշխարհում տեղի ունեցող անարդարությունները: Ինչո՞ւ են ստեղծվել անհավասար հարաբերություններ, երբ ոմանք շոայլորեն վայելում են կյանքը, լողում հարստության և պերճանքի մեջ, իսկ միլիոնավոր մարդիկ տառապում են ու մեռնում թշվառության մեջ: «Մարդերգություն» պոեմում բանաստեղծը կողք կողքի է բերում սոցիալական անհավասարության երկու բևեռները՝ որպես իրողություն, որպես ճակատագիր.

Մեկը նորածին որդին մեծատուն,
Մյուսը աղքատի ծնունդը անտուն
Մեկը բեհեզով քնած, մյուսն արթուն.
Մեկուն ժանյակներ, մետաքսի հյուսկեն,
Մյուսին ձորձ մը խեղճ՝ հորը շապիկեն,
Առաջնույն ոսկի, ժանյակ բյուր տեսակ,
Երկրորդի ճակտին փուշի սև պսակ.
Մեկը Տե՛ր արդեն, մյուսը գրա՛ստ:
Ճակատագի՛ր, վա՛խ, տղաքները փաստ...

Սևակի գայրույթը ֆրիկյան նորագույն գանգատն է: Բանաստեղծի միտքը սլանում է առաջ, ուր երևում են նոր տեսիլներ.


Բյու՛ր կախադաններ անգութ մեծերու...
Ու հրդեհներու մեջ հեռվե հեռու,
Ստրուկներու կու՛ռ, բարբարոս գունդեր,
Որ տաճա՛ր, աստվա՛ծ, կու՛ռ, իշխան՝ ու տե՛ր
Տապալելով վար, կերթային հեռու՛
Հավասարության սե՛րմը ցանելու,
Ու լա՛յն բաշխելու Արդարություն, Հա՛ց ...

Սևակը ցավով է ընդունում մարդկային գեղեցիկ ու վսեմ հատկանիշների կորուստը և տագնապով ընդգծում.

Այս ինչ դարերու հասեր ենք, Աստված,
Փշրեցի՜ն ինչ որ կար վսեմ կերտված,
Թե դեռ սիրտ ունեք, քաղելու տարեք.
Ոսկին նենգ ձայնն է ամենուրեք ...

20-րդ դարասկզբի ողբերգական դեպքերին ականատես բանաստեղծը Սիամանթոյի, Վարուժանի, Թեքեյանի հետ դառնում է ողբերգական դեպքերի ականատես-տարեգիրը, հայրենասեր ու մարտնչող քաղաքացի, հրապարակախոս, սրտացավ բժիշկ:

Ռ. Սևակը ճանաչվում է նաև որպես արձակագիր: Ժանրային իմաստով նրա երկերը բազմազան են՝ հողվածներ, պատմվածքներ, հանրամատչելի գրույցներ: Դրանցից են «Բժիշկին գիրքեն փրցված էջեր», «Ապրիլը հաղթել է», «Ահավոր տարակույսը», «Հարսերուն գաղտնիքը» գործերը: Դրանցում ուրվագծվում է հայրենասեր ու մարդասեր արվեստագետի քաղաքացիական բարձր նկարագիրը:



Մելքոն Կյուրճյան
(Հրանդ)
(1859 - 1915)

Մելքոն Կյուրճյանն արևմտահայ 80-ականների իրապաշտական շարժման ակնավոր ներկայացուցիչների՝ Արփ. Արփիարյանի, Լ. Բաշալյանի, Գր. Ջոհրապի և մյուսների կողքին իր ուրույն տեղն ունի: Գրող, հրապարակախոս, թարգմանիչ, ուսուցիչ, երեսփոխան... Սրանք են Կյուրճյանի գրական-հանրային հետաքրքրությունների հիմնական շրջանակները: Նա ռեալիստական արձակի, մասնավորապես գեղարվեստական քրոնիկի երախտավոր մշակներից է: Նրա թողած ոչ այնքան ծավալուն գրական ժառանգության մեջ այս ժանրին պատկանող գործերն են հատկանշվում բարձր արվեստով և ինքնատիպությամբ: Կյուրճյանն ապրում էր համահայկական կյանքով: Այն, ինչ անցյալ դարի վերջերին հուզում, ակեկոծում է ամբողջ արևմտահայությանը և «ուրթունականներին», կարելի է գտնել Կյուրճյանի գրական և հրապարակախոսական ժառանգության մեջ:

Ժամանակի գրական, հասարակական միջավայրում լինելով բավականին ճանաչված ու գնահատված՝ Մելքոն Կյուրճյանը, սակայն, այսօրվա բազմաթիվ ընթերցողների համար մնում է որպես անհայտ անձնավորություն: Պատճառն այն է, որ նրա կենդանության օրոք ոչ մի ժողովածու, գիրք կամ գրքույկ չույս չի տեսնում: Հետագայում՝ 1931 թ., Փարիզում հրատարակվող «Նահատակ գրագետներու բարեկամներ» մատենաշարի Բ. հատորը նվիրվում է Հրանդին: Գրողի միակ ժողովածուում ամփոփվում է 20 քրոնիկ՝ «Պանդուխտի կյանքեն» խորագրի ներքո, և 9 պատմվածք: Ցավոք, բեղմնավոր հեղինակի մյուս ստեղծագործություններն ու բազմաթիվ

հողվածներն այդպես էլ համահավաք տպագրության բախտին չեն արժանացնում՝ առայսօր մնալով սփռված ժամանակի մամուլի էջերում:

Մելքոն Կյուրճյանը ծնվել է 1859 թ. սեպտեմբերին Տիգրանակերտի կուսակալության Բալահովիտ գավառի Հավալ գյուղում, արիեստավորի ընտանիքում:

Ծննդավայրում ապրած մանկության տասնմեկ տարիները Հրանդի համար դառնում են վճռորոշ ու կարևոր: Նրա աշխարհայացքն ու գեղագիտական ըմբռնումները հիմնականում ձևավորվում են այդ շրջանում տեսածի ու ապրածի հիմքի վրա: Բնաշխարհի հմայքն ու գեղեցկությունը, համազյուղացիների հոգու միամիտ պարզությունն ու մաքրությունը և դրանց կողքին՝ պատմական Հայաստանի մի մեծ հատվածի ծանր ու ստրկական վիճակն անջնջելի կնիք են թողնում նրա հոգում:

Նախնական կրթությունը Կյուրճյանը ստանում է հայրենի գյուղում: Հակառակ պապի թախանձանքներին՝ 1870 թ., հազիվ տասնմեկ տարեկան, նա մեկնում է Պոլիս¹:

Ուսման ծարավը հագեցնելու պահանջը սկզբում նրան տանում է Սկյուտարի ճեմարան, ուր սովորում է մինչև 1875 թ.՝ Միհրան Դուրյանի (հետագայում Եղիշե արքեպ. Դուրյան) դասընկերակցությամբ: Ապա՝ 1875-1877 թթ., հաճախում է Սբ. Խաչ վարժարանը: 1878 թվականից գրաբարի, հայ ժողովրդի պատմության, ֆրանսերենի և թուրքերենի իմացության մեծ պաշարով Մելքոն Կյուրճյանն անցնում է մանկավարժական աշխատանքի:

Տասը տարի անց՝ 1888 թ., «Մասիս» շաբաթաթերթի էջերում Արփ. Արփիարյանի խորհրդով Մ. Կյուրճյանը Հրանդ ծածկանվամբ ձեռնամուխ է լինում «Պանդուխտի կյանքեն» քրոնիկների հրատարակման աշխատանքներին: Իր ժամանակաշրջանի գրական նոր սերնդի մեջ նա առաջինն է փորձում գեղարվեստական ստեղծագործության նյութ դարձնել պանդխտությունը: Ի տարբերություն նույն թեմային անդրադարձած նախորդ հեղինակների՝ Հրանդը երևույթը քննում է բազմակողմանիորեն, ծրագրված, հետևողականորեն: Ներկայացնելով պանդխտության վտանգներն ու հետևանքները պանդուխտի, ամբողջ ժողովրդի ու հայրենիքի ճակատագրում՝ նա տազնապի ահագանգ է հնչեցնում և ձգտում իր հայրենակիցներին հետ պահել այդ կործանարար աղետից:

1892 թ. Մ. Կյուրճյանն ամուսնանում է Օտյանների նշանավոր գերդաս-

1. Կյուրճյանի հայրը պանդուխտ էր, և երեխայի դաստիարակությամբ հիմնականում զբաղվում է պապը:

տանից Գրիգոր Օտյանի եղբոր՝ Նշան Օտյանի աղջկա՝ Գոհարի հետ: Այդ ընթացքում անհայտ պատճառով ոստիկանությունը ձերբակալում է Հրանդին, բայց Օտյանների հեղինակավոր միջամտության շնորհիվ՝ շուտով նրան ազատ են արձակում: Հետապնդումները Կյուրճյանի նկատմամբ, սակայն, դրանով չեն ավարտվում: 1894-96 թթ. կազմակերպված հայկական ջարդերի ընթացքում բանտում հայտնվելու վտանգը նորից է նրան սպառնում: Մեծ դժվարությամբ Կյուրճյանն անցնում է Բուլղարիա: Այդ ընթացքում Սկյուտարի նրա բնակարանում խուզարկություն է կատարվում, առգրավվում են բազմաթիվ ձեռագրեր:

1898 թ. օգոստոսին, կարծելով, թե իրեն մոռացել են, Մելքոն Կյուրճյանը միամտորեն շտապում է վերադառնալ Կ.Պոլիս, բայց հազիվ նավամատույց իջած՝ ձերբակալվում է ու չորս և կես ամիս բանտախցում պահվելուց հետո տասը տարով արքորվում Անատոլիայի սակավահայ քաղաքներից մեկը՝ Գասթեմունի: Լարված ու ծանր պայմաններում են անցնում Հրանդի արքորի տասը տարիները: Նրան չորս անգամ ձերբակալում են, բնակարանը խուզարկում ու հայտնաբերված բոլոր ձեռագրերը տանում:

1908 թ.՝ երիտթուրքական հեղափոխության ու օսմանյան սահմանադրության վերահաստատման տարում, բազմաթիվ արքորականների, գաղթականների հետ միասին Հրանդն ազատության առաջին իսկ օրերին շտապում է վերադառնալ Պոլիս:

Այստեղ նա վերսկսում է իր ուսուցչական գործունեությունը, ինչպես նաև աշխատակցում է մի շարք թերթերի ու հանդեսների: Հրապարակախոսությանը զուգահեռ նա պատմվածքներ է տպագրում «Ոստանում», «Ժամանակում», «Ազատամարտում», «Շանթում», «Նավասարդում», «Ամենուն տարեցույցում» և այլն: Իբրև առանձին հեղինակային աշխատանքներ՝ Հրանդը հրատարակում է «Գրաբար լեզու» դասագիրքը, «Մեսրոպ և Սահակ. Հայ նշանագիրներու պատմություն» ուսումնասիրությունը:

Իբրև նշխարներ են մնում նաև թուրքական ոստիկանության ճանկերից փրկված ամբողջական ու կիսատ բազմաթիվ ձեռագրեր, որոնց մեջ մեծ թիվ են կազմում նաև թարգմանությունները՝ կատարված անտիկ գրականությունից, ինչպես նաև անգլիացի, գերմանացի ու ֆրանսիացի գրողների ստեղծագործություններից: Գրողի թողոններում պահպանվում է նաև Խ.Ա. քովյանի «Վերք Հայաստանի» վեպի՝ նրա գրած արևմտահայ տարբերակը, ինչպես նաև «Անգլիական գրականության պատմություն» մեծածավալ աշխատությունը:

Հրանդի գրական ժառանգության հետ մոտավոր ծանոթությունը ենթադրել է տալիս, որ այն շատ ավելի հարուստ կարող էր լինել, եթե քաղաքական մթնոլորտը լիներ ավելի մեղմ ու նպաստավոր: Անշուշտ, Կյուրճյանը շատ ծանր է տարել իր ինքնագրերի հաճախակի բռնագրավման ու բարբարոսաբար ոչնչացնելու փաստերը, բայց դարձյալ չի ընկճվել և ամեն անգամ ուժ է գտել իր կյանքն ու գործը շարունակելու: Նա լեցուն էր խիճոյ ու եռանդով, երջանիկ երազով, աննկուն հավատով ու վստահ լավատեսությամբ, ապրում էր հայ ժողովրդի վերածնությունը, ծաղկումն ու բարգավաճումը տեսնելու հույսով: «Շանթ» հանդեսի կազմած հարցաթերթիկի՝ «Ինչպե՞ս պիտի ուզեի մեռնիլ» հարցմանը Կյուրճյանը տվել է միանշանակ պատասխան. «Հայկական համալսարանին մեջ, գրաբարի բեմին վրա, դասի ժամը վերջանալուն մոտ, Ոսկերեան Մատթոսին Մեկնությունը ձեռքս»¹:

Ոսկի երազներ փայփայող գրագետի համար, սակայն, այլ ճակատագիր ու բախտ էր սահմանված: 1915 թ. ապրիլի 24-ի չարաշուք գիշերը Թուրքիայի ներքին գործոց նախարար Թալեաթի հրամանով բազմաթիվ հայ մտավորականների հետ միասին կալանավորվում է նաև Մելքոն Կյուրճյանը: Օրեր անց, ինչպես պատմում է ականատեսներից մեկը, թուրք դահիճները Հրանդին գցում են փոսը և կենդանի թաղում:

Իհարկե, Կյուրճյանը կարող էր խուսափել այդօրինակ վախճանից: Չէ՞ որ նա նախապես տեղյակ էր, որ ինքն էլ է ընդգրկված թուրք կառավարության կազմած՝ հայ մտավորականության ցուցակում:

«- Անձամբ կարդացի, տասնհինգերորդն եմ շարքին,- ասել է նա իր ծանոթներից մեկին:

- Ի՞նչ կը մտածեք ուրեմն:

- Ի՞նչ կրնանք մտածել, ինչ-որ ըլլա այս բազմությունը, մենք ալ անոր հետ, ժողովրդին հետ. փրկվե՛ր միայն երիտասարդությունը, կը բավե՞»²:

Ամբողջ կյանքն իր ժողովրդի հոգս ու ցավերով ապրած և ամբողջովին նրան նվիրաբերված գրողը գերադասում է նրանից չտարանջատվել նաև մահվան ճամփաներում:

*Ազնիվ Չիլիկաբյանի
բանասիր. գիրք. թեկնածու*

1. «Շանթ», հանդես, Կ.Պոլիս, 1913, թիվ 46-47, էջ 356:

2. «Դուսաբեր», հանդես, Կահիրե, 1944, թիվ 3, էջ 4:



Տիգրան Չոկյուրյան
(1884 - 1915)

Տիգրան Չոկյուրյանն ապրում է ընդամենը 31 տարի: Կարճատև կյանքի ընթացքում գրում է բանաստեղծություններ, ճանապարհորդական նոթեր, քրոնիկներ, վիպակ ու վեպ, գրախոսություններ, զբաղվում է նաև թարգմանություններով:

Ծնվել է 1884 թ. Տրապիզոնի նահանգի Գյումուշխանե քաղաքում: Մանուկ հասակում կորցնում է նախ հորը, ապա մորը: Նախնական կրթությունը ստանում է Տրապիզոնի Ազգային վարժարանում: Շուտով նա, հայտնի չէ ում օժանդակությամբ, գալիս է Կ.Պոլիս, որտեղից նրան ուղարկում են Գաղատիայի /Էնկյուրի/ Կարմիր վանքի որբանոց: Այստեղ մեկ տարի մնալուց հետո տեղափոխվում է Կ.Պոլիսի Գազըր Չեշմեի որբանոց: Որբանոցային կյանքը խոր հետք է թողնում պատանի Տիգրանի ներաշխարհի ձևավորման վրա և հետագայում յուրօրինակ մարմնավորում է ստանում «Վանքը» վեպում:

Չոկյուրյանի ճակատագրում վճռորոշ է դառնում Ռ.Պերպերյանի՝ իր գրական-մանկավարժական գործունեության հորելյանի առթիվ որբանոցից 5 որբերի ձրի կրթության վերցնելը, քանի որ դրանցից մեկը հենց նա՝ պատանի Տիգրանն էր: Ուսումնառության շրջանում նա առանձնահատուկ հետաքրքրություն է ցուցաբերում գրականության, պատմության, աշխարհագրության, ֆրանսերենի և գեղանկարչության նկատմամբ, իր գրական առաջին քայլերը կատարում է բանաստեղծության ոլորտում: Շուտով «Հոռետեսի երգեր» վերնագրով բանաստեղծական մի ժողովածու Ռ. Պերպեր-

յանի առաջարանով ներկայացվում է կրթության նախարարություն՝ տպագրության արտոնություն ստանալու: Թույլտվությունը տրվում է բազմաթիվ կրճատումներ անելուց հետո, որի պատճառով էլ հեղինակը հրաժարվում է ժողովածուն տպագրության հանձնել:

Որոշ ժամանակ անց Չյոկյուրյանն անցնում է մանկավարժական աշխատանքի Սկյուտարի Նոր թաղի ճեմարանում ուսուցչի օգնականի պաշտոնով, ապա Պերպերյան ճեմարանում՝ որպես ուսուցիչ:

1908 թ., երբ Չյոկյուրյանն արձակուրդներին մեկնել էր Պոլսի մոտերքում գտնվող Սիլիվրի գյուղաքաղաքում հանգստանալու, լսում է Օսմանյան Սահմանադրության հռչակման լուրը: Դա շատ է ոգևորում նրան, ներշնչում ապագայի նկատմամբ հավատ ու լավատեսություն: «Բյուզանդիոն» լրագրում նա սկսում է տպագրել գավառի կյանքը պատկերող պատմվածքներ, որոնցից յոթը հետագայում ամփոփվում են «Հայրենի ձայներ» խորագրի ներքո: Ի տարբերություն «Հոռետեսի երգեր» բանաստեղծական ժողովածուի, ուր գերիշխում էին ծնողներին վաղաժամ կորցնելուց, օսմանյան բռնակալական իրականությունից, գրական հրապարակը ողորած անկումային գրականությունից բխող հոռետեսական տրամադրություններ, պատմվածքներում զգալի է դառնում ժամանակի բնական շունչը: «Տերտերի ոճիրը», «Հարսին վրեժը», «Տկարին ուխտը» պատումներն աչքի են ընկնում սյուժեի կոտ տրամաբանվածությամբ, հերոսների ներաշխարհի բացահայտումներով:

Տ. Չյոկյուրյանի կյանքում կարևոր իրադարձություն էր Մ. Շամտանճյանի ընկերակցությամբ 1911 թ. հունվարից «Ոստան» եռամսյա հանդեսի վեց համարների լուսընծայումը: Այստեղ, բացի ֆրանսերենից նրա թարգմանությամբ լույս տեսած Գի դը Մոպասանի «Ճարպագունդը» և Լեոնիդ Անդրեևի «Կարմիր ծիծաղը» ստեղծագործությունների, հրատարակվում են «Հերոսը» վիպակը, «Շիրվանգաղեի գրական գործը» խորագրով ուսումնասիրությունը, Մեհեկան ստորագրությամբ մի շարք գրախոսականներ:

1910 և 1912 թթ.՝ տարեվերջյան դպրոցական արձակուրդների ընթացքում, Չյոկյուրյանը մեկնում է Եվրոպա՝ Ֆրանսիա, Հոլանդիա, Իտալիա: Այս ճանապարհորդություններից ստացած տպավորությունների մասին նա գրում է «Ոստան» և «Նավասարդ» հանդեսներում լույս տեսած «Ճամբուս վրա» նոթերում, որոնք վկայում են գրողի՝ արվեստի համաշխարհային գլոխագործոցներին քաջածանոթ լինելը, դրանց գեղագիտական խոր ու նուրբ ընկալման ունակությունը: 1914 թ. ժամանակակից արվեստի նոր

ըմբռնումներով Չյոկյուրյանը խորամուխ է լինում «Վանքը» վեպի ստեղծման աշխատանքներին: Այս ստեղծագործության մեջ արծարծվում են ժամանակի հուզող, հրատապ հարցերը. այն աչքի է ընկնում գաղափարական հագեցվածությամբ, հերոսների հոգեբանական դիմանկարների արտահայտվածությամբ: Հեղինակն այս երկը հղկելու, մշակելու, իր նոր ստեղծագործական ընկալումներին համապատասխանեցնելու համար տքնաջան աշխատանք է կատարում: Դա են վկայում 1912 և 1913 թվականների վեպի վերամշակման աշխատանքները, որոնց արդյունքում մի քանի հարյուր էջով նվազում է երկի ծավալը:

Ստեղծագործության մեջ ներդաշնակվում են ազգային ու անհատական կյանքի պատկերները: Վանքում մեծացած որբ, անտուն հերոսի կերպարում խտանում է թուրքական հայահալած քաղաքականության արդյունքում նմանատիպ ճակատագրի դատապարտված հազարավորների կյանքը: «Ինչո՞ւ հայուն տառապանքը ասանկ հավերժացավ» հարցին տրվում է շատ որոշակի ու տրամաբանված պատասխան. «Մեծ շահերու մեջ հաժող պզտիկ շահ մըն ենք», - ասում է նա: Անշուշտ հեղինակը նկատի ունի մեծ տերությունների դիվանագիտական քաշքշուկներում հայկական հարցի լուծում չգտնելը: Բայց նա լավատես է, կյանքի ու ապագայի հավատով լի. գալու է մի օր, երբ հայ ժողովուրդը «հսկայի մը նման պիտի վերականգնի աշխարհի առաջ»:

Գեղագիտական բարձր ճաշակով գրված «Վանքը» վեպը Տ. Չյոկյուրյանի «կարասի երգն» էր: Վերջինիս հրատարակությունից հետո հեղինակը մեկնում է Վան: Սկսվում է համաշխարհային պատերազմը, որի պատճառով էլ գրողը հրաժարվում է տեղի Կենտրոնական վարժարանը տնօրինելու առաջարկից ու վերադառնում է Կ.Պոլիս: Ապրիլի 24-ին հաջորդած կիրակի օրը Բերա թաղամասում գտնվող Հովհաննես Չյոկյուրյանի՝ գրողի եղբոր բնակարանում Տ. Չյոկյուրյանին ձերբակալում են ու արքայազն Այաշի բանտ:

Կյանքի երեսունմեկերորդ տարում՝ ստեղծագործական ուժերի ծաղկման, նոր մտահղացումների իրագործման նախաշեմին, ընդհատվում է Տ. Չյոկյուրյանի ուղին: Բայց նա արդեն հասցրել էր իրականացնել գեղարվեստական իր նուրբ մտահղացումներից մեկը. «Վանքը» վեպը՝ մեր գրականության բարձրարժեք ու բարձրաճաշակ երկերից՝ մեկը, արդեն տպագրված էր:

Ազնիվ Չիլինգարյան



Ռուբեն Չարդարյան
(1874 - 1915)

Ռուբեն Չարդարյանը գեղարվեստական արձակի ինքնատիպ վարպետ է, արևմտահայ գրականության վերածնության այն դեմքերից, որոնք 19-րդ դարավերջին նոր շունչ ու ոգի են հաղորդում գրական կյանքին: Նա հետևում է Մ. Խրիմյանի ու Գ. Սրվանձտյանցի տոհմային գրականություն ստեղծելու առաջարկին և անճնական օրինակին ու դառնում 1890-ական թվականների «գավառական կամ վաղվան գրականություն» հորջորջմամբ հայտնի գրական հոսանքի ականավոր ներկայացուցիչներից: Իր ստեղծագործություններում Չարդարյանը հետապնդում է գավառի կյանքը, դարերով կուտակված ժողովրդական իմաստությունն ու փորձը, ժողովրդի հոգսերը, կենցաղը, երազները, հազարերանգ բնությունը պատկերելու նպատակը:

1874 թ. Սևերեկ գավառում է ծնվել նա: Երկու տարի անց Չարդարյանների ընտանիքը տեղափոխվում է Խարբերդ քաղաք, որտեղ էլ Ազգային վարժարանում իր սկզբնական կրթությունն է ստանում ապագա գրողը: Հետո աշակերտում է Հովհաննես Հարությունյանին (Թլկատիցի): Պատանեկան տարիքում Չարդարյանն աչքի է ընկնում ինքնամփոփ բնավորությամբ, խուսափում է ընկերական հավաքույթներից, ապրում է ներանճնացած կյանքով: Նա շատ է սիրում իր ուսուցչին՝ Թլկատիցուն, որի բարոյական ու մտավոր ազդեցությունն էլ վճռորոշ է դառնում ապագա գրողի աշխարհայացքի ու գեղագիտական ճաշակի ձևավորման գործում:

1892-1903 թթ. հայոց լեզվի, գրականության ու պատմության ուսուցչի

պաշտոնով Չարդարյանն աշխատանքի է անցնում Մեզիրեի Կենտրոնական վարժարանում: 1903 թ. թուրքական իշխանությունը հեղափոխական գործունեությանը գրադվելու մեղադրանքով Չարդարյանին բանտարկում է ճանաչված մտավորական Թյկատինցու և մի քանի պրոֆեսորների հետ: Գրեթե մեկ տարի կալանավորված մնալուց հետո դատավարություն է կազմակերպվում, որի վճիռով էլ Չարդարյանը վերստին ազատության իրավունք է ստանում: 1904 թ. նա մեկնում է Իզմիր՝ Ազգային վարժարանի տնօրենի պաշտոնը ստանձնելու: Սակայն ինչ-ինչ արգելքների հանդիպելու պատճառով գրողն այնտեղից անցնում է Մանիսա և վարում տեղի Ազգային վարժարանի տեսչությունը: 1905 թ.՝ սուլթան Աբդուլ Համիդի մահափորձի կազմակերպման օրերին, վերսկսվում են հետապնդումները հայ մտավորականների նկատմամբ: Երբ խուզարկություն է կատարվում Չարդարյանի բնակարանում, և երկու շաբաթով նրան կրկին ձերբակալում են, ընկերները խորհուրդ են տալիս հեռանել երկրից: Գրողը տեղափոխվում է Բուլղարիայի Ֆիլիպե (Պլովդիվ) և 1906 թ. հիմնում «Ռազմիկ» եռօրյա թերթը: 1908 թ.՝ օսմանյան սահմանադրության հաստատումից հետո, Չարդարյանը շտապում է վերադառնալ Կ.Պոլիս և կազմակերպում «Ազատամարտ» օրաթերթի հրատարակությունը: Այդ տարիներին նա նաև Ազգային երեսփոխանական ժողովի անդամ է, եռանդուն հասարակական-քաղաքական գործիչ, ինչն էլ չի վրիպում թուրքական կառավարության աչքից: Ուստի պատահական չէ, որ 1915 թ. ապրիլի 24-ին Ռ. Չարդարյանն էլ է տեղ գտնում ձերբակալվողների շարքում: Սկզբում նրան տանում են Այաշի բանտ, հետո Գոնիա, Հալեպ, որից հետո նրա արյունոտ ճակատագրի հետագա մանրամասները մնում են անհայտ:

Ռ. Չարդարյանն իր գրական ուղին սկսում է տասնութ տարեկանում: Նրա գրական երախայրիքը տպագրվում է 1890 թ. Հովհան Փալազաշյանի «Ծաղիկ» հանդեսում: 1891-92 և 1898-99 թթ. աշխատակցում է Չոհրապի և Ասատուրի «Մասիսին», 1895 թ.՝ Զոպանյանի «Ծաղիկին»: Չարդարյանի ստեղծագործությունները տպագրվում են նաև «Արևելյան մամուլում», «Արևելքում», «Շիրակում», «Բանբերում», «Ռազմիկում», «Ազատամարտում», «Բազինում», «Նավասարդում», «Մեհյանում» և այլ թերթ ու հանդեսներում: Այս թվարկումը հուշում է, որ Չարդարյանի գրական ողջ ժառանգությունը սփռված է ժամանակի մամուլի էջերում, ուստի կարևոր իրադարձություն պետք է համարել 1910 թ. «Ազդակ» մատենաշարով «Ցայգալույս» ժողովածուի հրատարակությունը: Երկու տարի անց Փարիզում այն

թարգմանվում է ֆրանսերեն, իսկ 1913 թ. Կ.Պոլիսում դառնում է գրական ասուլիսների քննարկման նյութ և արժանանում շատ բարձր գնահատականի: Կոմիտաս վարդապետը մասնավորապես այդ առիթով գրում է. «Երբ զայն կարդացի, Չարդարյանը չպատկերացուցի բնավ աչքերուս առջև, այլ ամբողջ ազգ մը, ամբողջ ժողովուրդ մը՝ իր գեղեցկությամբն ու շքեղությամբ: Այդ մատյանը գրքի մը տպավորությունը չէր որ թողուց վրաս, այլ կյանքի մը, իր բարախումներովն ու իր զգայնությամբը»¹:

Չարդարյանի ստեղծագործությունների նյութը հիմնականում զավառն է: Գրողը փորձում է տեսնել բուն Արևմտյան Հայաստանում ապրող ժողովրդի հոգեբանության ուրույն գծերը: Նա զավառն իրավացիորեն դիտում է որպես ազգային անկեղծ, բնական զգացումների և առողջ կենսափիլիսոփայության ակունք: Մինչդեռ 19-րդ դարավերջին արևմտահայ զավառն ապրում է ծայրահեղ վատ պայմաններում: Թուրքական կառավարությունը հայ գյուղացու և մահմեդական ժողովուրդների միջև ստեղծում է իրավական, տնտեսական ու քաղաքական այնպիսի փոխհարաբերություններ, որոնք վերջիններիս հնարավորություն են տալիս քրիստոնյաներին նայել որպես աստծու կողմից ստրկության դատապարտված մի զանգվածի, որի շահագործումն ու կեղերումը դիտվում է որպես միանգամայն օրինաչափ երևույթ («Ցեղին զավակը», «Հայրենիք կուգեմ ես», «Տան սերը»): Հայ ժողովրդի տառապակոծ կյանքից հուզիչ մի դրվագ է «Մարն զմանուկը մոռացավ» պատումը, ուր ներկայացվում են բուրդ ավազակներից հալածվող 2 եղբայրների կանայք, որոնք, չկարողանալով այլևս տանել մեջքներին կապած երեխաներին, գետն են նետում նրանց: «Չղջումը» ստեղծագործության մեջ նկարագրվում է թուրք ոստիկան Համտիի ոճրածին կերպարը, որ «օձի պես փաթթվեր էր հայուն ճակատագրին»: Համակերպվելն այլևս անհնար էր, և մի հայ կին ինքնազոհողությամբ փակում է նրա ճանապարհը:

Մեծ վարպետությամբ ու արվեստով են գրված նաև Ռ. Չարդարյանի հեքիաթներն ու լեգենդները: Դրանք մարդասիրության, հայրենասիրության, աշխատասիրության, չարի ու բռնության դեմ ընդվզելու պատգամներն են: Գրողը նաև մեր արձակ բանաստեղծության լավագույն մշակներից է: Նրա՝ այս ժանրի ստեղծագործությունները թաթախված են ոսկեծամ մանկության երազախառն հուշերով, հայրենի բնության նուրբ զգացողությամբ, հայրենի հողի ու հիշատակների պաշտամունքով: Ինչպես դանթեական դժոխ-

1. Ռ.Չարդարյանի «Ցայգալույսը». գրական ասուլիսներ, Կ.Պոլիս, 1913թ., էջ 38:

քի ճամփաներով անցած մեր ժողովուրդը, այնպես էլ նրա ծոցից դուրս եկած գրողը միշտ մնում է կենսասեր ու լավատես («Հայրենական սազը»):

Գեղարվեստական գրականությանը նվիրվելուց բացի, Ջարդարյանը զբաղվում է նաև թարգմանությամբ, հրատարակում է «Մեղրագետ» վերնագրով դասագրքերը, որոնց նպատակը, ինչպես հեղինակն է նշում, «մտքի ու արվեստի գեղեցկություններով» մեր նորահաս սերնդին հիացնելն ու «անոնց միտքն ու հոգին» բեղմնավորելն է:

Ջարդարյանի գրիչն անպտուղ չէ նաև հրապարակախոսության ասպարեզում: Ազգային կյանքի տարբեր ոլորտներին վերաբերող նրա հոդվածներն աչքի են ընկնում սուր հարցադրումներով, ինքնատիպ վերլուծություններով ու ճշմարիտ եզրահանգումներով: Թե՛ իբրև հրապարակախոս, թե՛ իբրև արձակագիր ու բանաստեղծ՝ Ռ. Ջարդարյանը, հիրավի, հայոց վշտի թարգմանն է, հայ այգաբացի երագողը: Միայն մոտավոր է հնարավոր պատկերացնել, թե ինչքա՛ն ստեղծագործություններ կծնվեին, եթե Մեծ եղեռնը չընդհատեր ընդամենը քառասունմեկ գարուն բոլորած գրողի կյանքի ճանապարհը:

Ազնիվ Չիլինգարյան



Երուխան
(Երվանդ Սրմաքեշխանյան)
(1870-1915)

Երուխանը արևմտահայ գեղարվեստական արձակի տաղանդավոր դերերից է: Նա արևմտահայ արձակագիրներ Գր. Չոհրապի, Տ. Կամսարականի, Լ. Բաղալյանի ժամանակակիցն ու նրանց գեղարվեստական ավանդույթների շարունակողն է: Ծնվել է Պոլսի Խասագյուղ թաղամասում: Նախնական կրթությունը ստացել է տեղի Ներսիսյան վարժարանում:

1886 թ. Երուխանը ընդունվում է Ղալաթիայի Ազգային Կեդրոնական վարժարանը, սակայն չի ավարտում: Երուխանը ընտրում է ինքնակրթությամբ զարգանալու տարրերակը: Գրական առաջին փորձերը կատարում է 1889-1890 թթ.: Գրում է մի նորավեպ և մի քանի թատերական քրոնիկներ: 1891 թ. «Արևելքում» լույս է տեսնում նրա «Պապուկը» նորավեպը և արժանի գնահատական ստանում Ա. Արփիարյանի, Հր. Ասատուրի, Գր. Չոհրապի և Տ. Կամսարականի կողմից: Գրականության գործիչներն ու մամուլը ջերմորեն ընդունեցին Երուխանի մուտքը գրականություն:

Գրական աշխարհի քաջալերանքներից հետո Երուխանը «Արևելքի» և «Մասիսի» էջերում լույս է ընծայում «Մարկոս աղբոր սերը», «Հյուժախտավորը», «Կուզը», «Պատանեկան սեր», «Թաշկինակը», «Հանի Մանուել», «Չուկին փոխարեն» նորավեպերը: 1896թ.՝ մոլեզին դեպքերի օրերին, Երուխանը հեռանում է Պոլսից և հաստատվում Վառնայում: 1898 թ. նա Վառնայում հիմնադրում է «Շարժում» լրագիրը: 1900 թ. հրատարակում է «Շավիղ» կիսամյա գրականագիտական հանդեսը, որը գոյատևում է ընդամենը մեկ տարի: 1904 թ. Վառնայում լույս է տեսնում «Մերժված սեր» վեպը: Նույն թվականին մեկնում է Եգիպտոս: Ալեքսանդրիայում հրատարակում է

«Միսուան» ամսագիրը: 1907 թ. մեկնում է Կահիրե և Գալուստյան վարժարանում աշխատում որպես ուսուցիչ:

1908 թ. երիտթուրքերի հեղաշրջումից հետո Երուխանը վերադառնում է Պոլիս և նույն թվականին ստանձնում «Արևելքի» խմբագրության աշխատանքները:

1910-13 թթ. աշխատակցում է «Անահիտ», «Արևելյան մամուլ», «Շանթ», «Հայ գրականություն», «Ոստան», «Ազատամարտ», «Ժամանակ» պարբերականներին: Երուխանը ժողովրդի հասարակ խավերի պաշտպանն էր, նրանց ապրումների գեղարվեստական արտահայտիչը: Նրա հերոսները հասարակության ամենաանպաշտպան խավերի ներկայացուցիչներն են:

Թուրքիայում տիրող հասարակարգն իր հետամնացությամբ, իր ողջ նողկալիությամբ ու զագրելիությամբ կործանարար էր հայ ժողովրդի համար: Երուխանը տեսնում է, որ տիրող իրականությունը աղճատում է մարդկանց, աղճատում ազգային, սոցիալական, քաղաքական, հոգեբանական, բարոյական հարաբերությունները: Այս մթնոլորտում անապահով ու անհեռանկար է դառնում հայերի կյանքը:

Երուխանի գեղագիտական իդեալը մարդն է, որին նա անդրադառնում է մի քանի տասնյակ նովելներում ու պատմվածքներում: Նրա ստեղծագործությունները հստակ դրսևորում են հասարակության ներքին հակասությունները, որոնք իրենց հետ բերում են դժբախտություններ, կյանքի բազմաթիվ ստվերոտ կողմեր: Իր նովելներում Երուխանը կարողանում է բացահայտել նաև մարդկանց հոգու վեհությունը, գեղեցկությունը: Միտո մի գեղեցիկ պատկեր է «Պատանի սեր» նովելը:

Միտո և գեղեցկության զգացումն այնքան ինքնաբուխ, մաքուր և բնական է Երուխանի հերոսների մոտ, որ առանց մտածելու՝ նրանք իրենց ամբողջ էությամբ անձնատուր են լինում դրան՝ զգացմունքային փոխհատուցման որևէ հույս չունենալով հանդերձ: Միտո գեղեցիկ պատմություն է նաև «Սայլորդը» նովելը:

Երուխանը ոչ միայն տաղանդավոր գրող է, այլև հրապարակախոս ու քննադատ: Նա արևմտահայ այն հրապարակախոսներից է, որ կանխատեսեց երիտասարդ թուրքերի քաղաքականության իսկական էությունը: Նրա վերաբերմունքը դեպի սուլթանական բռնապետությունը միանգամայն պարզ է: 1900 թ. սեպտեմբերի 1-ին Երուխանը գրում է. «Ապտյուլ Համիտ, հին և նոր ժամանակներում ամենեն մեծ մարդասպանը, օգոստոսի 19-ին

տոնեց իր թագավորության քսան և հինգամյա աղետը: Եվրոպայի դիվանագետները, ամենքն ալ մեծ ու պզտիկ ոճրագործներ, փութացին իրենց հարգանքին հավաստիքը մատուցանել Երլտըսլի ճիվաղին»¹:

Երուխանը սուր քննադատության ենթարկեց նաև երիտասարդ թուրքերին: Մերկացնելով նրանց կեղծ գործունեությունը՝ նշում է, որ վերջիններս ոչնչով չեն տարբերվում նախորդ ջարդարարներից:

Հրապարակախոսական և մանկավարժական գործունեության պատճառով Երուխանը իր կյանքի վերջին տարիներին համեմատաբար քիչ ստեղծագործեց: Լույս ընծայեց «Հարազատ որդի» վիպակը, գրեց մի քանի նոր նովելներ, թարգմանեց Է. Տրիտի «Արևելյան խնդիրը և հայկական հարցը իր ծագումեն մինչև մեր օրերը» ծավալուն աշխատությունը:

Ճշմարտությունն ու ազատ, անկաշառ բնավորությունը դեռևս 1913 թ. օգոստոսին նրան կանգնեցրին գողգոթայի ճանապարհին:

Իր վերջին ելույթներից մեկում՝ նվիրված հայ գրերի ստեղծման 1500-ամյակին, Երուխանը ասել է. «Տառը ապրեցուց մեզ և գրականությունը կապրեցնե մեզ: Ազգի մը գրականությունը իր այն մասն է, որ անկապտելի է:

Մեր թշնամիները հափշտակեցին մեր հաստությունները, քանդեցին մեր տունն ու տեղը, մոխրի վրա նստեցուցին զմեզ, տասանորդեցին մեր ցեղը, նմանը չտեսնված վայրագությամբ մեր անջատումին ձգտեցան, բայց մազի չափ չկրցան վնասել մեր մտքին, զոր ցեղին հանճարը արտադրած էր և որ պիտի մնա անաղարտելի, պիտի մնա տոկուն ու անսասան ու հավերժական, ինչպես մեր վեհապանձ Մասիսը»²:

1915թ. մայիսին Երուխանը ձերբակալվում է: Անպատմելի տանջանքներից հետո, նույն թվականի հունիսին Խարբերդից չորս-հինգ ժամ հեռավորության վրա գտնվող Տեվե Պոյնիի մեջ բազմաթիվ այլ մտավորականների հետ գազանաբար սպանվում է:

1. Շավիղ, Վառնա, 1900, N 12, էջ 177:

2. Վահե Դայկ, Խարբերդ և անոր ոսկեդեն դաշտը, Նյու Յորք, 1959, էջ 1132:



Թլկատինցի
(Հովհաննես Հարությունյան)
(1860-1915)

Թլկատինցին 19-րդ դարի 90-ական թվականների առաջադեմ գրողներից է: Իր ժողովրդասիրական գաղափարների և գեղագիտական սկզբունքների և ազգային ոգու արտահայտությամբ լայն ժողովրդայնություն է վայելել:

Փոքր հասակում գրկվել է հորից, զգացել որբության դառնությունը: Մոր ջանքերի շնորհիվ կրթությունը ստացել է Խարբերդի Սմբատյան վարժարանում:

1877-78 թվականներից Թլկատինցին զբաղվում է ուսուցչությամբ և միաժամանակ թղթակցում է Պոլսում հրատարակվող «Մասիս» օրաթերթին: Լրագրությունը դառնում է նրա գրական գործունեության սկիզբը:

Խորանալով քաղաքական հարցերի և իրադարձությունների մեջ՝ հայ մտավորականները եկել էին այն եզրակացության, որ հայության փրկությունը սեփական ուժի գիտակցության մեջ է: Նրանք իրենց առջև նպատակ էին դրել գրականությունը ծառայեցնել գյուղացիության փրկության անհետաձգելի գործին:

1890-ական թվականներին Պոլսում հրատարակվող «Հայրենիք» օրաթերթը դարձավ գրողների ժողովրդական գործունեության արտահայտիչը: «Հայրենիքը» մեծ տեղ է հատկացնում Թլկատինցուն, Ռուբեն Չարդարյանին, Գալուստ Անդրեասյանին և ուրիշներին: Լրագրական ավելի քան տասնամյա գործունեությունից հետո՝ 90-ական թվականների սկզբներին, Թլկատինցին սկսեց գրել գեղարվեստական գործեր: Նրա ստեղծագոր-

ծությունները տարբեր ժանրերի են՝ հողված, նամակ, ակնարկ, պատկեր, պատմվածք, վիպակ, դրամատիկական ստեղծագործություն: Թշկատինցու առաջին գրական գործը «Էմիլե» երգիծական ակնարկն է: Գրողը խիստ քննադատում է հայերի դավանափոխության գաղափարը, որը իրականացվում է Թուրքիայի կողմից: Թշկատինցին հետևողական պայքար է մղել ընդդեմ հայ ժողովրդի միասնականությունն արգելակող օտար միջամտությունների. «Էմիլեն» այդ գաղափարի գեղարվեստական մարմնացումն է:

«Գյուղական նամականի» վերնագրով պատկերները ներկայացրել են Խարբերդի գավառի հայ աշխատավոր գյուղացու կյանքն ու կենցաղը:

1895 թ. կոտորածներից հետո ստեղծված վշտի ու տառապանքի ողբերգական օրերը գրողի ստեղծագործության մեջ մտցնում են նոր թեմաներ:

Ստեղծում է մի շարք ուշագրավ գործեր՝ «Հին հավատքս», «Պիծակներու ձայնը» նովելները: Հետաքրքիր են նաև գրողի հետևյալ պատմվածքները՝ «Բամպակ բերան», «Ճնճղուկներուն դատաստանը», «Այգիիս փշենին», «Գավաթ մը միայն»:

«Կնամա՞րտ» վիպակում Թշկատինցին ներկայացրել է ընտանիքի կործանումը: Գյուղական տարածված վատ բարքերի հետևանքով կործանվում է փոխադարձ սիրո գաղափարը: Նույն միտումով է զարգանում նաև «Ես կատարեցի իմ պարտքը» վիպակի սյուժեն:

Թշկատինցու թատերգության մեջ իր արժանիքներով առանձնանում է «Էնդի դեմենը»:

Թուրքական կառավարությունը 1903 թ. գարնանը ձերբակալում է Թշկատինցուն: Քննիչներին չի հաջողվում կեղծ փաստերով մեղադրել Թշկատինցուն: Իննամսյա բանտային չարչարանքները, նյութական պայմանները ազդում են գրողի հոգեբանության և ստեղծագործական կարողությունների վրա:

1908 թ. Թուրքիայում սկսվող քաղաքական նոր անցուդարձերը նոր հոգսեր բերեցին գրողին: Թշկատինցին խորապես ատում է սուլթանական բռնակալությունը:

Թշկատինցին դատապարտում է եվրոպական «իմաստուն հոյակապ հեղինակությունների» լուռ անտարբերությունը և պահպանողական այն մտայնությունը, որը սպասում էր հայկական հարցի խաղաղ ճանապարհով լուծվելուն:

«Դեպի արևը» ստեղծագործության մեջ վառ գույներով դրսևորվել է գրողի հայրենասիրությունը:

Մեծ է Թլկատինցու դերը դայրոցի և մանկավարժության բնագավառում:
Նա եղել է Խարբերդի ազգային վարժարանի հիմնադիրն ու տնօրենը:

1913 թ. Մեսրոպյան գրերի գյուտին նվիրված տոնահանդեսին Թլկատինցին հայտարարել է. «Մենք հայ գիր ունինք, ապահով ուրեմն՝ որ մենք չպիտի մեռնինք, չպիտի անհետանանք...»:

1914 թ. սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը: Հայ ժողովուրդը կանգնում է գալիք մղձավանջի արյունոտ սեմին: Թուրքիան իր մարդակույ քաղաքականությամբ վրեժխնդիր է լինում հայ ժողովրդից և նրա մտավորականներից: Բանտարկվում է նաև Թլկատինցին՝ իր ժողովրդի լուսավոր ապագայի համար պայքարող գրողը: Տանջանքներն ու չարչարանքներն ավարտվում են 1915 թվականին՝ նրա մահով:



Երվանդ Օտյան
(1869-1926)

Երվանդ Օտյանը ծնվել է Կ. Պոլսում: Երգիծարան, լրագրող և հրապարակախոս Երվանդ Օտյանի անվան հետ է կապված հայ դասական երգիծարանության պատմությունը: Երվանդ Օտյանը մտավորական ընտանիքի զավակ է: 1882թ. ընդունվել է Կ. Պոլսի Պերպերյան վարժարանը, ուր սովորել է մեկուկես տարի: Հիմնական կրթությունը ստացել է ընտանիքում՝ հրավիրված մանկավարժների ղեկավարությամբ: Պատանի հասակից սովորել է լեզուներ, ուսումնասիրել է ընտանեկան հարուստ գրադարանի հայերեն և ֆրասերեն գրքերը, գրականությունն ու արվեստը դարձել են նրա պաշտամունքը: Երվանդ Օտյանը գրական ասպարեզ է մտել 19-րդ դարի 80-ական թվականների վերջերին: Մամուլում տպագրվել է 1887-ից՝ կատարելով թարգմանություններ, պատմաբանասիրական հետազոտություններ: Գրել է մի շարք ֆելիետոններ, պատմվածքներ, նովելներ («Միրոնահատակ», «Վաշխառուն», «Կաղանդի վիպակ» և այլն): 1890-ականների վերջերին գրեց «Գործ եփող մը» և «Միջնորդ տեր պապան» երգիծավեպերը:

1896-ին, երբ Պոլսում սկսվում են հայկական ջարդերը, նա հեռանում է Պոլսից: Մեկնում է Աթենք, Կահիրե, Փարիզ, Վիեննա, Լոնդոն, Բոմբեյ: 1908թ. երիտթուրքերի հեղափոխությունից հետո Օտյանը վերադառնում է Պոլիս: 1915թ. ապրիլի 24-ին՝ Մեծ եղեռնի ժամանակ Օտյանը հայ գրողների մի մեծ խմբի հետ արքայություն է, բայց եղեռնի օրերին նրան հաջողվում է ա-

գատվել աղետից: Նույն թվականի սեպտեմբերի 13-ին արքունիքում է արաքական անապատներ: Շուրջ երեք տարի սովալլուկ, ուժասպառ կրեց տիրող սարսափները: Տեսավ սպանդ, սոսկում, սահմոկեցուցիչ եղեռնապատկերներ: Եղավ մի քանի մահվան ճամբարներում՝ հայոց արյունով ներկված Դեր-Չորում: 1918-22թթ. ապրեց Պոլսում, այնուհետև հանգրվանեց Բուխարեստում: 1924-ին տեղափոխվում է Լիբանան, 1925-ին՝ Կահիրե, ուր և մահացավ 1926-ին:

Բեղմնավոր ու բազմակողմանի է Օտյանի գրական, հասարակական ու քաղաքական գործունեությունը: Երվանդ Օտյանի երգիծանքն անողորք է հնչում կյանքի անարդարությունների դեմ:

Գրական գործունեության բեղմնավոր շրջանում Ե. Օտյանը հանդես է գալիս գերազանցապես քաղաքական երգիծանքով: Նա ընդունվում է որպես քաղաքական երգիծանքի նորարար վարպետ: Ժամանակն այդպես էր պահանջում տաղանդավոր գրողից: Ազգային-ազատագրական շարժումները, կուսակցական գաղափարական բախումները, տարբեր տերությունների հակասությունները, սոցիալական ցնցումները դառնում են նրա ստեղծագործությունների թեման: Գրողի քաղաքական երգիծանքի փայլուն էջն է կազմում «Հեղափոխության մակաբույծները» պատմվածաշարը, որն իր թեմատիկ. գաղափարական բովանդակությամբ և երգիծական արվեստի կատարելությամբ նոր խոսք էր հայ գրականության մեջ: Այս ստեղծագործության շարունակությունը կարելի է համարել «Պրոպագանդիստը» հայ անդրանիկ քաղաքական երգիծավեպը, որը տպագրվել է Լոնդոնի «Նոր կյանք» հանդեսում: Ե. Օտյանի ծավալուն երկերից է «Գործի մարդիկ» անավարտ վեպը, որը կրում է «Պոլսական բարբեր» ենթախորագիրը:

Երվանդ Օտյանի գլուխգործոցն է «Ընկեր Փանջունի» վեպը, որը բարձր է գնահատվել Հովհ. Թումանյանի, Ալ. Շիրվանզադեի, Ա. Չոպանյանի կողմից:

Երգիծանքի նյութը քաղված է արևմտահայ իրականությունից, հայ ազգային կուսակցությունների և հատկապես դաշնակցության պրակտիկ գործունեությունից: Ինչպես նշում է գրողը, Փանջունին կոնկրետ անձնավորություն չէ, այլ հավաքական կերպար: Այդ կերպարն ստեղծելիս, նա կիրառել է երգիծական արվեստի հանրահռչակ երգիծաբանների մեթոդներն ու ձևերը: Հայտնի է, որ, օրինակ, իսպանական, ֆրանսիական, անգլիական կյանքից առնված թեմաներով Սերվանտեսը, Մոլիերը, Սվիֆտը

ստեղծել են համամարդկային բնույթ ու հնչեղություն ունեցող դոքսիչո-տությունը, տարտյուֆականությունը, եհովականությունը:

Երվանդ Օտյանի քաղաքական երգիծանքի փայլուն էջերից են «Մեր երեսփոխանները» շարքի դիմանկարները: Երեսփոխանները Հայոց ազգային ժողովի անդամներն էին, մի քանիսը՝ նաև թուրքական խորհրդարանի պատգամավորներ, այսինքն՝ նոր ժամանակների «ազգային ջոջեր», իրական, կենդանի անձնավորություններ՝ քաղաքական, կուսակցական և հանրային գործիչներ, գրողներ, մտավորականներ, հոգևորականներ:

Ե. Օտյանը Ազգային ժողովի անդամ էր, մոտիկից ճանաչում էր երեսփոխաններին, գիտեր յուրաքանչյուրի անհատական գործունեությունը, բնավորությունը, խառնվածքը:

Դիմանկարներ գծելիս երգիծաբանը նպատակ է ունեցել հասարակությանը ներկայացնելու նրա ընտրյալներին, ամենքին մատչելի, հասկանալի ձևով ցույց տալու յուրաքանչյուրի և՛ արժանիքները, և՛ թերությունները: Կերտելով երեսփոխանների մի քանի տասնյակ դիմանկարներ, Ե. Օտյանը յուրաքանչյուրի առիթով բարձրացնում է հույժ հրատապ ու կենսական խնդիրներ, լուծում պահանջող, բայց պետական իշխանությունների մեղքով անուշադրության մատնված հարցեր, որոնք վերաբերում են ժողովրդի տնտեսական վիճակին, քաղաքական իրավագրկությանը, ազգային մշակույթին: «Մեր երեսփոխանները» գրողի երգիծական արվեստի գոհարներից է, հայ երգիծական գրականության մնայուն էջերից մեկը:

Հայ գրականության պատմության մեջ բացառիկ արժեք է ներկայացնում Ե. Օտյանի սոցիալական երգիծավեպերը՝ «Ընտանիք, պատիվ, բարոյական», «Միջնորդ տեր պապան», «Վաճառականի մը նամակները», «Թաղականին կնիկը», «Ես դրսեցի չեմ առներ» և այլն: Հասարակական ոչ մի խավ, սոցիալական ոչ մի երևույթ, ընտանեկան, կենցաղային, բարոյական ոչ մի ոլորտ դուրս չի մնացել վիպասանի տեսադաշտից:


Իր աշխարհայացքով ու գեղագիտական ըմբռնումներով, քաղաքական համոզմունքներով ու թուրքերի ոճրագործությունը դատապարտող «Թիվ 17 խաֆիեն»՝ Մեծ եղեռնը պատկերող առաջին վեպով Օտյանը անմահացավ:

Եղեռնը պատկերող ամենածավալուն այս վեպը, որը հրատարակվել է երեք հատորով, հեղինակը անվանել է քաղաքական վեպ:

«Թիվ 17 խաֆիեն» վեպը ներկայացնում է 1913-1918թթ. ողբերգական իրադարձությունների պատկերները: Այդ վեպով Օտյանը բացահայտել է

թուրքական պետության իրական դեմքը, երիտթուրքերի հայակեր քաղաքականության, ազգայնամոլության, ցեղասպանության իրական պատկերը: Իր հզոր երևակայության և կարողությունների շնորհիվ Օտյանը պատկերել է ահավոր Եղեռնը: Վեպում մեծ տեղ են գրավում Պոլսում իրականացվող վայրագ պատկերները:

Թուրք ոճրագործների վայրագությունները պատկերող այս վեպը հայոց եղեռնապատումի գեղարվեստավավերագրական ամենագորեղ ստեղծագործությունն է:



Սողոմոն Սողոմոնյան
(1869-1935)

ԿՈՄԻՏԱՍԸ ՀԱՅ ՊՈՆՉԻԱՅՈՒՄ

*Դու մեր հաստատ Մասիս սարը
Վստահելի թիկունքն ես մեր,
Մեր երգերի Ճովասարը
Ու բյուրակյան ակունքն ես մեր,
Մեր արնոտված հավքի լեզուն,
Մեր կարոտած ֆիդան յարը,
Մեր լեփլեցուն հոգիների ծայնատարը,
Մեր երգերի խազը-նոտան-ծայնատարը
Չայնասըփյուռը կենդանի
Ու ծայների թանգարանը,-
Մեր ծայների երգարանը...*

Պարույր Սևակ

Երգահան և բանաստեղծ Կոմիտասը դարձավ չմարող ճառագայթ ու հավերժի ճամփորդ: Նա մուտք գործեց գիտական ուսումնասիրությունների, գրականության և արվեստի աշխարհը, դարձավ անմահ անուն ու կերպար: Հանճարեղ երգահանի մասին գրվել ու գրվում են ուսումնասիրություններ, հետազոտություններ, վեպեր, պատմվածքներ: Նրա անձը դարձել է հայ նկարիչների, բանաստեղծների, գրողների ու դրամատուրգների ներշնչման առարկան:

Կոմիտասի արվեստի փառաբանումն ու հավիտենականությունն են հաստատել Վահան Թեքեյանը, Մարի Աթանճյանը, Ազատ Վշտունին, Գուրգեն Մահարին, Կոստան Չարյանը, Վահրամ Ալազանը, Նաիրի Չարյանը, Սողոմոն Տարոնցին և շատ ու շատ գրողներ, բանաստեղծներ: Ներշնչվելով Կոմիտասի կերպարով՝ նրանք երգահանին դարձրին հայ ժողովրդի ոգին, նրա հավերժ պատմությունը, հայ երգի Արարատը:

Առաջինը՝ 1917-ին Կոմիտասի կերպարին անդրադարձավ Ազատ Վշտունին՝ գրելով «Կոմիտասին» բանաստեղծությունը:

*Երգերը քո խոր հուզող,
Թախծ ու սեր, կյանքի թրթիռ,
Ինչպես զեփյուռ քնքուշ ու զով,
Ինչպես սրտեր բոցող հրթիռ...*

Ժողովրդի սիրտն է հեռուն
Քո երգերուն թովիչ, գերող.
Եվ բյուր մարդիկ մոտիկ-հեռվում
Շնչում են խոր քո երգերով...

Քանի որ կա հայրենի հող,
Քանի որ կա արվեստ վսեմ,
Դու կմնաս սրտեր գերող,
Կապրես դու միշտ, քեզ կլսեն...

1936-ին Կոմիտասի աճյունը տեղափոխվեց Երևան: Այդ առթիվ Կոստան Ջարյանը գրել է «Կոմիտասին» բանաստեղծությունը, ուր մեծ երգահանի հավերժության գովքն է անում:

Բարի ճանապարհ, վարդապետ, վերադարձ բարի...
Բայց այդ կլինի հիշատակ վերջին, այս բիրտ աշխարհի
Հիշատակ վերջին: Վերջին մղձավանջ, վերջին սև տեսիլք,
Որի դանակը մորթել էր երգդ և սիրտդ փակել թանձր խավարում:
Հետո վարդապետ, լսո՞ւմ ես ծայրը տարագիր սրտիս,
Հետո, վարդապետ, կգա վեհաշուք, պայծառ գմբեթը հայոց աշխարհի
Եվ կբարձրանան լուսե խմբերի երգեր անմահ...
Անհամբեր շարքով քեզ կբուրեն լեռները մեր վես,
Դաշտերը մարմանդ, դալար սեզերը, ծորերը մեր խոր,
Ոսկե կոկորդով կլկլան, ուրախ աղբյուրները մեր,
Ճառագայթների բամբիռը զարնող գետերը զվարթ,
Եվ դա կլինի համերգ մի հսկա, որի նմանը չի լսվի երբեք
Եվ ոչ մի վայրում:

Դեռևս պատանեկան տարիներից Եղիշե Չարենցը տարվում է Կոմիտասի երգերով, նրա արվեստով: Կոմիտասի մեղեդիների մեջ նա տեսել է մեր ժողովրդի պատմությունը, հոգեբանությունը, ոգին, ողջ զգայական աշխարհը, անցած ուղին՝ շարականներով ու տաղերով, պանդխտության և ազգային-ազատագրական պայքարի երգերով: Բանաստեղծը երգերի մեջ տեսել է հայ ժողովրդի ուժն ու հոգու հարստությունը:

Գուրգեն Մահարին վկայում է. «Ակտել Բակունցը դեռևս ճեմարանից հիշում էր Կոմիտասի երգերը, երբեմն նեղ շրջանակում Կոմիտաս էր երգում

չափ տալով՝ չնայած որ միակ երգողն ինքն էր: Չարենցը շատ էր սիրում այդ երգերը:

– Մի Կոմիտաս երգիր, Ակսել...

Երբեմն էլ, երբ նեղսրտում էր ու ձանձրանում, գլխարկը քաշում էր աչքերին և երեխայի նման ժպտում:

– Գնանք Ակսելի մոտ, Կոմիտաս լսենք»:

Անձնական և ստեղծագործական առնչություններ Կոմիտասն ու Չարենցը չեն ունեցել: Բայց հոգևոր երաժշտությամբ տարված Չարենցը չէր կարող անտարբեր մնալ Կոմիտասի հանդեպ: Այդ սերը սկիզբ էր առել տարիների խորքից: Երգահան Մարտին Մազմանյանն իր հուշերում պատմում է Մոսկվայում հայկական մշակույթի տանը Կոմիտասին նվիրված համերգի մասին, որին ներկա են եղել ռուս նշանավոր կոմպոզիտորներ, երաժշտագետներ, ինչպես նաև Չարենցը: Համերգն ունեցել է մեծ հաջողություն՝ հիացմունք պատճառելով ներկա գտնվող երաժշտական հեղինակություններին: «Համերգից հետո մենք երկար ժամանակ խոսում էինք երիտասարդ հանրապետության փայլուն ապագայի մասին: Այդ զրույցի ժամանակ Չարենցը մի քանի անգամ ասաց.

– Տեսա՞ք, ինչ բարձր կարծիք հայտնեցին ռուս անվանի արվեստագետները մեր Կոմիտասի ստեղծագործական տաղանդի մասին»:

Կոմիտասի և Չարենցի «հանդիպման» մասին իր հուշերում Ռուբեն Չարյանը գրում է. «Կոմիտասի թաղումն էր: Դազադը դրված էր կուլտուրայի տան դահլիճում: Ահագին բազմություն էր հավաքվել հրաժեշտ տալու: Շատերը կային: Հանկարծ դուռն մոտ եղած հասարակությունը ճեղքվեց՝ մեկին ճանապարհ տալու համար: Չարենցն էր: Տխուր էր, մորուսած, դեմքը գունատ: Բարձրացավ պատվանդանին, գլուխը կախ կանգնեց, տրտում հայացքը դազադի ապակյա դիմաշրջանակին, որի տակից երևում էր Կոմիտասը: Չարենցը մի պահ կանգնեց, ապա կռացավ, համբուրեց ապակին և լուռ քայլեց դեպի դուռ: Անմիջապես ճանապարհ տվին: Գնում էր գլուխը կախ, ձեռքերի մեջ ճմրթելով գլխարկը: Այդ օրը նա չի մասնակցում հուղարկավորության:

Երեկոյան իմանալով թաղման մանրամասնությունները՝ Չարենցը կրկին հուզվում է, արտասվում: Երկար լռելուց հետո, ինչպես գրում է Չարյանը, ասում է. «Կանցնեն տարիներ... Կոմիտասի երգը դուրս կգա մեր երկրից, կլսեն ու կգարմանան: Կոմիտասը հայ է, բայց աշխարհինն է, բոլորինը, մարդկությանը: Կգա ժամանակ, երբ Կոմիտասին հողի տակից կհանեն:

Դամբան կկառուցեն նրա համար: Թող պատկի այնտեղ, և բոլորը գան ի տես: Նա արժանի է դրան, բոլորից ավելի, գուցե միայն նա: Սա այլևս աճյուն չէ, այլ սրբազան մասունք, ուրեմն և մեղք է նրան հողի տակ պահելը»:

Բանաստեղծը մեծ երաժշտագետի մեջ տեսել է նոր իրականությանը հարազատ ներքին մի աշխարհ, որը 20-րդ դարի ողջ երաժշտական աշխարհի համար կատեղծի հարուստ ու մնայուն մի գանձարան: Չարենցը գնահատում է սեփական ժողովրդի զգացմունքների ամբողջությունը կազմող այն երաժշտությունը, որն իր մնայուն տեղն է ունենալու հայ ժողովրդի պատմության գալիք բոլոր ժամանակներում: Եվ այդ հիմքի վրա էլ ծնունդ է առնում ազգային նորագույն երաժշտությունը: Բանաստեղծը Կոմիտասի երաժշտության մեջ տեսնում է հայ ժողովրդի պատմական բախտը և նրա լուսավոր ապագան:

Կոմիտասի նկատմամբ ունեցած արտակարգ սիրո արտահայտությունն եղավ Չարենցի 1936-ին գրած «Կոմիտաս» պոեմը: Գրել Կոմիտասի մասին՝ նշանակում է գրել հայ ժողովրդի վերջին 100-ամյա պատմությունը՝ ժողովրդի պայքարի ու երազանքի, անցյալի ու ապագայի, խոսքի ու երգի մասին:

Ոգեշնչման ու ներշնչանքի ի՛նչ անկրկնելի պահեր է ունեցել բանաստեղծը, մտքի ինչպիսի՛ թռիչքներ, անքուն քանի՛-քանի գիշերներ, բերկրանքի ու վշտի, տխրության ու սփոփանքի, սիրո ու հուսախաբության ինչպիսի՛ պահեր պիտի ապրեր բանաստեղծը տարիների իր երազանքին ձև ու շունչ տալու համար: Նա հոգևոր ճանապարհորդություն կատարեց Կոմիտասի աշխարհում՝ լույս աշխարհ բերելով իր ոգու հերկը, ցանքը, իր երգի արևը: Կոմիտասին նվիրված պոեմի հետ կապված են մի շարք հանգամանքներ: Հայտնի է, որ մինչև 1935-ը Չարենցը որևէ ակնարկ կամ հիշողություն չի թողել Կոմիտասի մասին: Այդ բանը ճիշտ է մեկնաբանում բանաստեղծի դուստր Անահիտ Չարենցը. «Թվում է, թե միայն մեկ էական բացատրություն պետք է տալ այս լուսությանը՝ Կոմիտասի անսահման պաշտամունքը: Խորհուրդներ կան կյանքում, որոնց մասին հաճախակի խոսելը սրբապղծություն է: Կամ պետք է արժանի, համապարփակ երգով սպառել դրանք, կամ լուռ մնալ»:

Սակայն 20-րդ դարի համաաշխարհային գրականության լուսատուների հետ չափվող բանաստեղծը չէր կարող լուռ մնալ, ինչ-որ ժամանակ պետք է ասեր տարիներ շարունակ հոգում կուտակվածը:

Այդպես էլ եղավ: 1935-ին ավարտվեց Կոմիտասի երկրային մեծ տառա-

պանքը: Այս լուրը ցնցեց բանաստեղծի հոգին: Անահիտ Չարենցը հիմք ընդունելով ժամանակակիցների վկայություններն, գտնում է, որ բանաստեղծը 1936-ից ավելի վաղ է հղացել Կոմիտասի մասին գրելու միտքը, այսինքն՝ սկսել է գրել նրա մահվան լուրն առնելուց հետո: Ահա և Աղավնի Մեսրոպյանի վկայությունը. «1935-ի աշնանը մեծատաղանդ բանաստեղծ Եղիշե Չարենցը ցույց տվավ իր մեկ ձեռագիր աշխատությունը՝ «Կոմիտաս-պոեմա» խորագրով:

... Տեսնելով իմ հրճվանքս և զայն օր առաջ կարդալու փափագս՝ Չարենցը ավելացրեց. «Հույս ունեմ, որ շուտով կավարտեմ»:

Անահիտ Չարենցը ենթադրում է, որ նախնական տարբերակը գրվել է 1935-ին և մեզ չի հասել: Բայց մեզ են հասել «Կոմիտասի համար» ռեքվիեմների երեք տարբերակները, որոնցից առաջին երկուսը սևագիր վիճակում, իսկ երրորդը՝ արդեն մաքրագրված ու տպագրության պատրաստ: Չարենցը պոեմը սկսել է գրել 1936-ի մայիսի 30-ից (այսինքն այն օրերին, երբ Կոմիտասի աճյունը բերվում է Փարիզից և ամփոփվում հայրենի հողում) և ավարտել կես տարի անց՝ նոյեմբերի 30-ին:

Պոեմը ուժեղ ապրումների և պոռթկումների ծնունդ է, ուր բանաստեղծն իր խոհերն ու զգացմունքներն է արտահայտում ժողովրդի գոյի մասին: Այն հաստատում և փառաբանում է Կոմիտասյան արվեստի հավիտենականությունը: Չարենցը դասական վեհությամբ վեր է հանում Կոմիտասի կյանքն ու գործը, որը մեծ սխրանք է՝ հանուն հայրենի երգի.

Հայրենի երգն ես դու մեր՝
Վերադարձած հայրենիք:—
Դեմքիդ տանջանքն է դրել
Անագորույն մի կնիք:—
Եվ հանճարի հեռակա
Հուրն է հանգչում ճակատիդ,
Ինչպես մարող ճառագայթ
Արարատի գագաթին:—

.....
Հայրենի երգ մեր վսեմ,
Հազարամյա՝ մեր հանճար,—
Լոկ ժողովուրդն է հյուսել
Քո դաշնությունը պայծառ,—
Քեզ ժողովուրդն է խոնարհ

Տառապանքով իր ծնել,
Իր ավունով պահել վառ,
Իր ոգու մեջ ընդունել...

Կոմիտասին Չարենցը ներկայացրել է որպես ժողովրդի հետ սերտորեն կապված ձայնապետի: Ժողովուրդն է սնուցել և զորացրել մեծ երգահանին: Վերցնելով ժողովրդից նրա երգն ու տաղը՝ Կոմիտասը մշակել, նորից վերադարձրել է ժողովրդին՝ «Քոյս ի քոյոց զբեզ մատուցանեմ»: Կոմիտասի երգերի թեման, Չարենցի բնորոշմամբ, աշխատանքն ու աշխատավորն է, հայ գեղջուկը՝ իր մաճով ու արորով:

Դու աշխատանքն ես երգել,
Եվ քրտինքը մաճկալի,
Անջուր հանդեր ու հերկեր,
Սիրո երգեր անձկալի...
Դու պանդուխտի տարագիր
Սիրտն ես երգել կարոտող՝
Անհայրենիք արագիլ՝
Կապված սիրո նարոտով:

Հնչյուններ ես հավաքել
Հենքի համար քո երգի
Դու՝ հանդերից մահաբեր
Հայրենական եզերքի,—
Եվ հայրենի հանդերի
Սրմունջներից չմարող
Հյուսել ես երգ անթերի
Սերունդների համար նոր:—

Այս պոեմը մեծ երաժշտագետի կյանքի ու գործի իմաստավորումն ու արժևորումն է: Չարենցն իր տաղանդի զարմանալի պարզությամբ երկու տողում ամփոփել է նրա արվեստի էության խորությունը:

Երգեր՝ կյանքի նման խոր
Եվ զրկանքի նման վեհ:—

Չարենցը բացառիկ զգացմունքայնությամբ, ջերմ հայրենասիրությամբ ու անսահման սիրով է գրում, որ Կոմիտասը ծնվել է ժողովրդից, սնվել նրա «սուրբ կաթով», «երգ ու հնչյուն տալով նրան»: Եվ հետո շարունակում.

Այր մահացու աշխարհում նա եղել է դպիր, վարդապետ,
Այր մշտատև ծայնապետ-ծայների, արքա-ծայնագիր:

Բանաստեղծը մտահոգվում է, որ երաժշտության մեծ վարպետը չտեսավ իր երկրի այգաբացը, միայն նրա աճյունն է տեղափոխվել և թաղվել հայրենի հողում.

Եվ հայրենի այդ հողից,
Չանցած գարուն մի քանի –
Կելնեն շքե՛ղ և ուղիղ
Երգի շյուղե՛ր կենդանի:–
Եվ շշունջում, երգեցիկ,
Յնչեղ երգում նրանց խոր –
Կապրի հանճարը քո ջինջ՝
Անմահ երթի ելած նոր...

Ասես տառապած հանճարի, որպես օրհներգ, հնչում է վերջին ութնյակը, որն ավարտվում է խոր մի ընդհանրացմամբ և կրկին հավաստում երգի մեծ հանճարի կատարած գործի վեհությունն ու նրա անմահությունը.

Կխաղաղվի՛ վերջապես
Կոնջած աճյունը քո հար –
Դարձած մոխի՛ր կենսաբեր,
Դարձած ավյո՛ւն, դարձած քար:–
Անեացա՛ծ, սրբացած
Կապրի ոգիդ հմայող՝
Դարձած ելնո՛ղ երգի ծայն –
Եվ հայրենի՛ դարձած հող...

Այստեղ Չարենցը ներկայացնում է յուրաքանչյուր դարաշրջանի համար Կոմիտասի արվեստի անհրաժեշտության և ճշմարտության գաղափարը: Չարենցը համոզված էր, որ Կոմիտասի երաժշտությունը մշտապես ուղեկցելու է մարդկությանը՝ իբրև նրա խոհերի, կյանքի ամենաբազմազան երևույթների մարմնավորման եղանակներ:

Այս պոեմով բանաստեղծը չսպասեց կոմիտասյան թեման: Դրանից հետո նա գրեց նոր ուերվիեմ, որից մեզ հասել են մի քանի պատատիկներ: 1936-ին նա գրեց նաև երկու տապանագիր, որոնք վերստին հատակորեն ցույց են տալիս Կոմիտասի տեղը Չարենցի հոգում և ստեղծագործության մեջ:

Չարենցը, խորապես զգալով Կոմիտասի մեծությունը, նրա ներքին դրաման՝ ծնված հայ կյանքի ծանր վիճակից, նպատակ ուներ նրա երգի փառքը միշտ անմահ պահել հայ ժողովրդի սրտում:

Այդպես էլ եղավ:

Կոմիտասի կերպարը հուզել, մտահոգել ու ապրեցրել է բազմաթիվ բանաստեղծների, որոնց սրտի խոսքը Կոմիտասի հավերժության մարմնացումն է: Այդպիսին է Գեղամ Սարյանի «Դեպի կառափնարան» բանաստեղծությունը:

Այնտեղ էին նրանք... Այդ չարագործ նավում,
Չայոց քնարների վարպետները բոլոր,
Չայոց պայծառ մտքի աստղերն էին մարում
Այդ ահավոր ժամին խավարի դեմ անգոր:

Նրանց տանում էին հեռու կառափնարան,
Գունատ էին նրանք: Երկու հարյուր էին:
Տաճիկ սպաների հայացքն անասնական
Դաշույնների նման կախված գլուխներին:

Այնտեղ էին նրանք... Վարուժանը խոհուն,
Սիամանթոն հայացքն ուղղած դեպի եթեր,
Եվ ո՞վ գիտե արդյոք, արդյոք ի՞նչ էր խորհում
Կոմիտասը հոգում պահած բազում երգեր...

Եվ ո՞վ գիտե արդյոք աչքերն հառած ջրին
Ի՞նչ խոր հույզեր էին լուռ պաշարել նրան,
Որոնք նրա հոգին վշտով լցնում էին,
Մթնշաղին ծովի շշուկների նման...

Գուցե խորհում էր նա արցունքը կոկորդում
Իր գլխատվող, անօգ ժողովրդի մասին,
Եվ ծովն էր նրա լուռ հոգու մեջ փոթորկում,
Եվ բազմաթիվ սրտեր նրա հետ միասին:

Երանց տանում էին հեռու կառափնարան.
Լուռ էր Վարուժանը, Սիամանթոն խոհուն,
Հայացքն ուղղած դեպի երկինքը անսահման
Կանգնել էր Կոմիտասն ինչպես տաճարի սյուն:

Կոմիտասին անմահացրել են բանաստեղծների տարբեր սերունդների
ներկայացուցիչներ՝ Սարմենը, Մարո Մարգարյանը, Սիլվա Կապուտիկյանը,
Քևորգ Էմինը, Հովհաննես Շիրազը, Համո Սահյանը, Վահագն Դավթյանը,
Աշոտ Գրաշին, Արման Կոթիկյանը, Աղավնին, Միքայել Հարությունյանը,
Լևոն Միրիջանյանը, Լյուդվիգ Դուրյանը, Գարիկ Բանդուրյանը և էլի
շատ-շատերը: Բոլոր գործերն էլ հուզիչ են և տպավորիչ, բայց ավելի մեծ է
հատկապես Շիրազի մորմոքը.

Դու մեր հին վշտերի մորմոք, մեր սիրո ծիրանի դու ծով,
Կոմիտաս, թե մթին հեռվում հալվի էլ Մասիսն իմ անհետ,
Դու նորից Մասիս կմնաս մեր երգի նուրբ շշնջոցով,
Աշխարհի ծովերը մտած դու հայոց մայր մրմունջի գետ:

Իսկ Համո Սահյանի «Կոմիտաս» բանաստեղծությունը մտորումների ու
թախծելու տեղիք է տալիս.

Քո երգերի մեջ գութանի վար է,
Ծիրանի ծառ է ու խնկի ծառ,
Սիրավոր լոր է ու Սոնա յար է,
Թուխ այտի խալ է ու ծնկի ծալ:

Կոմիտասին նվիրված բանաստեղծությունների մեջ հատուկ ուշադրության է արժանի Սիլվա Կապուտիկյանի «Էրվում եմ, էրվում» ստեղծագործությունը:

Ես նրան տեսա իր մոլեգնության գերագույն պահին.
Հևիև ոիթմից դեմքը փոխված էր՝ այլայլված, դեղնած,
Ականջը դոփող եղանակի տակ մի անմարդկային
Ծոմռվում էր նա:
Մթնեցին ասես աչքերս հանկարծ,
Սեղմվեց հոգիս վիրավորանքից, զայրույթից, ցավից.
Թվաց, որ այստեղ, այս սենյակներում

Իմ Կոմիտասը՝ հրից ու սրից հազիվ փրկված
 Մի երրորդ անգամ մեռնում է դավից...
 Դու, երիտասարդ,
 Դու, որ նշածն սև աչքեր ունես և ունքեր կեռման,
 Որ գեղեցիկ ես Արայի՛ նման,
 Խորիե՞լ ես արոյոք, թե ինչքա՛ն էր պետք քո հին հայրերին
 Ջոհաբերություն, ոգի և գորով,
 Որ մեր այդ երգը՝ Գողթան գուսանի դողող շուրթերից
 Դժվար դարերի թոհուրոհերին
 Տոկար ու հասներ ճարտարարվեստի դարին այս նորոգ
 Ու դառնար խոսուն մի երգապնակ...
 Եվ հիմա, հիմա դու հեշտ ու հանգիստ, անտարբեր սրտով
 Խեղդել ես նրան ցելուլոփի լարձուն շերտով,
 Տրորել խենեշ այդ երաժշտության սմբակների տակ...
 Պոկիր, շո՛ւտ պոկիր երգապնակից
 Կրակե շապիկն այդ կանաչավուն.
 Լսո՞ւմ ես, օտար թաղանթի տակից
 Հարազատ մի ծայն կանչում է ցավով,–
 «Երվո՛ւմ եմ, երվո՛ւմ»:

Կոմիտասի լեգենդար կերպարը ամբողջապես հառնեց Պարույր Սևակի գրչի տակ: Սևակյան հանճարի զորեղ կնիքով դրոշմվեց անմահ Կոմիտասը:

Կոմիտասի կերպարը Սևակն առաջին անգամ փորձել է կերտել 1949-ին: Այդ բանաստեղծությունը կոչվում է «Ես երկու տասնյակ տարի»: Կոմիտասի 80-ամյակին նվիրված այս փոքրիկ բանաստեղծության մեջ Սևակն իր ապրումների արտահայտման հիմք է դարձրել այն գաղափարը, որ երկու տասնամյակ հետո կնշվի մեծ երգահանի 100-ամյակը: Իսկ 1956-ին նա գրեց հայտնի այս քառյակը.

Նորից երգում-մորմոքում է աստվածային Կոմիտասը,
 Կախարդում է ու մոգում է աստվածային Կոմիտասը...
 Ամենամե՛ծ դու նահատակ, ամենահա՛յր, ամենահա՛յ,
 Գինու կարասն ուրիշներին, մեզ հերիք է քո մի թասը...

Պարույր Սևակն անսահմանորեն պաշտում է Կոմիտասին, և այս ամե-
 նը դեռևս քիչ էր՝ արտահայտելու իր ցավն ու մորմոքը:

«Իմ գիտակցական ողջ կյանքում ես եղել եմ Կոմիտասի հետ, եթե կարե-

լի է ասել՝ նրա մեջ, ինչպես բջիջը մարմնում, և այդպես էլ կգնա մինչև այն օրը, որ «վախճան» է կոչվում», – այսպես է արտահայտել բանաստեղծը իր սերը մեծ երգահանի հանդեպ:

Կոմիտասի թեման մշտապես զբաղեցրել է Սևակին: Եվ նա, մտահոգված նրա կերպարով ու նրան ծնող ժողովրդի ճակատագրով չէր կարող չժայթքել մի օր: Եվ այդ օրը եկավ: Ծնվեց «Անլուելի զանգակատունը»:

«Իմ ամբողջ կյանքում, – խոստովանել է Սևակը, – ես մտքիս մեջ գրել եմ «Զանգակատունը», գրել եմ զանազան «ձևերով»՝ իբրև վեպ, իբրև վիպակ, իբրև ուսումնասիրություն, իբրև հողվածների շարք, իբրև ողբերգություն կամ դրամա, ես գիտեի, որ դա մի օր պիտի գրվի»: «Անլուելի զանգակատունը» ծնվեց 1958-ի նոյեմբերի 21-ին: Ինչպիսի՞ քերկրանք, ի՞նչ տխրություն, ի՞նչ սփոփանք: Քանի՞-քանի անբուն գիշերներ, ու ինչ հաղթանակ: Ծնվեց և ամբողջացավ հանճարեղ երգահանի կերպարը:

Իր ժողովրդի զավակն իսկական՝
ժողովրդի պես ինքն էլ որբ մնաց.
Նա նույնիսկ չկար և մի տարեկան,
Երբ... մայրը գնաց:

Ա՛խ, եթե գնաց՝
Նրա լույս հոգին թող որ համբառնա,
Արժանի դառնա
Իր հավատացած երկնային գահին:

Բայց ինչո՞ւ գնաց Հայոց թագուհին:

Մնար
Որ ծիծ տար
Իր Սողոմոնի՛ն - մեր Կոմիտասի՛ն:
Մնար
Ու հոգար
Մեր մինուճարի՛ - իր որդու մասին:
Մնար ու նրան մայրություն աներ,
Հուսահատության տրտմության պահին
Նրա ճակատի
Ամպերը վաներ.

Նախ՝ նրա ոտի
Ու հետո սրտի
Փշերը հաներ:

Մնար, որ հետո
Շա՛տ ու շա՛տ հետո.

.....
Իր մինուճարի
Ու մեր հանճարի
Սև ցավը տաներ...

Մնար,
Որ նրան մի ողջ ժողովուրդ
«Մեծ Մա՛յր» անվաներ,
«Վեհամա՛յր» կոչեր.
Մի ողջ ժողովուրդ սուրբ ձեռքը նրա
Իր բերնին տաներ,
Փեշե՛րը պաչեր...
Մնար... Չմնա՛ց:
Գեթ հայրը մնար...
Բայց հայրն էլ գնաց,

Երբ որդին չկար տասը տարեկան:
Իր ժողովրդի զավակն իսկական՝
ժողովրդի պես նա որբուկ մնաց:
Նա մնաց անտուն, մնաց բնավեր:
– Տո լաճ տնավե՛ր...

Գրկանոց հասակ, վիրավոր սրտիկ,
Աչքերում արցունք, ճակատին քրտինք,
Աշնան պաղ քամուն ու ծնռան ցրտին
Որբուկն ո՞ւր մնա, որբուկն ո՞ւր գնա,
Որտե՞ղ տաքանա, ո՞ւմ թոճրան շրթին:
– Տո լա՛ճ տնավե՛ր...

Հայ ժողովրդի ու Կոմիտասի կենսագրության ողբերգական ճակատագրե-
րը ունեն նույնություն: Այդ փաստը գրավել է նաև Սևակի ուշադրությունը:

Կոմիտասը ոչ միայն իր ժողովրդի հարագատ ծնունդն է, այլև ժո-
ղովրդին վերածնողը: Բանաստեղծը կերտել է երգի առաքյալի ոգեղենա-
ցած կերպարը: Պարույր Սևակը երգահանի դիմանկարը մարմնավորել է
գրքի քառասունվեց դոդանջներում՝ յուրաքանչյուրում աստիճանաբար բա-
ցելով նրա հոգու ծալքերը, ծովացած սերն ու տառապանքը, դրամատիկ

բախումներն ու պայքարը, հաղթանակներն ու կորուստները, և վերջապես նրա կյանքի ողբերգական ավարտը: Ահա Կոմիտասի դիմանկարի առաջին պատկերներից մեկը՝ թուրքական խավարից ուսման համար Էջմիածին եկած որբ Սողոմոնը ճեմարանի բակում հավաքված երեխաների շրջապատում.

Ութը հարյուր ութսունմեկ թիվ: Էջմիածին:

Միրզ ու փոշի: Անխիղճ արև:

Շողանրցում Մասիսների, Արագածի:

Սրբագործված հին-հին քարեր:

Եվ Մայր Արաքս: Եվ Մայր Տաճար,

Տաճարի շուրջ՝ սուրբ-սուրբ վանքեր,

հնչո՞ղ

շնչո՞ղ

Կանչո՞ղ զանգեր...

Եվ ճեմարան՝ մտքի կաճառ –

ճեմարանի բակում արձակ,

Որտեղ էլ որ աչք ես ածում՝

Խոսվածքների, տարազների

Ջարձանալի հավաքածու

Ու բոլորի դեմքի վրա՝

Վախ, սպասում, անքնություն,

Խոսուն հետքեր երազների:

Ամեն մեկը՝ մի գավառից,

Եվ բոլորը՝ դեռ աղվամազ:

Ամեն մեկը խիտ խավարից՝

Երազում է լույսի մի մաս,

Լույս է ուզում –

Ուսո՞ւմ, ուսո՞ւմ...

.....

.....

Եվ նրանց մեջ՝ սրան նայիր,

Հագին տարազ տաճկահայի,

Կարմիր շապիկ, կանաչ վարտիք՝

Վրան պնդած մազե գոտիկ,

Նախշուն գուլպա՝ վրան զոլեր,

Ու պոչավոր մաշված սուլեր:

Դեմքը՝ գունատ, բայց խորոտիկ,
Իսկ հայացքը՝ քելե՛ր-ցուլե՛ր...

Ամենքն իրար՝ մոտիկ-մոտիկ,
Իսկ նա՝ անվերջ մեն ու մենակ:

Թե զարնեին սրտին դանակ՝
Մի պուտ արյուն դուրս չէր հոսի:
Ո՞նց չմնա նա մեկուսի,
Ո՞նց խառնըվի, ասի-խոսի,
Թե... հայերեն վատ է խոսում:
Բայց նա, մեկ էլ աստված գիտի,
Թե ինքն ինչպե՛ս, ո՞նց է ուզում
Ուսո՛ւմ, ուսո՛ւմ:
Սակայն նրան

Ո՞վ կընդունի, այն էլ... որտե՛ղ -
Մի հոգևոր ուսումնարան,
Որի սանը մի օր պիտի
Դառնա հայոց ժամտան տերտեր,
Հագնի վեղար վարդապետի:
Իսկ նա...

Եվ նա վաղը պիտի
Երգի ի լուր և ի վճիռ
Համայն Հայոց Հայրապետի...

Թվում է, թե կենդանի քանդակ է: Մենք զգում ենք, թե ինչ է թաքնված պատանու ներքին աշխարհում, կարդում ենք նրա հոգեվիճակը: Եվ ահա Սողոմոնը Վեհարանի մեջ է, ոչ թե հայերեն «Հայր մեր», «Միայն Սուրբ», «Արեգակն արդար», «Ո՛վ զարմանալի», «Խորհուրդ խորին» երգելու, այլ թուրքերեն երգելու.

Եվ նա սկսեց... թուրքերեն երգել:
Սանկական ծայնը՝ սկզբում կերկեր,
Վայրկյաններ հետո ինքն իրեն գտավ,
Հունի մեջ մտավ
Ու գնա՛ց-գնա՛ց:
Կաթողիկոսը մթազնեց մնաց:
Մինչ հանկարծահաս զայրույթի ծնած

Կրակը վառվեց ծեր աչքերի մեջ՝
 Չենց նոր սկսվող ժպիտը հանգավ:
 Առաջին անգամ,
 Առաջին անգամ
 Աստ՝ Վեհարանի հին պատերի մեջ,
 Սրբապղծորեն թուրք երգ է մխում...
 Աստ՝ հայոց հոտի այս սուրբ փարախում,
 Չովվապետն ինքը ականջ է կախում
 Ինչ-որ մի մանկան անօրեն երգի...
 Աստ, ուր հնչել են մեղեդիք ոսկի՝
 «Չայր մեր», «Միայն սուրբ»,
 «Արեգակն արդար»,
 «Ով զարմանալի»,
 Կամ «խորհուրդ խորին»,
 Ուր գրաբարն է հնչել դարեդար
 Եվ շարականն է հուզել բոլորին,—
 Աստ՝ Վեհարանի հին պատերի մեջ,
 Առաջին անգամ,
 Առաջին անգամ
 Սրբապղծություն մանանեխ ընկավ...

Բայց Վեհափառը իր վեհ դերի մեջ՝
 Ինչպես վայել է անայլայլ մնաց:
 Իսկ մանկան երգը... թափ առաջ գնաց:
 Գնաց - բարձրացավ,
 Եկավ - ցածրացավ,
 Քարեքար ընկավ, պատեպատ խփվեց,
 Եվ հետո՝ կրկին պոկվեց ու գնաց,
 Մի վայրկյան օդում կախ ընկավ մնաց՝
 Մի անտես թելով կարծես թե կապվեց
 Եվ, մի պահ հետո, հանկարծ ցած թափվեց,
 Թափվեց՝ նշենու ծաղկաթերթի պես,
 Չին վանքի ծեփի ճաքած շերտի պես...

Բառերը... եղո՛ւկ: Իսկ ծա՛յնը... զուլա՛լ.
 Այդպես լեռնային վտակն է կարող
 Քարերի վրա ծիծաղել ու լալ:
 Բառերը... եղո՛ւկ: Իսկ ծա՛յնը... գերող...

.....
 Կաթողիկոսը մի պահ մոռացավ,
 Թե ինքը որտե՞ղ և ի՞նչ է անում,
 Ովքե՞ր են շուրջը՝ իր Վեհարանում,—
 Եվ այդքանի մեջ,
 Ասես քնի մեջ,
 Նա դանդաղ ժպտաց
 Աչքերով իր թաց:
 Հետո ժպիտը սկսեց հալվել
 Ու հետզհետե անհետ վերացավ,
 Մինչդեռ աչքերի թացն ավելացավ,
 Թացն ավելացա՛վ ու ավելացա՛վ...
 Փղձկացող Վեհը հազիվ բարբառեց.
 — Որոյա՛կ իմ, ո՛րք իմ...
 Ու ձայնը մարեց:

Բանաստեղծն այսպես շարունակ, պատկեր պատկերի, քանդակ քանդակի ետևից ներկայացնում է մեր ժողովրդի տխրության առիթները և այդ ֆոնի վրա կրակով այրվող Կոմիտասի կերպարը: Այդ անցումներում պատկերում է ժողովրդի կյանքը, կենցաղն ու առօրյան, ուրախություններն ու վշտերը, կորուստներն ու հույսերը:

Պարույր Սևակը, խորապես թափանցելով պատմական դեպքերի մեջ, Կոմիտասին կերպավորում է որպես ազգի մի անհատականություն, որին ժողովուրդն իրավունք է տվել մարտահրավերի դուրս գալ քարացածության, անազնվության, հետամնացության ու պահպանողականության դեմ:

Կոմիտասի կյանքի ու դիմանկարի պատկերման հետ ընթերցողի առջև փռվում են մեր ժողովրդի ծանր ճակատագրի արհավիրքները.

— Ո՛վ արդարություն,
 Թող որ ես թքեմ ճակատին քո բաց,
 Գոչել էր մեկը քարերով ջարդված այդ հանճարներից,
 Գոչել ո՛չ հիմա.
 Այն ժամ էր գոչել,
 Երբ խուժանն այս նույն
 Արյունով հարբած գազանի նման
 Դրոպվելով միայն վայրենուն հայտնի իր պատճառներից,
 Ո՞րերորդ անգամ մոխիր էր թողնում
 Սեր արտ ու այգուց, մեր տաճարներից:

Եվ հիմա՛,
 Հիմա՛,
 Երբ կոտորած չէր, երբ ջարդ չէր,
 Այլ մա՛հ՝
 Մահ համատարած և համազգայի՛ն,
 Մահ ծերի՛,
 Մանկան,
 Խեղճի՛
 Հսկայի՛,
 Երբ մահվան մրրիկ,
 Երբ մահվան բուք էր,—
 Այլևս որտե՞ղ, որտե՞ղ էր թուրքը,
 Որ արդարության ճակատը փակեր:
 Ախ, չորացել էր հայոց աշխարհի բերանն ու բուկը:
 Էլ ինչպե՞ս թքել,
 Եվ այդ ո՞վ թքեր,
 Թե հայոց երկրում էլ մարդ չէր մնում,
 Բովանդակ մի ազգ թե կուլ էր գնում,
 Թուրք յաթաղանի պաղբոց պողպատին,
 Հայոց հայալիք Տիգրիս—Եփրատին,
 Սև արաբների շեկ անապատին՝
 Օ՛րը ցերեկով,
 Ոչ թե աննկատ:
 Եվ ունեցե՞լ էր արդարությունը երբևէ ճակատ:
 Օ՛, ո՛չ նա ուներ միմիայն քամա՛կ,
 Քամա՛կ մի խելոք,
 Որ շուռ էր տվել մի բնաջնջվող հինավուրց ազգի՛
 Նախապես նրան զրկելով զարկող ու փրկող բազկից:
 Ոչ թե կար ճակատ,
 Դա ռուս-տաճկական այն ճակատն էր լոկ,
 Որ մոտենում էր՝
 Ասես լսելով
 Կտրվողների,
 Կոտորվողների
 Ահավոր ծիչը,
 Եվ - մեկ էլ հանկարծ - չգիտես ինչու,
 Բռնում էր ճամփան արագ նահանջի՛
 Թույլ տալով իջնի՛

Եվ զարկը վերջին,
Կարծես եղածը դեռևս քիչ էր...

Եվ սակայն նրանց մեղքն ի՞նչ էր, ի՞նչ էր,
Անաստված աստված,
Ինչո՞ւ էր արվում այնքան անօրեն
Եվ ահեղ մի դատ:

Բանաստեղծի շուրթերից երկու միլիոնի հառաչանքներն ու աղաղակները, վրեժի խոսքերը հնչում են զանգակատան հզոր զանգերի պես և թարմ պահում սերունդների հիշողության մեջ: Անայացած երկրի ողբերգական պատկերներից հետո բանաստեղծը «Ղողանջ մթագնումի» բաժնում ոչ միայն մեռածների, այլև ապրողների բողոքն է ներկայացնում ընդդեմ անարդարության ու կատարված ոճրի:

Պարույր Սևակը, աստիճանաբար շիկացնելով իր խոսքը Կոմիտասի մասին, մտքի ու խոսքի հուզական լարվածության դրվատում է հանճարեղ Կոմիտասին՝ նրան համեմատելով հայոց ամենաթանկ անունների հետ, նրան համարելով մշտահունց ու մշտարթուն զանգակատուն: Եվ որպես աղոթք-վերջաբան հնչում է.

Դո՛ւ - Վարդապե՛տ:
Դու Ամենայն Հայոց երգի Վեհափառն ես,
Դու՛ մեր երգի Մեսրոպ Մաշտոց,
Գիրն ու ճարն ես Հայոց երգի:
 Հայոց երգի
 Անժիր հերկի
Ե՛վ ակոսն ու խորունկ առն ես,
Ե՛վ հատընտիր սերմը նրա,
Ե՛վ խոստունը գալիք բերքի...

Եվ մեզանից արդ ընդունիր
Երախտիքի այս խաչքո՛ւռը,
Այս խաչքուռը՝ քո՛ իսկ հերկի:
 Մեր տաղի քուրմ,
 Մեր խաղի մոգ,
Մեր մշտահունչ և մշտարթուն,
Անլռելի զանգակատո՛ւն...



ԿՈՄԻՏԱՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Կոմիտաս, շքեղ տխրություն,
Կոմիտաս, անհուն խնդություն:

Սողոմոն Տարոնցի

Կոմիտասի անունը ձուլվել է հայ ժողովրդի ամենաբյուրեղյա արվեստի՝ երաժշտության հետ: Կոմիտասը հայ երաժշտության մեջ արեց այն, ինչ կատարեց Մաշտոցը հայ ազգային մշակույթի, լեզվի ու գրականության, ազգի գոյապահպանման գործում: Մաշտոցն ու Կոմիտասը համեմատվում են իրար հետ այնպես, ինչպես հայ խոսքն ու ազգային երաժշտությունը: Երկուսն էլ մարմնացել են ժողովրդի մեջ, դարձել նրա ոգին:

Կոմիտասը ոգիացած, սրբացած, տարերք դարձած մտել է ամեն մի հայի մեջ, դարձել նրա շուրթի երգն ու խոսքը:

Հանճարեղ երգաստեղծը հեղինակ է նաև հինգ տասնյակ բանաստեղծությունների, որոնք նրա կենդանության օրոք չեն տպագրվել: Կոմիտասի բանաստեղծությունների ժողովածուն առաջին անգամ լույս է տեսել 1939 թվին Ստամբուլում, «Մշակույթ» հրատարակչության կողմից՝ Թորոս Ազատյանի ներածականով:

Այդ բանաստեղծությունները, որոնք գրվել են ավելի քան ինը տասնամյակ առաջ, մեզ համար թանկ են ոչ միայն որպես կոմիտասյան մասունքներ, այլև որպես նրա աստվածային էության, նրա մտքի ու հոգու դրոշմը: Այդ բանաստեղծությունները վկան են հեղինակի գրական-գեղարվեստական ըմբռնումների, նրա անձնական մտորումների: Կոմիտասի տաղերում արտահայտվել են նրա անհատական հույզերն ու ապրումները: Կոմիտասը խոսում է ծառերի ու ծաղիկների հետ, բնության, կյանքի գեղեցկությունների, սիրո հրապույրի, մարդկային կարոտի, երազանքի մասին: Նրա

խոսքն իր երաժշտության նման բյուրեղյա մաքրություն ունի, մտածողության հստակություն: Կոմիտասյան ոճը թափանցիկ է, մաքուր, ջերմ ու բնական, իսկ մտածելակերպը ջինջ հոգու և բնության բացառիկ հարազատությունն է:

Սևուկ ամպեր վար եկան
Օրան, օրան,
Սարի վրա շար եկան:
Ծագեց առավոտ,
Պաղեց, սառավ օդ:

Կամ

Տեղաց անձրև մաղ տալով
Մարմանդ-մարմանդ
Հոգնած տերև շաղ տալով:
Երկիր քուն դրավ,
Եվ թռչուն թռավ:

«Աշուն օր» բանաստեղծության այս երկու փոքրիկ հատվածները ցույց են տալիս կոմիտասյան խոսքի, պատկերի բնականությունն ու հուզականությունը: Բանաստեղծն ապրում է բնության գեղեցկությունը, իմաստավորում այն, մերձենում նրա հետ.

Ե՛կ, շաղիկ, ե՛կ.
Ե՛կ առավոտե առավոտ.
Գա՛մ, ծաղիկ, գա՛մ,
Գա՛մ այգուն-այգուն
Ու քեզ շաղ տամ:

Բանաստեղծը բնության գեղեցկությունը տեսնում է ամբողջության՝ մարդկության մեջ, և ինքն էլ ընկալում է այդ ամբողջությունը՝ հակասություններով հանդերձ:

Կոմիտասի անձնական զգացմունքն ու ապրումները մի առանձին հետաքրքրությամբ երևում են նրա սիրային պոեզիայում, ուր հավերժացվում է հոգեբուխ սերը, մարդկային հույսը: Նրա սերը նույնպես ձուլվում է բնության հետ, որպես կյանքի գեղեցկություն: Այդպիսիք են «Իմ երագուն» և «Քո երագուն» բանաստեղծությունները:

Եվ այս գիշեր, իմ երագում, քեզ հետ մեկտեղ պարեցինք,
Սեր-ոգիներ սուրբ սեղանում մեղրամոմեր շարեցին:
Ոսկի-արծաթ ամպի ծալեն նուրբ ու բարակ քող ճարեցինք,
Ինծի-քեզի կարմիր-կանաչ սիրո շապիկ կարեցին:

* * *

Եվ այս գիշեր, քո երագում, տեսել ես, որ ես ու դու
երես-երես ճանաչել ենք սիրո ծովում իրարու...

Քո սուրբ սերը սար է դառել
Դալարագեղ, երկնածրար ու բեղուն,
Գլխիդ վերջ ամպ է շարել՝
Գալարահեղ, կամարակապ ու զեղուն:

Սարի շողեն, ամպի քողեն՝
Մենավորի ոգին ծնել, դեգերել,
Ձեռին մի բույս, կանաչ ու կույս՝
Խորհրդավոր ծորեն քաղել ու բերել:

Ծաղիկ-ծաղիկ քեզ որոնել՝
Ամպի տակին՝ արևագին շունչ առել,
Ջրի մոտին, կանաչ խոտին՝
Գլխիդ վերև ծիրան-գոտին փունջ արել:

Կոմիտասի գրչի տակ բաբախում է քնարական ջերմ շունչ, որը գալիս է
հոգու ընդերքից: Առավել ուշագրավ է «Վարդիկս» բանաստեղծությունը,
որն իր անմիջականությամբ ու գունեղությամբ կարող է մրցել միջնադար-
յան լավագույն տաղերի հետ: Նրանում առկա է պայծառ ու լուսավոր տրա-
մադրություն, զգացմունքի կենդանություն:

Խցիկիս մոտ ջուր եմ արել մարգ ու մարգ,
Վարդիկիս հոտ հուր էր դառել բարկ ու բարկ.
Ելա անհոգ սարերի գոգ շրջելու,
Սիրո ամպեր քուրեցին թրջելու:
Մահիճիս քով հուր եմ վառել դողունի,
Վարդիկիս հով դուռ էր ճարել գողունի,

Լանջես ի վեր սիրո շիթեր շաղելով՝
երազ-հույզեր նվազեցին խաղալով:

Գիշեր գացավ՝ լուսին-լուսին հուսալի
Նոր օր բացավ՝ արևն ուսին լուսալի:

Սենավորի խցիկեն՝
 Հուսո սարակ շավիղով
 Աշխարհ մտա,
Վարդի բույրի գծիկեն՝
 Հովի բարակ տավիղով՝
 Քեզի գտա:

Կոմիտաս բանաստեղծը Կոմիտաս երգաստեղծի մնաց լի է առողջ կեն-
սազգացողությամբ: Նրա պոեզիան հարուստ է ժողովրդական մտածողու-
թյան յուրօրինակ առանձնահատկություններով: Նրա բանաստեղծական
տողերը շատ գույեղ են, քնքուշ, թախծալի:

Քեզ չըսիրե՛լ,
 Գեհեն կորել
Ու կըրակով հոգին փորել:

– Քեզի սիրել՝
 Դըրախտ երթալ
Ու վարդերով քընանալ:

«Ծիրանի ծառի», «Ախ մարալ ջանի», «Սիփանա քաջեր» հերոսական
քայերգի հեղինակը լի է հերոսականությամբ ու լավատեսությամբ: Այդ
զգացվում է «Առաջ» խոհական բանաստեղծության մեջ:

Այսօր, նորեն, դենքիդ վրա գիշեր է կաթել,
 Շանթ ու կայծակ ճայթելեն.
Սրտիդ խորեն արյուն կեռա՝ անպեր են պատել,
 Հուր ու փայլակ սայթելեն:

Սրտով բարի,
 Հոգիդ արի՛.

Որ քու նավը
Չըշվարի:

Կյանքի կռիվ՝ ճիշտ դատելով՝
Կանաչ, խռիվ միշտ գատելով:
Դեպի առաջ.
Դեռի՛ հառաչ:

Կոմիտաս բանաստեղծը լավատես է: Չնայած շանթ ու կայծակին՝ նա կոչ է անում միշտ ընթանալ առաջ: Իսկ «Հով ու ծով սեր» բանաստեղծության մեջ հեղինակը ստեղծել է գեղեցիկի փայլուն նմուշ.

...Դոգիս եկավ հովի պես,
Սերը սրտում ծովի պես,
Ծոցին վարդեր՝ ասաց. – Տե՛ս,
Քեզ սիրելու եկա ես:

Բանաստեղծ Կոմիտասի ինքու խորքում մի առանձնահատուկ տեղ է զբաղեցնում գյուղաշխարհը: Նա ամբողջությամբ տարվել է գյուղական կյանքով, գեղջկական նիստուկացով:

Սեր հայ գավառն է խավար,
Տգիտության է ավար.
Ուսում տարեք
Ու լույս վառեք,
Ու հույս վառեք,
Դայ տգետը վտարեք:

Պանծա՛ դու, հայ միություն,
Գյուղին տվիր հայ դպրոց,
Սրտի, մտքի կուռ հնոց.
Պանծա՛ դու, հայ միություն,
Պանծան հայեր բարեգործ.
Դայուն՝ դպրո՛ց,
Դայու՛ դպրոց:

Մեր հայ երկիրն անապատ,
Ու հայն ընկել պատեպատ.
Գութան տարեք,
Ու հող վարեք,
Ու խոր վարեք,
Հողի կուրծքը պատառեք:

Կոմիտասի բանաստեղծությունների շարքում բացառիկ տեղ է գրավում «Մայրիկիս օրորը» տաղը: Դա որդիական սիրո մի գոհար է: Բանաստեղծությունը նվիրական պատգամ է, և սրտառույզ ոգեկոչումի խոսք: Մայրական խորհուրդը և խորհրդին հավատարիմ մնալը գեղարվեստի բարձրագույն կատարելությունն է.

Քեզի տեսնիմ, իմ հատորիկ,
Կյանքիս ուղին, սիրագեղ,
Հայտ ու անհայտ դու որոնե,
Քեզի լինին իրագել:
Մի թափառե կյանքի պարապ
Անապատում դու իզուր,
Քեզ պահապան սուրբ հավատով,
Հուսո, սիրո լույս ու հուր:
Օրիկ Օրին,
Իմ անուշին:

Գիշեր-ցերեկ, լուսնե լուսին
Ստքիս ծովը խորացավ,
Ցերեկ-ցերեկ, արև-արև
Հոգուս հովը զորացավ.
Մորս կտակն ալիք-ալիք
Սրտիս ավանդ պահեցի,
Երկրե երկին, երկնե երկիր
Ազատ-ազատ սահեցի:
Օրիկ-օրիկ՝
Գարուն նորիկ:

Կոմիտասի տաղերը հոգու զգացումի անկեղծ բխումներ են: Երբեմն մի քանի տողով տալիս է իր զգացումի ու ներշնչումի տարերքը: Նրա տաղե-

րում լսելի են Գողթան երգերի, աշուղական նվագարանների, անտունիների, կրոնաշունչ տաղերի ու մեղեդիների անարատ մտածողությունը: Նրա բանաստեղծությունները վկայում են հանճարեղ երգահանի հետաքրքրությունների բազմազանությունը, մտքի բարձր թռիչքը, գրական ու լեզվական նրբագույն ճաշակը: Նրա պոեզիայի բյուրեղյա ոճը, խոսքերի մշակվածությունը, մտքի և հույզերի խորությունը հաստատում են Կոմիտասի գրական մտածողության դասականությունը:

Դեռ ի՞նչ սքանչելիքներ կերկներ նա իր կյանքի ետեղեռնյան շրջանում: Մինչդեռ նրան բաժին ընկավ ամենածանր ճակատագիրը, մթազնեց նրա լուսեղեն ուղեղը: Այնուամենայնիվ, Կոմիտասի չափածո տողերը նրա ողբերգական ամենախոսուն էջերն են: Նրա պոեզիան ունի նարեկյան և դուրյանական երանգներ:



Վահրամ Փափազյանը՝
Քեռիի թիկնապահ (1915-16 թթ.)

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

- Պնդիր գոտիդ, մեր լեռնաշխարհի հայ ժողովուրդ, որ շնորհիվ քո բնածին քաջության, աննկուն առնականության, դարեր ամբողջ բաղեղի նման անքակտելի կապվել ես մեր սեպագագաթ ժայռերին ու անխախտ պահել գոյությանդ անհաշվելի սկզբներից մարդու բնավորության հավիտենական զարդ ու նրա մարդկայնության երաշխիք այն մի քանի հիմնական գծերը, որով եղել ես, կաս և լինելու ես միշտ մեր բազմահալած ցեղի անխորտակելի կորիզը, որ բազում անհազ թշնամի կզակների ատամներն է ջարդել և չի կոտրվել, և հիշիր ու սիրիր ժամանակների մեղքով քեզանից հեռու քշված քո մասնիկներին: Կարողացիր հավաքել նրանց, եթե ոչ այլ բանի, գոնե ապացուցելու համար հաշս օտարած քո հավիտենապես բազմանալու, հետևաբար և հավիտենապես ապրելու քչերին տրված հատկությունը*:

ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶՅԱՆ

* «Անահիտ», էջ 82:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Амурханян М. Д.*, Русская художественная литература и геноцид армян, Е., 1990.
- Ալաջաջյան Սյր.* Եղեգները շխոնարհվեցին, գիրք Ա, Բ, Եր., 1966-67:
- Ահարոնյան Ա.* Ազատության ճանապարհին, Եր., 1996:
- Գալշոյան Մ.*, Մարութա սարի ամպերը, Եր., 1981:
- Դաշրենց Խ.*, Խողեղան, Եր., 1960:
- Դաշրենց Խ.*, Ռանչպարների կանչը, Եր., 1984:
- Դավթյան Վ.*, Ռեքվիեմ, Երկերի ժողովածու, հ. 2, Եր., 1985:
- Չոհրապ Գ.*, Գրականության մասին, Եր., 1973:
- Չոհրապ Գ.*, Նովելներ, Եր., 1982:
- Թամրազյան Հ.*, Սիամանթո, Եր., 2003:
- Թումանյան Հովհ.*, Երկերի ժողովածու, հ. 3, Եր., 1969:
- Իսահակյան Ավ.*, Երկերի ժողովածու, հ. 2, Եր., 1974:
- Իսահակյան Ավ.*, Ընտրանի քնարերգություն, Եր., 2001:
- Կապուրիկյան Ս.*, Երկեր երեք հատորով, հ. 1, Եր., 1984:
- Կիրակոսյան Ջ.*, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Եր., 1967:
- Հայերի ցեղասպանությունը, Եր., 1988:
- Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Եր., 1988:
- Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ), Եր., 1991:
- Հյուսյան Մ.*, Գրիգոր Չոհրապ, Եր., 1957:
- Ղազարյան Հ.*, Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, Եր., 2001:
- Մահարի Գ.*, Այրվող այգեստաններ, Եր., 1966:

- Շիրազ Հովհ.*, Հայոց դանթեականը, Եր., 1991:
- Չարենց Ե.*, Երկերի ժողովածու չորս հատորով, Եր., 1986:
- Սարյան Գ.*, Ընտիր երկեր, Եր., 1974:
- Սահյան Հ.*, Բանաստեղծություններ, Եր., 1969:
- Սերինե Ի*՛՛մ երկրային ուղին, Եր., 1983:
- Միամանթո*, Ընտիր երկեր, Եր., 1957:
- Սևակ Պ.*, Անլուելի գանգակատուն, Եր., 1959:
- Սևակ Պ.*, Եղիցի լույս, Եր., 1969:
- Սևակ Ռ.*, Հայ դասականներ, Երկեր, Եր., 1981:
- Վարուժան Դ.*, Երկերի լիակատար ժողովածու երեք հատորով, Եր., 1986:
- Վերնոյ Անրի*, Մայրիկ, Եր., 1989:
- Տերյան Վ.*, Երկերի ժողովածու, հ. 1-4, Եր., 1972-1979:
- Փափազյան Վ.*, Հետադարձ հայացք, գիրք Ա, Եր., 1956:
- Զոչար Հ.*, Երկեր, Եր., 1980:

ՈՌԲԵՐՏ ԳՈՒՐԳԵՆԻ ԴԱՎԹՅԱՆ
ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

РОБЕРТ ГУРГЕНОВИЧ ДАВТЯН
ГЕНОЦИД АРМЯН
В АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ

ROBERT G. DAVTYAN
THE ARMENIAN GREAT GENOCIDE
IN THE ARMENIAN LITERATURE

Հրատ. խմբագիր՝ ԴԱՆԻԵԼՅԱՆ Գ. Վ.
Տեխ. խմբագիր՝ ՍԱՐԳՍՅԱՆ Մ. Պ.
Համակարգչ. էջադրում՝ ՄԱՆՈՒՍԱԶՅԱՆ Ս. Է.

Պատվեր՝ 75: Տպաքանակ՝ 1000:

«ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ» տպագրատուն,
Երևան, Մելիք - Ադամյան փ. 1
Հեռախոս՝ 52-78-63, 52-13-95, ֆաքս՝ 54-30-24

Дом печати "ВОСКАН ЕРЕВАНЦИ"
г. Ереван, ул. Мелик-Адамяна, 1
Тел.: (374 1) 52-78-63, 52-13-95, факс: (374 1) 54-30-24

"VOSKAN YEREVANTSI" Printing House
1, Melik-Adamyana str., 375010, Armenia
Tel.: (374 1) 52-78-63, 52-13-95, fax: (374 1) 54-30-24



Հայոց արցունքաչ «Կռունկի՛» տեղակ,
Սարե-սար փռված սև-սուգի՛ տեղակ՝
Հախո՛ւռն, կենսահո՛րդ, սիրտը թու՛նդ հանող,
Հանձարիդ լույսը աշխարհի՛ն տանող
Քո սեգ Սարյանով,
Խաչատրյանով, -
Դու պիտի ապրես այսպե՛ս, սրանո՛վ:

Սիլվա Կապուտիկյան